


ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Հայաստանի նվիրատվական արձանագրությունները IX-XIV դդ.









ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի նվիրատվական  
արձանագրությունները  
(9-14-րդ դարեր)



ԵՐԵՎԱՆ - 2007

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի և ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետի  
Գիտական խորհուրդների որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյան

### Սարգսյան Լևոն Ազատի

Ս 259 Հայաստանի նվիրատվական արձանագրությունները  
(9-14-րդ դդ.). - Եր.: Էդիթ Պրինտ, 2007, - 140 էջ:

*Մարենագրական և վիմագրական սկզբնաղբյուրների լայն հեռքի վրա, բազմաթիվ փաստերի վկայակոչմամբ, առաջին անգամ քննարկվում և դաստիարակվում են նվիրատվության եղանակներն ու ձևերը, նպատակները, անշարժ և շարժական կայքերի ու գույքերի՝ գյուղերի, ագարակների, ջրաղացների, ձիոհանք-սրանոցների, անասունների, բնակելի տների, աշխատանքային գործիքների, ջրաբարձների, կուղպակ-խանութների, հյուրանոցների և հյուրարների, այգիների և արտադրարարների, հնձանների, գրքերի ու արքայական մասունքների նվիրատվության, ապահովության և այլ հիմնահարցերը: Հավելվածում տրված են նվիրատվական արձանագրությունների ընդհանուր էջեր:*

*Նախատեսված է միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերով զբաղվող մասնագետների, եկեղեցու և իրավունքի պատմաբանների, ինչպես նաև ընթերցող հասարակության համար:*

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-61-98-0

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                |   |
|----------------|---|
| ԱՌԱՋԱԲԱՆ ..... | 5 |
|----------------|---|

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

|                                                                              |    |
|------------------------------------------------------------------------------|----|
| ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ՀՈԳՎԱԾՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ<br>ԵՎ ԳԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ ..... | 22 |
|------------------------------------------------------------------------------|----|

|                                |    |
|--------------------------------|----|
| Ա. Նվիրատվական հոլվածներ ..... | 22 |
|--------------------------------|----|

|                                               |    |
|-----------------------------------------------|----|
| Բ. Նվիրատվական կալվածագրերի ձևակերպումը ..... | 27 |
|-----------------------------------------------|----|

|                                                     |    |
|-----------------------------------------------------|----|
| Գ. Հարկապահանջությունը և ապահարկության խնդիրը ..... | 37 |
|-----------------------------------------------------|----|

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

|                                                                |    |
|----------------------------------------------------------------|----|
| ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԵՐԻ<br>ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... | 40 |
|----------------------------------------------------------------|----|

|                                         |    |
|-----------------------------------------|----|
| Ա. Տիգրան Հոնենցի նվիրատվությունը ..... | 41 |
|-----------------------------------------|----|

|                                               |    |
|-----------------------------------------------|----|
| Բ. Գյուղերի և ագալակների նվիրատվություն ..... | 44 |
|-----------------------------------------------|----|

|                                    |    |
|------------------------------------|----|
| Գ. Ջրաղացների նվիրատվություն ..... | 47 |
|------------------------------------|----|

|                                                                            |    |
|----------------------------------------------------------------------------|----|
| Դ. Սպարապետ Շապուհ Բագրատունու 903 թ.<br>Վանեվանյան արձանագրությունը ..... | 49 |
|----------------------------------------------------------------------------|----|

|                                                               |    |
|---------------------------------------------------------------|----|
| Ե. Խոշոր և մանր եղջերավոր անասունների<br>նվիրատվություն ..... | 62 |
|---------------------------------------------------------------|----|

|                                            |    |
|--------------------------------------------|----|
| Զ. Չիթհանք-սրանոցների նվիրատվություն ..... | 62 |
|--------------------------------------------|----|

|                                       |    |
|---------------------------------------|----|
| Է. Բնակելի տների նվիրատվություն ..... | 64 |
|---------------------------------------|----|

|                                                 |    |
|-------------------------------------------------|----|
| Ը. Աշխատանքային գործիքների նվիրատվություն ..... | 65 |
|-------------------------------------------------|----|

|                                                                     |    |
|---------------------------------------------------------------------|----|
| Թ. Ջրատարների նվիրատվության հիշատակությունները<br>վիմագրերում ..... | 66 |
|---------------------------------------------------------------------|----|

|                                           |    |
|-------------------------------------------|----|
| Ժ. Կուղյակ-կրպակների նվիրատվություն ..... | 70 |
|-------------------------------------------|----|

|                                                |    |
|------------------------------------------------|----|
| ԺԱ. Հյուրանոց-հյուրատների նվիրատվություն ..... | 71 |
|------------------------------------------------|----|

|                                            |    |
|--------------------------------------------|----|
| ԺԲ. Այգիների և արտերի նվիրատվություն ..... | 74 |
|--------------------------------------------|----|

|                                    |    |
|------------------------------------|----|
| ԺԳ. Հնձանների նվիրատվություն ..... | 79 |
|------------------------------------|----|

ԺԴ. Գրքերի և եկեղեցական մասունքների

նվիրատվություն ..... 79

ԺԵ. Ոգելից խմիչքների նվիրատվություն ..... 81

ԺԶ. Այլ նվիրատվություններ (Վախմ)..... 82

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

**ԴՐԱՍԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ**

**ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԸ**

(Ըստ վիմական արձանագրությունների տվյալների)..... 84

Եզրակացություններ..... 93

Օգտագործված սկզբնաղբյուրների և

ուսումնասիրությունների ցանկ..... 98

ա. Սկզբնաղբյուրներ..... 98

բ. Ուսումնասիրություններ..... 100

## **ՀԱՎԵԼՎԱԾ.**

Նվիրատվական արձանագրությունների ընտիր էջեր ..... 105

Անձնանուններ..... 131

Տեղանուններ ..... 136

## ԱՌԱՋԱԲԱՆ

Դեռևս նախաքրիստոնեական շրջանում հեթանոս արքաները մեհյաններին ու բազիլիկներին շնորհում էին բազմաթիվ անշարժ և շարժական գույք՝ գյուղեր, ագարակներ, անտառներ, արոտատեղիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ստրուկներ, թանկարժեք սպասք և այլն<sup>1</sup>։ Հնագույն նվիրատվական արձանագրություններից մեկում կարդում ենք.

«Հավասար չափով և այն գյուղերը, որոնք ես այս ոգիներին (իմա՝ հեթանոսական աստվածներին) եմ նվիրել, ոչ մեկին չի թույլատրվում յուրացնել, օտարել, փոխել կարգը կամ որևէ կերպ վնաս հասցնել այդ գյուղերին կամ (նրանց) եկամուտին<sup>2</sup>։ Ա. Փերիխանյանը նշում է, որ հեթանոսական շրջանում դեպքեր են եղել, երբ տաճարին նվիրաբերվել է տվյալ գյուղի միայն մեկ տարվա բերքը<sup>3</sup>։

Նույն երևույթը նկատելի է միջնադարյան Հայաստանի վիմագրերում, փոքր-ինչ այլ տարբերակմամբ։ Անիի արձանագրություններից մեկում ասվում է, որ նվիրաբերված կալվածը (հողակտորը) տրվում է եկեղեցուն «ի սկզբանե տարւոյն մինչև ցկատարումն տարւոյն»<sup>4</sup>։

Քրիստոնեական եկեղեցիները որդեգրեցին հեթանոսական մեհյանների և տաճարային միությունների պատրաստի փորձն ու եղանակները<sup>5</sup>։ Նրանք իրենց բաժինները ստացան՝ «խլված հեթանոս տաճարներից ու քուրմերից»<sup>6</sup>։

Հայ եկեղեցին աստիճանաբար սկսեց հարստանալ և մրցակցել

<sup>1</sup> Կ.Սելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 117, 119, 124։

<sup>2</sup> А. Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959, с. 117.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 151։

<sup>4</sup> Դիվանի հայ վիմագրության, պրակ 1, կազմեց Հ. Ա. Օրբելին, Երևան, 1966, էջ 58։ Այսուհետև՝ Դ., 1։

<sup>5</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում, Երևան, 1973, էջ 71։

<sup>6</sup> Ա. Հովհաննիսյան, Դիվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 276։ Այսուհետև՝ Դիվագներ, 1։

առավել հզոր ավատների հետ: Գրիգոր Լուսավորիչը, ապա նաև նրա ժառանգները, որոնք բազմեցին հայրապետական գահին, դարձան Արշակունյաց հարստության ամենաազդեցիկ դեմքերը: Նոր կրոնի և գաղափարախոսության ընդունմամբ ամբողջ Հայաստանի տարածքը պատվեց անապատականների, ճգնավորների և վանական միաբանությունների խիտ ցանցով: Հեթանոսական կրոնը բազմավորժ քրմապետների ու քուրմերի քարոզչական աշխատանքների շնորհիվ ժողովրդական լայն խավերում պահպանվելու էր դեռևս երկար ժամանակ, սակայն քրիստոնեական աշխարհայացքը պետական իշխանության հովանավորությամբ՝ երբեմն բռնի ուժով արմատավորվում էր հոծ զանգվածների մեջ: Արշակ Բ թագավորի եղերական վախճանից հետո նրա օրինական ժառանգորդը՝ Պապը անհաջող փորձ կատարեց զսպելու բարձրաստիճան հոգևորականության նկրտումները զինվորական ծառայությունից խուսափելու և մեծ հարստություն կուտակելու նպատակով, սակայն արժանացավ եկեղեցու հայրերի նզովքին ու պարսավանքին: Բարենորոգումներ անցկացնելու ուղղությամբ Պապ թագավորի կատարած քայլերը դատապարտվեցին եկեղեցական դոգմաներով ղեկավարվող գրողների դասական աշխատություններում: Առաքելական եկեղեցու սրբագործված ինքնիշխանությունից հետ կանգնելու գործում աչքի ընկավ հատկապես Եզրի կաթողիկոսը, որը բյուզանդական Հերակլ կայսրից ի հատուցումն մեր կարծիքով՝ ոչ պատվաբեր արարքի իբրև պարզև ստացավ Կողբ գյուղաքաղաքի երրորդ մասն իր աղահանքերով հանդերձ<sup>7</sup>: Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ Եզրի կաթողիկոսը «ակն ուներ մարմնաւոր փառաց և ազահութեան»<sup>8</sup>: Նման գործելակերպի համար Եզրին պետք է որ

<sup>7</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար բարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 80-81, այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի, հմմտ. Հ. Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 95: Այսուհետև՝ Զննական տեսություն:

<sup>8</sup> Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մ., 1861, էջ 85: Այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան:

դատապարտեին մեր բոլոր եկեղեցական պատմիչները:

Հայոց եկեղեցին կրթամշակութային և տնտեսական առումներով զգալի վերելք ապրեց Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանում (885–1045): Վիմագրերի և մատենագրական սկզբնաղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ հայ հոգևորականությունը նյութական բարիքներ էր ստանում ամենատարբեր ոլորտներից տարբեր եղանակներով ու ձևերով: Աշոտ Ողորմած Բագրատունի թագավորը (953–977) դարձավ հայ եկեղեցու և նրա սպասավորների տնտեսական հզորացման մեծ հովանավորը: Նույն հովանավորչական վարվելակերպը նկատում ենք Վրաց արքաների մոտ: Առժամանակ մի կողմ դնելով հայ-վրացական դավանական խնդիրներն ու վեճերը՝ Կովկասի քրիստոնյա ժողովուրդները միասնաբար թոթափեցին օտարի լուծը և ձգտեցին շենացնել իրենց քայքայված երկրները:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Աշոտ Բագրատունին էր «այր երկիւղած աստուծոյ և բարեպաշտոն և զարդարիչ եկեղեցոյ... որ զարդարեաց զեկեղեցիս մեծաւ զարդոյք և պայծառութեամբ»<sup>9</sup>:

Վրաց Դավիթ Շինարար թագավորն անտարբեր էր հայոց և վրաց եկեղեցիների դավանական վեճերի նկատմամբ: Նա «...աջակցում էր ավերված հայ եկեղեցիների ու վանքերի վերաշինության և նվիրաբերություններ էր անում ի նպաստ այդ հիմնարկությունների»<sup>10</sup>:

Նկատի ունենալով Նեոի մոտալուտ գալուստը, նվիրատուներն ապավինում էին աստծո ողորմությանը, որը, Ա. Հովհաննիսյանի խոսքերով ասած, նրանց համար հանդիսանում էր իբրև «հուսակայան»<sup>11</sup>:

«Հայաստանի նվիրատվական արձանագրությունները 9-14-րդ դարերում» խորագիրը կրող աշխատությունն, իբրև

<sup>9</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 80: Այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի:

<sup>10</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 95:

<sup>11</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, I, էջ 278:

առանձին թեմա, շարադրվում է առաջին անգամ: Ըստ հարկի և անհրաժեշտության հանգամանորեն ուսումնասիրվել են մատենագրական սկզբնաղբյուրները, մեզ հայտնի բոլոր վիմական արձանագրությունները, որոնք այս ուսումնասիրության հիմնական փաստագրային ատաղծն են: «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հրատարակված ութ պրակներից ընտրվել են նվիրատվական բովանդակություն ունեցող բոլոր բնագրերը, որոշվել է անթվակիր արձանագրությունների փորագրության մոտավոր ժամանակը՝ հիմք ունենալով հայոց այբուբենի առանձին տառատեսակների՝ դարերի ընթացքում կրած հնագրական-պալեոգրաֆիկ առանձնահատկությունները և նրանցում հիշատակված պատմական դեմքերի ու իրադարձությունների մասին վկայությունները: Նման դեպքերում մեզ նեցուկ են եղել մատենագրական սկզբնաղբյուրները, իսկ որպես ուղենիշ՝ պատմահամեմատական մեթոդը: Զննարկվող ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության այն հատվածն է, երբ նախարարական հողատիրության քայքայումից հետո առաջ էին եկել նոր մոտեցումներ. վերականգնվում էր ժառանգական հողատիրությունը նոր հիմունքներով: Հողատիրության պայքարը պայքար էր իշխանության համար:

Թևավոր խոսք կա, որ երբեմն կրկնում են մեր պատմիչները. «Թրով առածն և ոսկով գնածն միապես հայրենիք են մարդոյ»<sup>12</sup>, այսինքն՝ զենքով նվաճված և փողով գնված տիրույթը, հողը հավասարապես ժառանգական սեփականություն են համարվում:

Հայերեն վիմական արձանագրությունները հարուստ նյութեր են պարունակում միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Ակադ. Հ. Մանանդյանը հայկական վիմագրերի կարևորության մասին գրում է. Հայաստանի «ներքին կյանքը լուսաբանելու համար առաջնակարգ աղբյուրներ կարող են համարվել վիմական արձանագրությունները... սակայն հայ պատմագիտության

<sup>12</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 296:

կարևորագույն այդ աղբյուրները, դժբախտաբար, դեռ մինչև այժմ բավարար չափով հավաքված, հրապարակված ու ուսումնասիրված չեն»<sup>13</sup>։ Հայկական վիճագրերում հիշատակված պատմական, իրավական և առևտրական գործարքների վկայությունները հաշվի առնելով՝ կարելի է որոշակի պատկերացում կազմել այս կամ այն ժամանակաշրջանին բնորոշ իրողությունների մասին։

2002 թ. հրատարակվեց միջնադարագետ, պատմաբան Գնել Գրիգորյանի «Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (9-14-րդ դարեր)»<sup>14</sup> մենագրությունը, որտեղ հանգամանորեն ներկայացված են Անի մայրաքաղաքի կրոնամշակութային օջախներին կատարված նվիրաբերությունները զարգացած ավատատիրության դարաշրջանում։ Գիրքն աչքի է ընկնում փաստագրական նյութերի առատությամբ և պատմաքննական վերլուծությամբ։ Հեղինակի կարծիքով՝ Անիի «կրոնական հաստատությունները կրոնականից գատորոշակի տնտեսական կարողությամբ օժտված ձեռնարկություններ էին»<sup>15</sup>։ Գնել Գրիգորյանն անդրադարձել է մի շարք բառ-եզրույթների (կուղպակ-կրպակ, բազզնոց, փողոցկտեր, խանապար և այլն) ստուգաբանական վերլուծությանը, ներկայացրել է Անիի առավել նշանավոր նվիրատուների ցուցակը։

Հայտնի է, որ արձանագրություններն իրենց բնույթով լինում են հիշատակագրային, շինարարական, նվիրատվական, իրավականոնական, կրոնաբարոյախոսական և խառն։<sup>16</sup> Հիշատակագրային արձանագրությունները հավաստի տեղեկություններ են հաղորդում հանգուցյալի, նրա հարազատների, հաճախ նաև տապանաքարը կամ խաչքարը կերտող վարպետի մասին։ Իրավականոնական արձանագրությունները ստույգ արտացոլում են աստվածաշնչային դրույթները կամ վանքին, եկեղեցիներին վիճակներ

<sup>13</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 81, տես նաև էջ 174, 176։

<sup>14</sup> Գնել Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (9-14-րդ դարեր), Էջմիածին, 2002։ Այսուհետև՝ Նվիրատվություններ։

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 6։

<sup>16</sup> Գրիգոր Գրիգորյան, Հայկական վիճագրություն, Երևան, 2000, էջ 67-82։

հատկացնելու մասին տեղեկությունները, որոնք հաճախ ուղեկցվում են կրոնաքարոյախոսական բանաձևերով՝ սրբերի, մարգարեների ու առաքյալների հիշատակությամբ:

Պատմագիտական առումով առավել մեծ արժեք ունեն շինարարական և նվիրատվական արձանագրությունները: Սակայն շինարարական ծավալուն վկայագրերից շատերը չեն պահպանվել, քանզի այդ բովանդակության արձանագրությունները հանդես են գալիս հիշատակագրային և նվիրատվական բնագրերի հետ համատեղ, որտեղ հիշատակվում են կառույցը (վանք, եկեղեցի, մատուռ, կամուրջ, ամրոց և այլն), պատվիրատուն, նրա հարազատները, շնորհված տիրույթները, սակավ դեպքերում՝ կառուցող վարպետը (վարդպետը), ապա թվարկվում են նվիրատվությունները և դրանց դիմաց ստացված պատարագները՝ կախված, թերևս, նվիրատվության չափից: Որպես կանոն՝ վերջում հետևում է անեծքի բանաձևը, թեև որոշ դեպքերում այն բացակայում է:

Ծավալուն, այսպես կոչված, խառը վիմագրերն ունեն և նվիրատվական, և շինարարական, և հիշատակագրային կամ այլ բնույթ, այսինքն՝ միևնույն բնագրում այս բոլորը նախորդում կամ հաջորդում են իրար՝ հանդես գալով միասնաբար, ուստի անհրաժեշտություն է զգացվել տարաբնույթ վիմագրերը զատել, առանձնացնել ըստ թեմատիկ առումների և հատկանիշների: Հատկապես դժվար ըմբռնելի կամ խառը բովանդակություն ունեցող վիմագրերում, ինչպես նշեցինք, առկա են և շինարարական, և նվիրատվական, և իրավականոնական հատվածներ:

Առանձին արժեք ունեն վանքերի գգրոցներում պահպանված, այսպես կոչված՝ «Քոթուկները», որոնք հավաստի տեղեկություններ են ամփոփում տվյալ վանական միաբանության անդամների առտնին գործունեության, ինչպես նաև տնտեսակալվածային ոլորտների մասին:

Իրողություն է, որ դարերի ընթացքում բազմաթիվ վիմագրեր եղծվել են, քայքայվել և իսպառ ոչնչացել կամ ոչնչացվել երբեմն նաև չարամիտ մարդկանց ձեռքով: Նման դեպքերում պահպանված

տառերի հետքերի հիման վրա, անշուշտ, մեծ ջանքերով, հնարավոր է վերականգնել բնագիրը կամ առանձին բառ-եզրույթներ: Այս առումով՝ ուշագրավ վկայություն ունի 13-րդ դարի խոշոր պատմիչ, վիճագրագետ Ստեփանոս Օրբելյանը: Խոսելով հանրահայտ Մաքենոցաց վանքի կալվածային բովանդակություն ունեցող ծավալուն վիճագրերից մեկի մասին, նա խոստովանում է. «...Վասն հնութեանն եւ խախտելոյ քարանցն ոչ կարացաք զբովանդակն իմանալ, այլ բազում բանք եւ տուրք իշխանացն պակասին, զայս փոքր ի շատե եղաք, զի մի բնաւին ջնջեալ կորիցէ յիշատակ նոցա»<sup>17</sup>:

\* \* \*

Կարծիք կա, ըստ որի՝ նաև օտար տիրապետության շրջանում հայ եկեղեցին շարունակել է օգտվել իրեն շնորհված ապահարկության իմունիտետից: Միջնադարագետներից ոմանք կարծում են, որ քննարկվող ժամանակահատվածում «Եկեղեցականների համար նպաստավոր քաղաքականություն էին վարում Ելտկուզ աթաբեկն ու Շահի Արմենները»<sup>18</sup>: Այս դրույթը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ, քանզի հայ եկեղեցու մեծ հովանավոր Մենեքերիմ Սյունյաց թագավորին (1072-1094) նենգորեն սպանեց հենց նույն Ելտկուզ աթաբեկը՝ խաղաղ բանակցությունների ժամանակ՝ Գրիգոր Ապիրատյան իշխանի աչքի առաջ:

Վիճական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան «անօրեն խորեզմացիների»<sup>19</sup> մասին: «յաղախնայծին որդիքն Հաքարու», այսինքն՝ սելջուկ-թուրքերը<sup>20</sup>, զբաղված էին ավարառությամբ և ավերով: Ծանր էր նաև թաթարաց կամ «նետողաց

<sup>17</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 132:

<sup>18</sup> Հ. Մանանդյան, Զմեռական տեսություն, էջ 150-151, հմմտ. Դ., 1, էջ 62:

<sup>19</sup> Կարապետ Կոստանեան, Վիճական տարեգիր: Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, ՍՊԲ, 1913, էջ 77: Այսուհետ՝ Վ. տ.:

<sup>20</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 169:

ազգի» իշխանության «դառն ժամանակ»<sup>21</sup>, երբ ներխուժող ամբոխը զավթում էր ամեն ինչ, նույնիսկ վանական-եկեղեցական շենքերը՝ հետագայում նախկին օրինական տերերին վերավաճառելու նպատակով: Բարսեղ եպիսկոպոսը Լմբատավանքի 1191 թ. արձանագրության մեջ նշում է՝ «զնեցի զվանքս յանաւրիւնաց»<sup>22</sup>: Կարծում ենք, այս խոստում փաստը պատասխան է տալիս այն մասնագետներին, որոնց կարծիքով օտար իշխանավորները բարյացակամ էին նվաճված ժողովուրդների կրոնական զգացմունքների և հոգևոր հաստատությունների նկատմամբ:

Անցյալի իրողությունները պետք է քննել միայն պատմական տեսանկյունից: Օտար իշխանությունները քաջ գիտակցում էին, որ, ակամա ամրացնելով եկեղեցու դիրքն ու հեղինակությունը, դրանով իսկ թուլացնում էին Հայաստանի ռազմունակ և պահապան աշխարհիկ ավատների զորական ուժն ու նրանց հեղինակությունը: Մենք ունենք բազմաթիվ վկայություններ այն մասին, որ անձեռնմխելիության կարգավիճակ ունեցող հիերոկրատիան շատ ավելի հաճախ է ենթարկվել հալածանքների ու կողոպուտի, քան երկրի մնացած տերերը: Այդ ամենի վկայությունը թեկուզև վերջին օրինակն էր՝ բերված վիմական արձանագրություններից: Երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր վիճակը պետք է բացատրել միջնադարյան Հայաստանի մասնատվածությամբ, երկրի բարձրագույն իշխանությունների անհետատես դիվանագիտությամբ, քաղաքական կուրությամբ և ներավատական գզվտոցներով, որոնք ի վերջո պատճառ դարձան երբեմնի ծաղկող հզոր Հայաստան աշխարհի կործանման: Որքան դիպուկ է արտահայտվել իր «Քարոզգրքում» Տաթևի համալսարանի մեծանուն ուսուցչապետ Գրիգոր Տաթևացին. «Եւ մերս առաջնորդք և իշխանք, հոգևոր կամ մարմնաւոր, որք ինքնիշխանութ(եամ)ք կատարեն զգործխն առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալ է իշխանութիւն և աւերեալ երկիրն,

<sup>21</sup> Վ. տ., էջ 88:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 37:

և տարագրեալ են ժողովուրդը մեր ի վերջոյն երկրի և ցրուեալ յամ(ենայն)ագգս»<sup>23</sup>: Ահա սա է Հայաստանի պետական իշխանութեան կորստի հիմնական պատճառներից ամենահիմնականը: Հանճարեղ ուսուցչապետի զգաստացնող այս դրույթը արդիական հնչողություն ունի նաև այսօր: Մինչև Գրիգոր Տաթևացին համարյա նույն միտքն է արտահայտել Հովհաննես Դրասխանակերտցին, որը երկրի կործանումը պայմանավորում էր իշխող դասի անմիաբանութեամբ, ի հետևանս որի «դղրդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս ի մերոց աստի»<sup>24</sup>: Ապա պատմիչը շարունակում է. «...վասն այսորիկ թշնամիք Տեառն ստեցին մեզ և յանտառաբոյն խոզից և յանցատրաց ճանապարհի կոխեցաք իբրև զկաւ գռեհաց»<sup>25</sup>: Օտար իշխողները քննարկվող ժամանակաշրջանում փորձել են կաշառել հայոց երկրի առաջնորդներին ժողովրդական ցասումը կանգնեցնելու և նրա զայրույթն իջեցնելու նպատակով: Հովհաննես Դրասխանակերտցին նշում է, որ Յուսուֆ ոստիկանն իրեն նվեր էր բերել «...ջորի պաճուճաբար ոսկեզօծ զարդուր»<sup>26</sup>:

Նվիրատվական արձանագրությունները ցույց են տալիս, որ այս անցողիկ աշխարհում մարդիկ ձգտում են լուրջ մտածել իրենց և մերձավորների հոգու փրկության մասին, մանավանդ որ մշտապես սարսափած են եղել Նեոի ուրվականով և Զրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ տեղի ունենալիք ահեղ դատաստանով: Եկեղեցու հայրերը, հմտորեն օգտագործելով մարդու զգայական աշխարհը, ապագայի նկատմամբ նրա ունեցած սարսափը, ներագրում էին հավատացյալի բարոյահոգեբանական կերտվածքի վրա՝ առաջ քաշելով հոգու փրկության գաղափարը՝ նրանից ակնկալելով նյութական որոշակի փոխհատուցում: Առատ ու շռայլ նվիրատվությունները մշտապես պայմանավորված են եղել երկրի քաղաքական կյանքի կայունութեամբ: Հայաստանը զարգացման

<sup>23</sup> Գրիգոր Տաթևացի, Բարոզգիրք, Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 424:

<sup>24</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 290:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 360:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 200:

ուղիով է ընթացել բոլոր այն ժամանակներում, երբ երկրի տերերը եղել են միաբան և միասնական, համախմբված գերագույն առաջնորդի շուրջ:

Ըստ մի հին վավերագրի, որ իր աշխատության մեջ օգտագործել է Ջաքարիա Սարկավագը, նշված է. «Ամենայն ոք ցանկայր տալ զինչս և ստացուածս և արարքս, ոմանք այգի, ոմանք արարք, և ոմանք գիւղ, ոմանք անասուն, և ոմանք դրամս, ոմանք զինքեանս, և այլք զորդիս, ոմանք անօթս եկեղեցւոյ և այլք զինչս մարմնատուրս»<sup>27</sup>: Նույն նվիրատվությունների շարանը տեսնում ենք մահմեդական երկրների հոգևոր հաստատություններում<sup>28</sup>:

Այս կապակցությամբ հետաքրքիր դիտողություն ունի ակադ. Ա. Հովհաննիսյանը. «...ջերմեռանդ նվիրատվությունները,- գրում է նա,- միջոց էին տալիս նվիրատուներին տուրքերից ազատ վանքերի ու եկեղեցիների հովանու տակ ապահովել իրենց անձի ու գույքի անձեռնմխելիությունը, ինչպես ֆեոդալների կամայականություններից, նույնպես նաև պետական տուրքերից»<sup>29</sup>: Բնական է, որ կրոնամշակութային կենտրոններն ու նրանց առաջնորդները պետք է հարստանային բազմաքանակ շարժական և անշարժ գույքով, ձեռք բերելին ընդարձակ կալվածքներ և հասութաբեր հաստատություններ՝ օգտակար պարագաներով հանդերձ:

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Աշոտ Առաջին արքան... մինչև անկողին ընկնելը... շատ ոսկու և արծաթի գանձեր էր բաշխում աղքատներին ու տնանկներին: Նա իր մոտ է հրավիրում Գեորգ Բ Գառնեցի կաթողիկոսին (877-898) և շնորհում է «զերամակս ձիոց և զդասակս անդէոց և զհօտս ոչխարաց անեննին բնաւին բաշխել յեկեղեցիս ուղղափառաց ի նուիրումն պատարագին սրբութեան»<sup>30</sup>:

Արդյոք դա ինքնանպատակ էր: Վանականներն ի՞նչ էին անելու այդ կարողությունը, որ երբեմն նույնիսկ աշխարհիկ ավատների

<sup>27</sup> Ջաքարիա Սարկավագ, Պատմագրություն, 3, Վաղարշապատ, 1870, էջ 15:

<sup>28</sup> Рашид ад-Дин, Сборник летописей, 3, М.-Л., 1946, с. 258.

<sup>29</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, 1, էջ 313:

<sup>30</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 144-145:

նախանձն էր շարժում: Մենք հաճախ մոռանում ենք, որ միջնադարի բոլոր բարեգործական հաստատությունների (հիվանդանոցներ, գողետներ, ուրկանոցներ, անկեղանոցներ, դպրոցներ և այլն) խնամքն ու պահպանությունը վերապահված էր հոգևոր դասին, որին և վստահված էր նաև դատ ու դատաստանի, այսինքն՝ դատավարության ինստիտուտը: Հիշենք հանրահռչակ Գլաձորի համալսարանը, որին մեծապես նպաստավորում էր Սյունյաց հոգևոր թեմի առաջնորդ արանը: Միանգամայն իրավացի է Լ. Խաչերյանը, երբ այս առթիվ գրում էր. «Գլաձորի համալսարանի նյութական ապահովվածության մշտահոս մի աղբյուրը հանդիսացել է Սյունյաց եպիսկոպոսական աթոռը, որի եկամտաբեր կալվածներն իրենց «երկոտասան թեմերով» ապահովում էին ուսուցիչներին և սաներին»<sup>31</sup>:

Խոսելով եկեղեցու և վանքերի սպասավորների մասին՝ Ա. Հովհաննիսյանը կարծում է, թե նրանք՝ այդ «հոգեորս» վանականները ծառայում են «ոչ միայն աստծուն, այլև մամոնային»<sup>32</sup>, իսկ Ստեփանոս Օրբելյանին հենց այնպես կպցնում է «գերընչեղ ֆեոդալի» պիտակ<sup>33</sup>: Չմոռանանք հիշել, որ Ստեփանոս մետրոպոլիտը՝ Սյունյաց թեմի առաջնորդը, մեծահարուստ իշխանական ընտանիքի հարազատ զավակն էր և կուսակրոն վանական, որն իր ողջ հարստությունը, սեփական գյուղերն ու ագարակները, այգիները, տասանորդ հարկից առաջացած եկամուտները տրամադրում էր իր ղեկավարած հոգևոր թեմի վանական կառույցներին, ուսումնական հաստատություններին, Հայաստանի ավերված նահանգներից ու գավառներից բռնագաղթված մտավոր այրերին, Գլաձորի համալսարանի ուսուցչապետներին ու սաներին, որոնցից մեկն էլ ինքն էր...

Ա. Հովհաննիսյանի որակումները հիշեցնում են հայր Միքայել Չամչյանի բնութագրումները: Նա Ստեփանոս Օրբելյանին համա-

<sup>31</sup> Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1973, էջ 82:

<sup>32</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, 1, էջ 313

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 315:

րում է «ինքնահաճ», «մեծամիտ», «կոչ է զինքն մետրոպոլիտ պրոտոֆրոնդէս», «պղտոր է զմիտս բազմաց...», «զի ճարպիկ ոմն էր և ճարտար ի խօսս»: Գրիգոր Անավարզեցուն 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի և Արևելյան Հայաստանի մյուս առաջնորդների հղած մերժողական նամակը Մ. Չամչյանը համարում է «աղճատանք ստալոյ բանից և սնոտի զրոյցք տգիտական ճառից»<sup>34</sup>: Չավազանց խիստ է ասված հայրենասեր հոգևորականի հասցեին՝ միայն նրա համար, որ Սյունյաց պատմիչը Մայր Հայաստանի հոգևոր և աշխարհիկ իշխանների հետ միասին դեմ է եղել ճանաչելու Հռոմի պապի գերիշխանությունը:

Դարձյալ վերադառնանք Ա. Հովհաննիսյանի մյուս դրույթներին: Մենք միանգամայն համաձայն ենք, որ «Հարստացած եկեղեցին ձեռք էր բերում քաղաքական կշիռ», սակայն թեական է այն վարկածը, ըստ որի «10-րդ դարի սկզբներին ոտքի ելած գյուղերի ապստամբների ուրվականները հանգիստ չէին տալիս 13-րդ դարի վերջերին Տաթևի և Նորավանքի կալվածագրերը պարունակող գրոցին բազմած մեծատոհմիկ մետրոպոլիտին...»<sup>35</sup> (իմա՝ Ստեփանոս Օրբելյանին): Թերի արժեքավորում կա մեծ պատմիչի նաև գրական ժառանգության վերաբերյալ. «Օրբելյանի գրական ժառանգությունը,- գրում է Ա. Հովհաննիսյանը,- ազդանշում է քաղաքական մտքի այն անկումը, որ ծայր էր առնում Ֆեոդալական Հայաստանում և Անդրկովկասում մոնղոլական կրունկի տակ» և կամ՝ «Տաթևի ու Նորավանքի կալվածագրերի համար նա (իմա՝ Ստեփանոս Օրբելյանը) պատրաստ էր չոքել «սկյութական չորքոտանու» առաջ»<sup>36</sup>: Իսկ ու՞ր մնացին Ստեփանոս Օրբելյանի հայրենասիրությամբ ներծծված աշխատանքների բնութագրումները, նրա ողբը Հայաստանում պետական իշխանությունը վերականգնելու, հայրապետական աթոռը

<sup>34</sup> Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 284, տե՛ս նաև Գրիգոր Գրիգորյան, Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը (9-14-րդ դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1999, թիվ 2-3, էջ 166-167:

<sup>35</sup> Ա. Հովհաննիսյան, Դավազներ, 1, էջ 322:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 323:

մայր հայրենիքում վերահաստատելու և հզորանալու մասին: Չէ՞ որ դրանք գրվել են հենց «մոնղոլական կրունկի տակ» եղած տարիներին Բայց, այնուամենայնիվ, Ա. Հովհաննիսյանը չէր կարող անտեսել Սյունյաց պատմիչի դերը գոնե դպրության բնագավառում, հավելելով. «Ստեփանոս Օրբելյանի շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին Տաթևի դպրոցի հետագա բեղմնավոր գործունեության համար, որի նշանակությունը դուրս էր գալու Սյունյաց գավառի (իմա՝ նահանգի - Լ. Ս.) նեղ սահմաններից»<sup>37</sup>:

Վիճական արձանագրությունները նույն արժեքն ունեն, ինչ մատենագրական սկզբնաղբյուրները: Տարբերությունն այն է, որ վերջիններս մատենագրվել են մագաղաթի կամ թղթի վրա, իսկ քարակերտ մատենագրությունը՝ ժայռերի ու արհեստականորեն հարթեցված ժայռաբեկորների: Թերևս այդ է պատճառը, որ ֆրանսիացի ականավոր հայագետ Սեն-Մարտենը, խոսելով Հայաստանի մասին, նշում է, թե «նրանց (իմա՝ հայերի) պատմությունը իրենց լեռների վրա փորագրված արձանագրություն է»: Ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է գեղեցիկ մի ավանդազրույց այն մասին, թե ինչպես Հռիփսիմե արքայադուստրը, վախճանվելուց առաջ թախանձում է հորը իր մասին հիշատակագրություն փորագրել տալ քարի վրա, «քանզի թողթքն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինջ մնասցէ յաւիտեան»<sup>38</sup>:

Հայկական նվիրատվական արձանագրությունների բացառիկ արժեքավոր նմուշներ պահպանվել են Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» դարակազմիկ աշխատության էջերում: Այդ արձանագրություններից շատերն այսօր չկան կամ եղծվել ու անհետացել են, իսկ մի զգալի մասն էլ, ինչպես նշեցինք, ոչնչացրել են չարամիտ մարդիկ, հետևաբար միակ սկզբնաղբյուրը Ստեփանոս Օրբելյանի հիշյալ երկն է:

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> Մ. Սմբատյանց, Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ, Տիֆլիս, 1904, էջ 424:



Ստեփանոս Օրբելյանից դարեր առաջ նվիրատվություններին անդրադարձել է մեկ այլ պատմագիր՝ Մովսես Կաղանկատվացին, որը եռանդուն կերպով պաշտպանում էր եկեղեցու և հոգևորականության իրավունքներն ու շահերը: Նրա կարծիքով՝ «Ոչ ոք իրավունք չունի աստծու եկեղեցին հանձնել անարժան մարդկանց ու զինվորներին կամ ծախել իբրև ունեցվածք կամ տալ իշխաններին ու նրանց դայակներին իբրև նվեր: Նույնպես և քահանաները իրավունք չունեն եկեղեցու հասույթը կամ հացը տալու անարժան մարդկանց... զինվորներն ու աշխարհականները եկեղեցու վրա իշխանություն չունենան և բռնի կերպով չվերցնեն եկեղեցուն տրվող նվերից...»<sup>39</sup>:

Վաչագան թագավորի նախագահությամբ տեղի ունեցած Աղվենի ժողովը հստակ սահմանում է, թե ինչ գույք է նվիրաբերվելու հոգևոր օջախներին: Աշխարհիկ իշխաններն ու հոգևոր հայրերը որոշում են ընդունում նախկին տերերին վերադարձնել բոլոր բռնազավթած կալվածքները «իւր ժողովրդովն, իւր կալերովն, զոր առաջ շորթել էին»: Նշանակում է՝ նվիրաբերված կամ վերադարձված գյուղերի և ագարակների բնակիչները շարունակելու էին աշխատել հին տերերին փոխարինած նոր տերերի համար՝ վերջիններիս վճարելով նախկինում տրված հարկերն ու տուրքերը:

Վիմագրերում վկայություններ կան շինականների նվիրատվությունների մասին<sup>40</sup>: Նրանցից մեկում կարդում ենք. «...Կրկին Աշնակ գնեցի...գՎերի էգին իւր ընծանովն, :Բ: (2) շինական՝ գՄեհեւան ու գԽաչատուր՝ Դոլուսին փեսայն իւրենց հողով ու ջրովն ի Տիգնիս զջաղացն իմ խոտահարն, :Գ: (100) բարդ խոտի տեղ, որ վանքս ընծէ»<sup>41</sup>: Կարծում ենք՝ վիմագրում հիշատակված անձինք իրենց կարգավիճակով եղել են ազատ գյուղացիներ, որոնք ունեցել

<sup>39</sup> Աղվանից Սիմեոն կաթողիկոսի կանոնները: Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 240-241:

<sup>40</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ 3, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1967, էջ 51 (այսուհետև՝ Դ, 3), Դիվան հայ վիմագրության, պրակ 5, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1982, էջ 201 (այսուհետև՝ Դ, 5), Վ. տ., էջ 117:

<sup>41</sup> Վ. տ., էջ 104:

են իրենց սեփական հողն ու ջուրը («իրենց հողով ու ջրով»), ուստի, նվիրաբերված այդ գյուղացիները դասական ըմբռնմամբ չեն եղել ճորտեր: Նշանավոր իշխան Վեստ Սարգիս Սյունեցին արձանագրություններից մեկում անվանվել է «սիրելի (իմա՝ սիրելի) ճորտ Սարգիս»<sup>42</sup>: Այս հարցերին թուցիկ ակնարկներով կամ հպանցիկ անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ՝ Մ. Չամչյանցը<sup>43</sup>, Ղ. Ալիշանը<sup>44</sup>, Հ. Մանանդյանը<sup>45</sup>, Ա. Հովհաննիսյանը<sup>46</sup>, Ս. Պողոսյանը<sup>47</sup>, Բ. Առաքելյանը<sup>48</sup>, Ս. Հակոբյանը<sup>49</sup>, Լ. Բաբայանը<sup>50</sup> և ուրիշներ:

Օտարազգի հեղինակներից գյուղացիության կարգավիճակի առանձին հարցերով զբաղվել են Վ. Բարտոլդը, Ա. Յակուբովսկին, Բ. Գաֆուրովը, Ի. Պետրուշևսկին և այլ գիտնականներ:

Վ. Բարտոլդը թեական է համարում ճորտատիրության առկայությունը իսլամադավան երկրներում: Նրա կարծիքով՝ «մահմեդական աշխարհում չկա ճորտական իրավունք»<sup>51</sup>: Ընդհակառակն՝ Ա. Յակուբովսկին չի վարանում ենթադրել, որ գյուղացին եղել է «ճորտական կացության մեջ»<sup>52</sup>: Բ. Գաֆուրովը կարծում է, որ

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>43</sup> Մ. Չամչյանց, Պատմություն Հայոց, հ. 1-3, Վենետիկ, 1784-1786, Երևան, 1984-1986:

<sup>44</sup> Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, Սիսական, Վենետիկ, 1893:

<sup>45</sup> Հ. Մանանդյան, Զննական տեսություն, հ. Գ, Երևան, 1952:

<sup>46</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959:

<sup>47</sup> Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9-13-րդ դարերում, Երևան, 1956:

<sup>48</sup> Բ. Առաքելյան, Զաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում, հ. 1, Երևան, 1959, հ. 2, Երևան, 1964:

<sup>49</sup> Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ.1, Երևան, 1957, հ. 2, Երևան, 1964:

<sup>50</sup> Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (9-13-րդ դարեր), Երևան, 1981:

<sup>51</sup> В.В. Бартольд, К вопросу о феодализме в Иране. "Новый Восток", 1930, № 28, с. 119.

<sup>52</sup> А. Якубовский, Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой X-XV вв. Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР, М.-Л., с. 49, "Очерки истории СССР", ч. I, М.Л., 1953, с. 497.

սելջուկների օրոք «տեղի էր ունենում փաստորեն գյուղացիների ճորտացում... գյուղացուն արգելված էր թողնել իր բնակավայրը»<sup>53</sup>: Համանման կարծիքի է ականավոր արևելագետ Ի. Պետրուշևսկին<sup>54</sup>:

«Մինչև 10-րդ դարը,- նկատում է հայ գյուղացիության պատմության հմուտ մասնագետ Ս. Հակոբյանը,- մեր մատենագիրներին անձանոթ է եղել «ճորտ» տերմինը»<sup>55</sup>: Հ. Աճառյանի մեկնաբանությամբ՝ ճորտ նշանակել է «սպասաւոր, փոքրատր, ծառայ», նույնիսկ «վասալ»: «Արդի գրականում նշանակում է «իշխանին կամ հողատիրոջ հպատակ հարկատու, որից ճորտություն, ճորտատեր, ճորտատիրական նոր բառեր են»<sup>56</sup>: Մենք հակված ենք պաշտպանելու այն գիտնականների տեսակետներ, ըստ որոնց միջնադարյան Հայաստանում ժամանակակից ըմբռնմամբ ճորտատիրություն գոյություն չի ունեցել<sup>57</sup>: Անշուշտ եղել են ավատից կախյալ վիճակում գտնվող գյուղացիներ կամ գյուղացիական համայնքներ, սակայն նրանք ունեցել են տնային ծառաների կարգավիճակ և տեղաշարժման իրավունք: Ս. Ջալալյանը Հաղբատի վիճագրերից մեկում կարդացել է, թե ինչպես Կյուրիկե արքայի դուստր Մարիամը իր քույր Ռուզուբանի հետ միասին մի շարք կառուցումներ կատարելուց հետո արձանագրել է՝ «հատի զճորտութիւն», այսինքն՝ վերացրեցի ճորտությունը<sup>58</sup>, թեև Վրաստանի ազդեցությամբ Հյուսիսային Հայաստանում, մասնավորապես Լոռիում, կարող էին լինել նաև ճորտատիրության դրսևորումներ: Այս արձանագրությանը հատուկ անդրադարձել է հայտնի վիճագրագետ Կ. Ղաֆադարյանը «Հաղբատ» աշխատության

<sup>53</sup> Б. Гафуров, История таджикского народа, т. 1, 1949, с. 250.

<sup>54</sup> И. П. Петрушевский, К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества. "Вопросы истории" за 1947 г. № 4, с. 61.

<sup>55</sup> Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, էջ 47:

<sup>56</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 213: Ի դեպ, Ն. Մառի կարծիքով՝ «ճորտ» բառը ծագում է ռուսերեն черт (սատանա) բառից (տե՛ս Н. Марр, "Заметки Восточного отделения", 1924, с.188). Բայց չէ՞ որ «ճորտ» նշանակել է նաև «ազնուական» (Հ. Աճառյան, նշվ. աշխ., նույն էջը):

<sup>57</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 151, հմմտ. Դ, III, 228:

<sup>58</sup> Վ. տ., էջ 41:

մեջ: Մեզ հետաքրքրող 1200 թ. արձանագրության 5-րդ տողը Կ.Ղաֆադարյանն ընթերցել է՝ «...Սյգհատին զճորտ զշինական եւ զԱբուս...»<sup>59</sup>: Համեմատելով գիտնականի վերծանությունը գրչագրի հետ՝<sup>60</sup> նկատեցինք, որ վերծանությունը ճիշտ է կատարված, թեև երկրորդ՝ շինական բառի զ նախդիրը ուսումնասիրողն ինքն է ավելացրել. իրականում պետք է լիներ ոչ թե «զճորտ զշինական», այլ «զճորտ շինական»: Մենք փաստեր ունենք, երբ իշխանը խաչքար է կանգնեցնում իր ճորտի հիշատակը հավերժացնելու համար<sup>61</sup>: Հասանի որդի Գրիգորը Դադի վանքին նվիրում է «չորս տուն շինական»<sup>62</sup>: Մի՞թե այստեղից կարելի է հետևցնել, որ դրանք եղել են ճորտ գյուղացիներ: Ամենևին՝ ոչ: Այդ «չորս տուն շինական»-ը այսուհետև աշխատելու էին ոչ թե Գրիգոր Հասանյանի տանը կամ կալվածքում, այլ Դադի վանքում: Գոշավանքի 1216 թ. վիմագրերից մեկում կարդում ենք, որ հավատացյալ Գոհար Խաթունը Ս. Աստվածածին եկեղեցուն իր այգու հետ միասին նվիրաբերում է «շինական մի ազատ»<sup>63</sup>:

Շինականների նվիրատվության մասին վիմական արձանագրություններում ունենք բազմաթիվ վկայություններ, որոնք կարոտ են հանգամանալից բնության, թեև վերջին հարյուրամյակում մի շարք ուսումնասիրողներ Հայաստանում ճորտատիրության առկայության մասին հայտնել են իրարամերժ կարծիքներ ու տեսակետներ:

<sup>59</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 176-177:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>61</sup> Տե՛ս Դ., III, 229:

<sup>62</sup> Վ. տ., 68:

<sup>63</sup> Դ., 6, էջ 76:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ

### Ա. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Միջնադարյան Հայաստանի գրավոր աղբյուրներում, հատկապես եկեղեցական ժողովների որոշումներում, կան բազմաթիվ հոդվածներ, որոնք աղերսվում են նվիրատվության հարցերին: Վաղ միջնադարում դրանց հատուկ անդրադարձել է մեծանուն կաթողիկոս Սահակ Պարթևը (387-439):

Հայոց եկեղեցին իր հիերարխիկ աստիճանակարգով ուներ առավել կենտրոնաձիգ և համապարփակ իշխանություն: Բարձրագույն գահավորակին բազմաժ հայրապետին ենթակա էին բոլոր հոգևոր իշխանավորները, որոնք տարբեր պատրվակներով երբեմն ունենում էին սուր վեճեր և բախումներ: Կենտրոնախույս նկրտումներ ունեցող բարձրաստիճան հոգևորականներին վեհափառն իրավունք ուներ նգովելուց բացի պատժել, կարգալույծ անել, ինչպես նաև աքսորել: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում անհնազանդության երևույթներ դրսևորվեցին հատկապես Սյունիքում, Արցախում և մասնավորապես Վասպուրականում: Հոգևոր դասի նահանգական առաջնորդների (Հակոբ Ապստամբ, Խոսրով Անձևացի և այլք) ընդվզումները կաթողիկոսարանի դեմ առավել հաճախ տեղի էին ունենում գաղափարա-դավանաբանական, ինչպես նաև տնտեսական հողի վրա: Այդ իսկ պատճառով եկեղեցու պահպանողական հայրերը սահմանեցին և հռչակեցին օրենքներ ու կանոններ, որոնք քաղաքացիական մեծ ճանաչում ստացան դեռևս վաղ ավատատիրության դարաշրջանում: Սահակ Պարթևի օրոք հոգևոր

թեմերի մեջ առաջացան անհամաձայնություններ եկեղեցիների ու վանքերի կարգավիճակի և տասանորդ հարկի առնչությամբ: Իմաստուն կաթողիկոսն այդ հարցերը լուծելու համար գրում է օրենքի աստիճանի բարձրացված կանոններ, որոնցից է մեզ հետաքրքրող ստորև բերվող ՇԾԵ |ՇԾԱ| ԼԶ կանոնն է, որտեղ կարդում ենք.

«Քանզի բազումք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել և այլ զոմն վանս, և տխմար բանիւք իւրեանց կամեցան կոխս և հերձուածս ի մի միաբանութիւն հաւատոց և մոռացան զպատուիրանին բանն որ ասէ. «Սի է Տէր, մի հաւատք և մի մկրտութիւն»<sup>64</sup>: Սահակի կանոններով (հոդվ. ԽԳ) սահմանվում են, թե նվիրատվության որ մասն ում է հասնում<sup>65</sup>:

Հենվելով աստվածաշնչային դրույթների վրա, նկատի ունենալով հայ եկեղեցու շահերը՝ Սահակ Պարթևը աշխարհիկ մեծահարուստ հավատացյալներին խորհուրդ է տալիս մասնաբաժին հատկացնել եկեղեցու սպասավորներին՝ վկայակոչելով Աստվածաշնչի Ելից մատյանի 23-րդ հատվածը, որտեղ ասվում է. «Դատարկածեռն ամենևին մի երևեսցիս առաջի իմ»<sup>66</sup>: «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն և ոչ գողք ական հատանեն և գողանան»<sup>67</sup>:

Ընդ սմին, կաթողիկոսը զգուշացնում էր, որ տասանորդը պետք է տարբերել ընծայաբերումից<sup>68</sup>: Տասանորդը ժողովրդից գանձվող համընդհանուր հարկ էր, որի հավաքմամբ զբաղվում էին հատկապես գավառական եպիսկոպոսները՝ քորեպիսկոպոսները, որոնց դերը բարձր էին գնահատում հայոց հայրապետները, ուստի առաջարկվում էր, որ նվիրատվությունները չի կարելի բաժանել կամ օտարել առանց գավառի եպիսկոպոսին տեղյակ պահելու, - կարդում ենք

<sup>64</sup> Կանոնագիրք Հայոց, Ա, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1964, էջ 386:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 400-401:

<sup>66</sup> Աստուածաշունչ, Ելք, ԻԳ, 15: Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 413:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 412-413:

<sup>68</sup> Կանոնագիրք Հայոց, Բ, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1971, էջ 234-235, Կանոնը Սահակայ Պարթևի, ՃԵ:

Շահապիվանի ժողովի կանոնական որոշումներում<sup>69</sup>: Ապա նաև՝ նվիրատվությամբ ձեռք բերված ունեցվածքը և պատարագներից ստացված դրամական եկամուտները խստորեն արգելվում էր շահույթ ստանալու համար տոկոսով դնել շրջանառության մեջ: Ներսեսի և Ներշապուհի Կանոնքում (հոդվ. ՈԺԱ) ՈԷ, Գ) կարդում ենք. «Եղին ոմանք եւ վաշխս վասն դահեկանաց իւրեանց»<sup>70</sup>: Հետաքրքիր է ՈԻԱ|ՈԺԷ|ԺԳ կանոնը, որտեղ կարդում ենք. «Եւ ժողովրդականք մի հրապուրեսցին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկեղեցոյ, զի պատճառ խռովութեան բերէ, այլ զպտուղս եւ զմուտս ժողովրդականք միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուցեն ամենայն յաւժարութեամբ անխափան... գլխաւոր քահանայիցն՝ Բ մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն՝ մէն Բ մասունս, եւ սարկաւագունքն՝ մի մասն եւ կէս մասին»... և այլն<sup>71</sup>: Հանճարեղ Գրիգոր Նարեկացին նույնպէս խորհուրդ էր տալիս նվիրատվություն կատարել հայ եկեղեցու սպասավորների համար: «Տվեք այդ նվերն Աստծուն ի փրկություն ձեր և մաքրագործվեք»<sup>72</sup>:

Մեծահարուստ մարդիկ ցանկանում էին իրենց մահվանից հետո թաղվել եկեղեցու տարածքում, ուստի այդ նպատակի համար նրանց հարազատները ծախսում էին զգալի գումարներ: ՈԻ ՈԻԸ|Դ| կանոնը սահմանում է. «Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել...»<sup>73</sup>: Օրենքի աստիճանի բարձրացված կանոններից մեկում արձանագրված է. «Իշխանք զգեալս եւ զդաստակերոս եւ զանձս ոսկոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պաճարաց»<sup>74</sup> (իմա՝ անասուններից - Լ. Ս.) պետք է տան եկեղեցուն և նրա սպասավորներին: Ի դեպ, ՇԾԱ |ՇԾԵ|ԼԶ Կանոնքում, դարձյալ հիմք ունենալով Աստվածաշունչը, Սահակ Պարթևը կարծում էր, որ «Աղբատը

<sup>69</sup> Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 455: Կանոնք Շահապիվանի ժողովի՝ ԺԶ:

<sup>70</sup> Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 479:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 483:

<sup>72</sup> Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թարգմանությունը՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1979, Բան Դ, գ:

<sup>73</sup> Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 486:

<sup>74</sup> Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 296:

խնամեալք, տնանկք յապահովացեալք»<sup>75</sup> պետք է լինեն: Նկատի ունենալով եկեղեցու սպասավորների անհագուրդ սեփականելու արգահատելի ձգտումը, օրենսդիրը սահմանում է, որ քահանաներն իրավունք չունեն հոգևոր օջախներին նվիրաբերված անասունները տանել իրենց տուն:

Կաթողիկոս Հովհան Մանդակունին անդրադարձել է պատարագներին, որոնք հանդիսանում էին մաս եկամտի աղբյուրներ: Պատարագները, ինչպես հայտնի է, սուրբ և խորհրդավոր արարողություններ են, սակայն երբեմն եկեղեցու հայրերը ծուլանում էին նախանշված օրերին պատարագել հանգուցյալների հոգու փրկության համար: Ուստի հավատացյալներն երբեմն տրտնջում էին եկեղեցու սպասավորների հասցեին՝ ասելով «...ի ծուլութենէ զպատարագն խափանեաց, թէ անարժան մատոյց, թէ անփոյթ արար զտան սրբոց»<sup>76</sup>: Պատահական չէ, որ վիմական արձանագրությունների անեծքի բանաձևերում այս մասին հատուկ նշվում է, որովհետև եկեղեցու սպասավորները երբեմն մոռանում էին հիշատակաց արարողության օրերը կամ ժամանակի ընթացքում դրանք խալառ մոռացության էին տալիս:

Պատարագների և ընդհանրապես հիշատակի օրերի մասին հատուկ նշվում է Հայոց դատաստանագրքերում: «Վասն յիշատակի ննջեցելոց» հոդվածում<sup>77</sup> Մխիթար Գոշն արձանագրում է, որ հիշատակի արարողություններ կատարելիս պետք է նախօրոք նկատի ունենալ հանգուցյալի ցանկությունը<sup>78</sup>: Պատարագների դիմաց ստացված նվիրատվությունները, ընդունված կարգի համաձայն, բաշխվում էին նվիրաբերողի կամքը հաշվի առնելով և, նվիրատվությունն անցնելով նոր տիրոջը, համարվում էր անձեռնմխելի<sup>79</sup>:

<sup>75</sup> Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 421:

<sup>76</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի. աշխատասիրությանը Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 381 (Գ խմբագրություն), տես նաև էջ 117 (Ա խմբագրություն):

<sup>77</sup> Նույն տեղում, գլուխ ԾԶԳ, էջ 372:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 372:

Եկեղեցուն նվիրաբերված գույքն ու կալվածքներն արգելվում էր վաճառել. «Եւ ագարակք եւ այլ ստացուածք, զատուցեալք յեկեղեցիս, մի վաճառեսցի, զի կալուած յաւիտեանական այն նոցա»<sup>80</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանում բոլոր հասութաբեր հաստատությունները դարձել էին առուծախի առարկա: Վանական եղբայրություններն օգտվում էին այդ հնարավորությունից, ուստի աստիճանաբար պետք է դառնային խոշոր հողատերեր: Նշենք Դավթակ (Դավթուկ) քորեպիսկոպոսին, որ կուտակել էր հեքիաթային հարստություն: Միայն «800 վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»<sup>81</sup>:

Սկզբնաղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ ժառանգության և կտակների վերաբերյալ: Նշվում է, որ կանանց անժառանգ լինելու դեպքում, գույքը հասնում է ամուսնուն, իսկ եթե ամուսին չունի, կնոջ ունեցվածքն ու կայքը տրվում է եկեղեցուն<sup>82</sup>: Հաղբատի վանքի արձանագրություններից մեկում նշվում է, որ Ասլամազի դստեր՝ Ալամի մահվանից հետո նրա «բաժինքը» նվիրաբերվում է Հաղպատի վանական միաբանությանը<sup>83</sup>:

Մելիք-թուրքերի հզորության շրջանում, հատկապես Մելիք-Շահի տիրակալության օրոք խորասանցի Նիզամ ալ-Մուլքի հեռատես քաղաքականության շնորհիվ վանքերն ազատվում էին պետական հարկերից: Այս կապակցությամբ Մատթեոս Ուռհայեցին, գրում է, որ Մելիք-Շահը «եղեւ այր բարի եւ ողորմած եւ յոյժ քաղցր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի»<sup>84</sup> Ստեփանոս Օրբելյանը Մելիք Շահին կոչում է «այր բարեբարոյ և խաղաղարար»<sup>85</sup>:

Սակայն պատմությունը վկայում է, որ օտար տիրակալներն

<sup>80</sup> Նույն տեղում, Ա խմբագրություն, էջ 70:

<sup>81</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար քարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1981, էջ 112-113: Այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի:

<sup>82</sup> Ն. Ադունց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 214, 216:

<sup>83</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 142:

<sup>84</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 222:

<sup>85</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 234:

այնքան էլ «բարի», «ողորմած» և «խաղաղարար» չէին քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Այդ են ապացուցում նվիրատվական վիմագրերի գոնե անեծքի բաժինները:

## **Բ. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

### **Նվիրատվության վկաները**

Միջնադարյան Հայաստանում, հատկապես զարգացած ավատատիրության ժամանակ տարբեր առիթներով մեծ հարստություններ կուտակեցին հայոց վանքերն ու նրանց առաջնորդները: Այդպիսի կրոնամշակութային հաստատություններից էր հանրահռչակ Տաթևի վանքը, որն աշխարհիկ իշխանների աջակցությամբ աստիճանաբար սկսեց ընդլայնել սեփական տիրույթների սահմանները՝ ի հաշիվ շրջակա գյուղերի բնակիչների հողատարածքների: Դեռևս 839 թ. Սյունյաց եպիսկոպոս տեր Դավիթը դիմեց գահերեց իշխան Փիլիպեին՝ խնդրելով նրան «ընդ գնոյ տալ զմերձակայ ագարական»<sup>86</sup>: Հասնելով իր նպատակին՝ Սյունյաց թեմական առաջնորդը գահերեց իշխանին վճարելով 10000 դրամ, «որ լինի մեն մի վեց դանկ»<sup>87</sup>, սեփականում է նաև մերձակա Արծիվ և Բերդկաներեչի գյուղերը «ագատ ամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց»<sup>88</sup>: Նվիրատվության արարողության ժամանակ մանրամասնորեն նշվում են օտարվող գյուղի աշխարհագրական սահմանները՝ «...լերամբ և դաշտիւ և գջրարբին և զարօտ երկիր, զարտ և զմարգ» և այլն: Մասնակիցները փաստաթուղթը սովորաբար մատանում էին, այսինքն՝ մատով դրոշմում էին «Գիր վճիռի» վրա, իսկ թագավորը

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>87</sup> Պատմական գիտությունների դոկտոր Ռ. Հ. Վարդանյանը, բննարկելով Ստեփանոս Օրբելյանի այս վկայությունը, գրում է, որ «այս վեց դանգանոց դրամը... դրաքմե-դրամն է, ուստի Արծիվ գյուղի համար վճարվել է 33,350 կիլոգրամ արծաթ կամ եթե վերածենք ոսկու՝ կլինի 3,335 կիլոգրամ, այսինքն՝ 750 դահեկան» (տե՛ս Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները (10-15-րդ դարեր), Երևան, 1989, էջ 151):

<sup>88</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 149:

կամ գերագահ ավատը կնքում էին իրենց մատանիներով՝ «Մատանի եղաւ»։ Աղվանից Վաչագան թագավորի «Սահմանադրութիւն կանոնականին» ներկա վկաները մատանում են ընդունված փաստաթուղթը. «Եւ զայս հրաման մատանեցին», իսկ թագավորն անձամբ մատանին կնքում-դրոշմում էր. «Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս Վաչագանայ՝ Աղուանից արքայի մատանին եղաւ ի վերայ»<sup>89</sup>, ընդ որում թագավորից հետո առաջինը «մատանում է» արքայի հրամանատար Մուծիկը։ Նման իրավական գործերի ընթացքն ապահովելու նպատակով Մխիթար Գոշը սահմանում է, որ կալվածագիրը կամ նվիրագիրը պետք է ձևակերպել ոչ պակաս 3 վկաների ներկայությամբ<sup>90</sup>։ Իբրև կանոն՝ նվիրատու իշխանը հատուկ նշում էր, որ այդուհետև իր հարազատները՝ եղբայրները, որդիները կամ «խոստակդարները» (կալվածատերերը) և «ձեռնավորները» (հարկահավաքները) իրավունք չունեն հակառակվելու իր կամքին։

839 թ. գործարքից հինգ տարի հետո՝ 844 թ., Տաթևի վանքին է նվիրաբերվում Տաթև գյուղն ամբողջությամբ։ Այս արարողությանը մասնակցել է 35 վկա, ընդ որում, 26 աշխարհիկ և հոգևոր դասի 9 ներկայացուցիչ, որոնց հանվանե նշում է Ստեփանոս Օրբելյանը՝ ըստ նրանց զբաղեցրած հասարակական դիրքի և հեղինակության։

### Այդ վկաներն են՝

1. «Գրիգոր Սիւնեաց տէր,
  2. Ատրներսէ՛հ՝ որդի Վասակայ Սիւնեաց տէառն,
  3. Գրիգոր՝ Սահակայ որդի,
  4. Հրահատ՝ Սահակայ որդի,
  5. Արուման՝ Սահակայ որդի,
  6. Հրահատ՝ Գրիգորի որդի,
  7. Գագիկ՝ Գրիգորի որդի,
  8. Վահան՝ Վարդանայ որդի,
- Ազատներից՝

<sup>89</sup> Մովսէս Կաղանկատվացի, էջ 94։

<sup>90</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 206։

9. Հոռ,
10. Բուրդոյ ----- Շապուհի որդիք,
11. Խոսրով,
12. Ջևանշեր՝ Թեոդորոսի որդի,
13. Աշնակ՝ Վահանայ որդի,
14. Չագիկ՝ Վահանայ որդի,
15. Վարդան՝ Ջանադայ որդի,
16. Սահակ՝ Վասակայ որդի,
17. Միհրան՝ Թուրքայ որդի,
18. Յովհան՝ Ներսէի որդի,
19. Մուշեղ՝ Տիրոցի որդի,
20. Հասան՝ Շապուհոյ որդի,
21. Վահան՝ Մխիթարայ որդի,
22. Մուշեղ՝ Սմբատայ որդի,
23. Վահան՝ Բաբգենի որդի,
24. Բաբգեն,
25. Վասակ,----- Փիլիպէի որդիք»:
26. Աշոտ

- Ապա՝ ստորագրում են հոգևոր դասի ներկայացուցիչները՝
27. «Ահարոն՝ Երիցոյ<sup>91</sup> վանական
  28. Գրիգոր քահանա,
  29. Ստեփանոս՝ Մաքենոցաց<sup>92</sup> վանական,
  30. Յակոբ՝ Ույծի<sup>93</sup> առագերեց

<sup>91</sup> Երիցովանքը (Երիցավանք) գտնվում է Կապան-Գորիս ավտոմայրուղու աջակողմյան սարալանջին, Կապանից 15 կմ հեռավորությամբ, այժմյան Արծվանիկ գյուղից վեր: Գյուղի մերձակայքում է գտնվում ժողովրդի մեջ բարի համբավ չունեցող «Շոն Փոսնգյուլի» գերեզմանաբարը:

<sup>92</sup> Մաքենոցաց կամ Մաքենյաց վանքը եղել է Սյունիքի ամենանշանավոր կրթանշակութային կենտրոններից մեկը: 9-րդ դարի առաջին տասնամյակներին Խուռանյանների առաջնորդ Բաբեկը (Բաբան Պարսիկ) կործանեց այն և սրտոնց հայրենասեր վանականներից շատերին: Այս մասին հիշատակում են հատկապես Մովսես Կաղանկատվացին և Ստեփանոս Օրբելյանը:

<sup>93</sup> Ույծը Սյունյաց նահանգի Շղուկ գավառի պատմական բնակավայրերից է: Եղել են Մեծ և Փոքր Ույծեր: Ուշ միջնադարում կոչվել է Ուգ:

31. Մանկիկ՝ Ծղկայ<sup>94</sup> քորեպիսկոպոս,
32. Ստեփանոս՝ Ծիծառնու<sup>95</sup> վանական,
33. Գրիգոր՝ դրան երեց,
34. Սիմեոն՝ Շաղատայ<sup>96</sup> վանական,
35. Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ»:

Վկայակոչված կալվածագիրն ունեցել է «վեց կնիք մեծամեծ իշխանացն վասն առաել հաստատութեան»<sup>97</sup>:

Այս նվիրատվական ակտը ուժի մեջ է լինելու հավիտենապես՝ «մինչև ցգալուստն Քրիստոսի»: Ընծայագրում հատուկ նշվում է, որ այլևս ոչ ոք իրավունք չունի Տաթև գյուղը բռնագրավել վանական միաբանությունից, վաճառել, փոխանակել կամ «գրաւական դնել» և այլն:

Նույն 844 թ. Սահակ իշխանի որդի Հրահատը և Արումանի եղբայր Գրիգորը, որոնք Քաշունիք և Կովսական գավառների բնիկ տերերն էին, գալիս են Դավիթ եպիսկոպոսի մոտ և Տաթևի վանքին են ընծայում գյուղեր և ագարակներ: Իշխան Հրահատը կալվածագրում նշում է այս նվիրատվության բուն պատճառը. «Վասն իմ չար և անիրաւ գնացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազմազգի յանցանօք, և լցեալ իբրև զծով անթիւ չարեօք...զմտաւ ամեալ զանգաւակութիւնս իմ... գիտելով, զի մահկանացու է ազգ մարդկան աստուածընկալ սուրբ խաչի ապաւեն ինձ արարի փոխանակ որդեաց» և Կովսակա-

<sup>94</sup> Ծղուկը վաղ միջնադարում եղել է Սյունյաց նախարարության առաջին գահանիստը: Այժմյան Սյունիքի մարզի Սիսիան շրջկենտրոնն է:

<sup>95</sup> Ծիծառնու վանքը (Ծիծեռնավանք) այժմյան Քաշաթաղի շրջանի հանրահայտ Ծիծեռնավանքն է: Հնագետ-պատմաբան Հակոբ Սիմոնյանի ղեկավարած արշավախմբի պեղումներից հետո այժմ ամբողջապես վերանորոգվել է բարերարներ Քերոլայն և Ջորջ Նաջարյանների (ԱՄՆ, Բոստոն), Հակոբ և Ռուդի Ալբիփարմակյանների (Ֆրանսիա, Նորվեգիա) աջակցությամբ:

<sup>96</sup> Շաղատը եղել է Սյունիքի նախարարության առաջին գահանիստը և հայ գրչության ամենանշանավոր կենտրոններից մեկը: Շաղատի վարդապետները մեծ դեր կատարեցին Մեսրոպ Մաշտոցի ժամանակ և նրանից հետո հայագիր գրականության և թարգմանչական արվեստի զարգացման գործում: Շաղատը Անդոկ Սյունեցու, Փառանձեմ հայոց թագուհու, Բաբիկի և նրա որդի Վասակ մարզպանի ծննդավայրն է: Պահպանվել է նույն անունով մինչև օրս:

<sup>97</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 151-152:

նի Նորաշինիկ գյուղը (համանուն գյուղը Կապանի շրջանում), որ ձեռք էր բերվել «յարդար վաստակոց՝ ստացեալ [ընդ] գնոյ արծաթի» բոլոր շրջակա տարածքներով նվիրում է Տաթևի վանքին<sup>98</sup>: Կալվածագրում հանվանե նշվում են Նորաշինիկի բոլոր սահմանները: Գործարքին մասնակցել են 18 վկաներ: Նույնը տեսնում ենք վիճական արձանագրություններում և ձեռագիր մատյաններում: Սանահինի «Քոթուկում» գետեղված կալվածագրում ներկայացված են բազմաթիվ վկաներ՝ իրենց զբաղեցրած դիրքով և պաշտոններով<sup>99</sup>: Նվիրատուներից մեկը արձանագրում է, որ Հաղպատավանքին այգի է նվիրում, հիշելով «զբազում յանցանս իմ»<sup>100</sup>: Վայոց ձորի վիճագրերից մեկում կարդում ենք, որ նվիրատուն իր ունեցվածքը տալիս է եկեղեցուն «... վասն ծովացեալ մեղաց, քերևս ողորմութիւն գտից...»<sup>101</sup>:

Հավատացյալներն իրենց ունեցվածքը նվիրում էին եկեղեցուն՝ «գաւակ երկրատր» չունենալու պատճառով. «Ձեռատունկ այգի ու :Դ: (չորս) դուռն տուն մեր շինած ի Չվա»<sup>102</sup>: Տարսայիճ իշխանն իր եղբայր Սմբատի դամբարանը՝ Սուրբ Գրիգոր եկեղեցին կառուցող Սիրանես ճարտարապետին «խիլայում. է» (պարգևում, նվիրում է) «500 սպիտակ», սակայն «ի այն խիլային փոխան» շնորհում է «Աղազար Ըղուերծեցուն», ապա կառուցողին տալիս է նրա հայրենի Հալիձոր գյուղը (գտնվում է Սյունիքի մարզի Գորիսի ենթամարզում), որից իշխանական գանձարան պետք է մուծվեր միայն 60 սպիտակ<sup>103</sup>, մնացած եկամուտը յուրացնելու էր Սիրանես ճարտարապետը: Ուշագրավ է Սարգիս եպիսկոպոսի հիշատակագրությունը, որի գիտական վերծանությունը տրված է Դիվանի III պրակի 246 էջում: Թեմական առաջնորդը իր կառուցած հյուրատանը նվիրում է մի շարք շարժական և անշարժ գույք, ընդ որում՝

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>99</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 55:

<sup>100</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, էջ 208:

<sup>101</sup> Դ., 3, էջ 153, տես նաև՝ էջ 145:

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 234-235 (ներդիրը), արձ. քիվ. 765:

<sup>103</sup> Նույն տեղում:

1. «Ավէշ (գյուղն) իւր ամէն սահմանաւքն»,
2. «Զերկու ակնի ջաղացն յԱռփա»,
3. «Այգի՛ Աղթամարենց» բաժինն նույն (Առփա) գյուղում,
4. Թոմա, Ովանէս, Պետրոս սպասարկող ծառաներին,
5. Ակոռիում եղած հնձանադուռը,
6. Վեղիում՝ «Պարոնին գնած բաժինն»,
7. Հող՝ «ի Նրբոյն մարտական փորակ» կոչվող,
8. Ագարակաձորում՝ «Վարդուտ» կոչված տարածքը,
9. Ագատ գյուղում՝ «գԼճադուռն»,
10. Սարում՝ «Ակներ» կոչված վայրը,
11. Անապատ վայրում՝ «Թճենիներ»:

Սեդրակ Բարխուդարյանի կարծիքով՝ Սարգիս եպիսկոպոսի այս արձանագրությունը փորագրվել է 1273-1290 թթ արանքում:

Հաճախ լինում են դեպքեր, երբ «հոգեցատուր» արված գյուղերն ու կալվածները քաղաքական աննպաստ պայմանների ժամանակ հափշտակվում էին: Օրինակ՝ Խովտո (կամ Խոտո) կոռավարը Գևորգն ընծայաբերել էր Ս. Նշանին, սակայն «զինչ պատճառով» այն հափշտակել էին: Տեր Սողոմոնը Գրիգորի որդի Հրահատից «ընդ գնոյ» վերցնելով Խոտ և Դարատափ գյուղերը՝ նվիրաբերում է Տաթևի վանքին<sup>104</sup>:

Համանման փաստ է արձանագրված Հաղարծնի վանքի նվիրատվական գործարքում<sup>105</sup>:

Առատաձեռն նվերներով առանձնապես աչքի է ընկնում Գրիգոր Սուփան իշխանը, որը Կոթ գյուղաքաղաքում կառուցած եկեղեցու սպասավորներին, բացի վերջիններիս համար նախատեսված ոռճիկներից, ընծայաբերում է բազմաթիվ կալվածքներ, որոնցից իրավունք չունեն օգտվելու նույնիսկ Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին<sup>106</sup>:

<sup>104</sup> Դ., 3, էջ 206-207, արձ. թիվ 666 (ներդիր):

<sup>105</sup> Դիվանի հայ վիմագրության, պրակ 6, (Իջևանի շրջան), կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հո.Մ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 24: Այսուհետև՝ Դ., 6:

<sup>106</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 131:

Երբեմն՝ նվիրաբերելու նպատակով փոխանակվում են գյուղերը: Նման պարագայում, իբրև կանոն, նշվում են մաս այն հարկատեսակները, որոնք վճարել են փոխանակվող գյուղերի բնակիչները: Օրինակ՝ Կապանի տարածքում գտնվող Բեխ և Արուքս գյուղերը վճարել են, այսպես կոչված. «նեպակ» (վնասակար միջատների ոչնչացման համար գանձվող) 12 դրամ արժողությամբ պետական հարկը, որը հատուկ նշված է կալվածագրում<sup>107</sup>: Սյունյաց իշխան Ջևանշերը և աթոռակալ եպիսկոպոս տեր Սողոմոնը (Ս. Հակոբյանը նրան սխալմամբ կոչում է «Տեր-Սիմոն»)<sup>108</sup>: Կովսական գավառի Բեխ գյուղը 871 թ, փոխանակում են Բաղք գավառի Արուքս գյուղի հետ<sup>109</sup>, ընդ որում, մանրամասնորեն նշվում են փոխանակվող գյուղերի տարածքներն ընդունված կարգի համաձայն՝ միշտ թվարկելով գյուղերի սահմաններն արևելյան կողմից<sup>110</sup>: Ջաքարիա ամիրսպասալարը Հաղպատավանքին է նվիրում Աշոցքում գտնվող իր փոխանակած Հազարաշեն գյուղը, «զի այս գեղերս հեռի էին Հաղբատայ, փոխեցի եւ ետու հայրենիք...առի երկու գեղն փոխան գՀաղբատ հայրենիք ամենայն սահմանաւք, ոնց բնական եղեալ է հողով եւ ջրով, խոտամարգաւք, մայրիւք եւ ջաղացովք, գոմամարգերաւք (թերևս՝ գոմաւ, մարգերաւք), լերամք եւ դաշտիւ: Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պարոնաց, ի ձեռնաւորաց, ի գիւղականաց...»<sup>111</sup>:

Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու 906 թ. նավակատիքի ժամանակ Սմբատ Ա Բագրատունի թագավորը «ընդ գնոյ ստացեալ» կալվածքներ է ընծայաբերում Տաթևի վանքին: Այդ կալվածքներից էին այժմյան Սեղրու շրջանի Կարճավան ավանը, «Գնէ (թագաւորն Սմբատ - Լ. Ս.) եւ գՀարժիս ի տերանցն Սիւնեաց և զայն եւս ընծայէ

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 158-159: Տես նաև էջ 149, 153:

<sup>108</sup> Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ.1, էջ 238:

<sup>109</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 159:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 149, 153, 159:

<sup>111</sup> Ա. Ղափաղարյան, Հաղբատ, էջ 168-169

ագատ յամենայն հարկաց: Տայ և ի Գեղաքունի, ի Սողից գաւառի...»<sup>112</sup>: Առատ նվերներով աչքի է ընկնում հատկապես Սյունյաց իշխանաց իշխան Աշոտը<sup>113</sup>:

Շատ դեպքերում հավատացյալները, գնելով այս կամ այն կալվածք, ագարակը, գյուղը, գույքը նվիրաբերում էին առավելապես իրենց համայնքի հոգևոր օջախին: Բազմաթիվ վկայություններ կան «հայրենի հող» համարվող հողակտորների, այգիների, մարգագետինների, հնձանների նվիրատվության նպատակով գնման և վաճառքի մասին<sup>114</sup>: Բագարանի վիմագրերից մեկում կարդում ենք, թե ինչպես 1034 թ. Շապուհի որդի հայր Մարկոսը Հովհաննես-Սմբատ շահնշահից :ԵՌ: (5000) դրամով գնելով մի շարք հողակտորներ, աճեցնում է այգիներ, կառուցում հնձան և «ջաղաց մի Մրենի ետու ի ս. կաթողիկէս...»<sup>115</sup>: Գարբանելի որդի, իշխանաց իշխան Շապուհը, որ իրեն կոչում է «ի տոհմէն Պահլաւունի», գնում է «գՌոնակայ տափն» և նվիրաբերում Սանահնի վանքին<sup>116</sup>: Մի շարք գանձագին այգիներ են ձեռք բերում Հոռոմոսի, Բագնայրի վանքերը: Ոմն «Գարեգոյն երէց» Բագնայրի վանքին նվիրում է «... գանձագին տեղն զՆորաղբոյրիկ իւր ամենայն անդաստանաւք...»<sup>117</sup>: Բազմաթիվ կալվածքներ են ձեռք բերում Հաղարծնի, Խաթրավանքի, Հաղպատի, Սանահնի, Օշականի և այլ վանական միաբանություններ:

Հայաստանի կրոնական հաստատությունները մեծ կարողություն են կուտակում Պետրոս Գ-ետաղարծ կաթողիկոսի գահակալության տարիներին (1019-1058): Հիշյալ վեհափառը, օրինակ հանդիսանալով մյուսներին, Բագնայրի եկեղեցուն է ընծայում իր «գանձագին հայրենիքը», ինչպես նաև «:Է: (7) տուն», «գանձագին կուղպականին,

<sup>112</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 166-167:

<sup>113</sup> Նույն տեղում:

<sup>114</sup> Ի. Ա. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, с. 447, 453, 455, 466, 474, Վ. տ. էջ 32, տե՛ս նաև էջ 10, 18, 21, 31, 33, 39, 40, 52:

<sup>115</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>116</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 147-148:

<sup>117</sup> Վ. տ., էջ 104-105:

որ Վասիլին փնդկին ընդդէմ է»<sup>118</sup>:

Հետաքրքիր բովանդակություն ունի Ջուրջի թոռ Ամիրայի նվիրատվական արձանագրությունը: Նա գրում է. «զՅադթա այգին, որ ի պարոն Տարսահճէն գնեցի :Դ.Ռ: (4000) դրամ ու ի :Գ: (3) ջորի տվի ի սբ ուխտս...»<sup>119</sup>: Այս նվիրատվությունը չեղյալ հայտարարողները պարտավոր են :Դ.Ռ: դրամը և 3 ջորիները հետ վերադարձնել Նորավանքին: Վկայված հետաքրքրական փաստը ենթադրել է տալիս, որ հասարակության բոլոր անդամներն անխտիր, անկախ զբաղեցրած դիրքից ու պաշտոնից կարող էին ներգրավվել պարզ շուկայական հարաբերությունների մեջ, կատարել առք ու վաճառք, որոնց կանոնավորող օղակը Սյունյաց եպիսկոպոսարանն էր՝ հանձնինս Նորավանքի և նրա սպասավորների: Պետրոս Գ-ետադարձ կաթողիկոսը Անիի՝ Ապղարիք մարզպանի կառուցած ս. Փրկիչ եկեղեցուն նվիրում է զգալի տիրույթներ, «որմով եւ ծառովք պտղաբերովք եւ անպտղաւք եւ խոտագետնովք, :Գ: (3) աւր ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղջէ յամենայն հասուց...»<sup>120</sup>:

Քաղաքական պայմաններից դրդված և երկրի շահերը նկատի ունենելով՝ թագավորը իրավունք ուներ ամբողջական գավառներ, քաղաքներ, գյուղեր ու ագարակներ ընծայել իրեն հավատարիմ ավատատերերին ի հաշիվ պետության անհավատարիմ անձանց տիրույթների: Օրինակ՝ Նախիջևանը կռվախնձոր դարձավ Հայաստանի երկու հզոր իշխանական տոհմերի՝ Սյունեցիների և Արծրունիների միջև: Նույն երևույթը տեսնում ենք նաև վաղ միջնադարում: Հոգևորականությունը և եկեղեցին մշտապես նեցուկ են եղել երկրի գերագույն սյուզերենին, և վերջինս պարտավոր էր վարձահատույց լինել նաև նյութական արժեքների տրամադրմամբ, մանավանդ որ աշխարհիկ վերնախավի իշխանության բացակայության պայմաններում եկեղեցու հայրերն օժտված էին քաղաքական

<sup>118</sup> Վ. տ., էջ 22:

<sup>119</sup> Դ. 3, էջ 220:

<sup>120</sup> Վ. տ., էջ 20:

իշխանություն վարելու օրինականացված կարգավիճակով:

Հայ եկեղեցին ամուր հենարան և կապող օղակ էր ներավատական հարաբերություններում, ուստի առատ նվերներ էր ակնկալելու քաղաքներից, գահերեց և գահակալ իշխաններից: Եվ դժվար չէ նկատել նվիրատվությունների այն հեղեղը, որ հոսում էր դեպի վանքերի շտեմարանները: Քննարկվող ժամանակահատվածում՝ 9-14-րդ դարերում, հայ առավելապես բարձրաստիճան հոգևորականությունը նվիրատվության և գանձագին եղանակներով ստացավ բազմաթիվ անշարժ և շարժական գույք, հասութաբեր հաստատություններ, որոնց նկատմամբ ուներ սեփականության, քան տիրության իրավունք, որը հաստատագրված էր կանոնական որոշումներով, սովորութային իրավունքով և զարգացած ավատատիրության դարաշրջանի «Գիր - վճիռներով»:

Օրինական ճանապարհով ստացված ժառանգությունը կարելի էր նվիրաբերել կամ օտարել որևէ կերպ: Այս առումով հետաքրքրական են Հուստինիանոս կայսեր նովելլաները, որոնք սկսվեցին կիրառվել մասն Հայաստանում 6-րդ դարի առաջին կեսից սկսած:

Իբրև կանոն՝ հողը փոխանցվում էր հորից որդուն, եղբորը՝ ժառանգական իրավունքից զրկելով կանանց<sup>121</sup>: Հավանաբար դա չէր վերաբերում ազնվական դասի ղեկավարներին: Օրինակ՝ Սյունյաց իշխան Վասակի դուստր Քուպղիդուխտը «զմտաւ ամելով գերկրաւոր կենաց ոչնչութիւնն», անգավակ լինելու և ծեր տարիք ունենալու պատճառով՝ Սյունյաց եպիսկոպոս Սողոմոնին նվիրում է «շէն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի»<sup>122</sup>: Ջարմանալին այն է, որ հիշյալ գյուղը Քուպղիդուխտ իշխանուհու ամուսին Հրահատը նախապես գնել էր իր կնոջ եղբորից: Նվիրատվական վճիռը տեղի է ունեցել Հրահատ իշխանի մահվանից հետո և հաստատվել է Սողոմոն եպիսկոպոսի «վավերական մատանիով»<sup>123</sup>: Այս կապակցությամբ ուշագրավ

<sup>121</sup> Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 214, 216, 220, 223:

<sup>122</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 159-160:

<sup>123</sup> Նույն տեղում, էջ 160:

վկայություններ ունենք վիմական արձանագրություններում: 1207 թ. ոմն Ավագ տիկին Արջոառիճի վանքին նվիրում է «հայրենի կես ակն ձիթահանքն, որ ի յիմ ծնողացն ի պսակի ներքեւ ինձ բաժինք էր հասել»<sup>124</sup>: Հավանաբար Ավագ տիկինն իրավունք է ունեցել իր «բաժինքը» օտարել ամեն գնով՝ առանց որևէ մեկի հետ համաձայնեցնելու: Հայոց իշխանուհիների նվիրատվությունների մասին մի շարք վկայություններ կան հատկապես Սյունյաց նահանգում (Մարիամ, Սոփի, Շուշան, Զուպդիդուխտ, Համասպրուհի և այլք):

Կտակը վիմական արձանագրություններում երբեմն կոչվել է «Անդարձագիր»<sup>125</sup>, որը Ն. Մառը թարգմանել է՝ завещание, իսկ Հ. Փափագյանը՝ «Փաստաթուղթ օտարման մասին՝ վակֆնամե»<sup>126</sup>:

Աղջիկը ժառանգման կամ ժառանգելու իրավունք է ստանում միայն այն դեպքում, եթե չկան արական սեռի ժառանգներ<sup>127</sup>:

Օրինակ՝ Սահակ Պարթևը արու զավակ չունեւ, և Մովսես Խորենացու ու Ղազար Փարպեցու վկայմամբ՝ Տայքն անցավ դստերը:

«Մենք ցանկանում ենք, որ կանայք նույնպես մասնատանան տոհմական կալվածքներից», - կարդում ենք Հուստինիանոս կայսեր նովելլայում (§ 2)<sup>128</sup>:

#### **Գ. ՀԱՐԿԱՊԱՀԱՆՁՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԱՊԱՀԱՐԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

Նվիրատվություններն, իբրև կանոն, ազատվում էին պետական և տեղական հարկերից<sup>129</sup> ու տուրքերից: Սակայն ապահարկության իմունիտետը կախված էր քաղաքական իրադրության կայունությունից և հաճախ անտեսվում կամ պարզապես ոտնահարվում էր

<sup>124</sup> Վ. տ., էջ 48:

<sup>125</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>126</sup> А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XV-I-XVII вв., Ереван, 1972, с. 153, 155. Տե՛ս նաև՝ Գնել Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 59:

<sup>127</sup> Ն. Աղունց, նշվ. աշխ., էջ 206:

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>129</sup> Հ. Մանանդյան, Զննական տեսություն, հ. Գ, էջ 66-67:

հիմնականում օտար իշխողների տիրապետության օրոք: Ահա թե ինչու հոգևոր և աշխարհիկ ավատատերերն ամեն ջանք ու եռանդ գործադրում էին պահպանել եկեղեցու, ընդ որում, նաև վանական եղբայրությունների, ապահարկության իրավունքը, որը վաղուց ի վեր ամրագրված էր հոգևոր հայրերի կանոնական որոշումներով և արքայական հրովարտականերով: Ռ-ազմաքաղաքական տեսակետից հզոր և ժողովրդական լայն զանգվածների մեջ մեծ հեղինակություն վայելող ավատատերը կարող էր ինքնուրույն վերացնել կամ նվազեցնել գոնե տեղական նշանակության հարկերն ու տուրքերը: Այս առումով հատկապես աչքի է ընկնում Գեղարքունիքի մեծահամբավ իշխան Գրիգոր Սուփանը, որն իր կառուցած եկեղեցու քահանաներին ոչ միայն ազատում է «յարքունական ծանրութենէ և ի բեկարէ», այլև նրանց վճարում է «յիսուն դրամ ի տարոջն, որ լինի հնգեցիկս»<sup>130</sup>: Նշանավոր մեծահարուստ Ավետենց Սահմադինը «ի խալանէ եւ երրո՞րդ հարկէ ազատում է Մրենի, Արջոռոհիճի այգիները»<sup>131</sup>: Նույն Սահմադինը 1284 թ. հիշատակագրում է. «Գնեցի զՄրեն յիմ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանագրով եւ թողաք զՄրենոյ տասնակն հացին, որ ի շարեատն»<sup>132</sup>: «Հրամանաւ պարոն Սահմադինին,- կարդում ենք մեկ այլ վիմագրում,- <...> թողաք զՅաւշականին քահանայից զինչ հարկ որ կայր այգոյ, բամբակի»<sup>133</sup>: Մարգպան իշխանն իր չորս որդիների՝ Ասլանբեկի և այլոց հետ միասին Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցուն է նվիրում իր «հայրենեացն Յողջաբերդ այգի մի եւ :Ա: (1) գութանի հող՝ յար մնա (այսինքն՝ մշտապես) եւ ազատ յամեն հարկէ»<sup>134</sup>: Շարիատ հարկից ազատվում են Արուճի և Ավանի եկեղեցիները: Սահմադինը 1288 թ. գրում է. «Թողի զԱւշականս զհացի եւ զդարմանի շարիատն»<sup>135</sup>:

<sup>130</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 131:

<sup>131</sup> Վ. տ., էջ 116, տես նաև էջ 106:

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>134</sup> Դ., 6, էջ 85:

<sup>135</sup> Ս. Սաղումյան, Աշտարակ, Երևան, 1998, էջ 146- 147, 221:

Հացի շարիատից ազատվում են Աշտարակի Ծիրանավոր և ս. Մարինե եկեղեցիների սպասավորները<sup>136</sup>: Նույն կերպ են վարվում Գեշ մարդը, Հուսիկ ձեռնավորը և այլք<sup>137</sup>: Պաշտոնական անձինք, ժողովրդի ծանր վիճակը նկատի ունենալով, վերացնում են շարիատի հարկը<sup>138</sup>, որը, ըստ ուսումնասիրողների, նշանակել է «տոկոս, վաշխ, տուրք, հողային հարկ»<sup>139</sup>: Կ. Ղաֆադարյանի կարծիքով՝ շարիատը քնատուրք էր<sup>140</sup>: Խոսելով ժողովրդից գանձվող հարկերի ու տուրքերի մասին, նկատի ունենալով չունևոր մարդկանց սոցիալական ծանր վիճակը, դեռևս Աղուենի ժողովը Վաչագան Բարեպաշտ թագավորի համաձայնությամբ ընդունել էր մարդասիրական կարևոր որոշում՝ «Իսկ որոյ վար ու այգի ոչ է՝ (հարկերն ու տուրքերը) մի առցեն...»<sup>141</sup>:

Նվիրատվությունների ժամանակ պետական և տեղական հարկերից ազատելու բազմաթիվ փաստեր են գրանցված վիմական արձանագրություններում<sup>142</sup>:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 221:

<sup>137</sup> Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, 3, Երևան, 1977, էջ 503-504:

<sup>138</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 94. տե՛ս Կանոնը Վաչագանայ:

<sup>139</sup> Տես Աղվենի ժողովի 4-րդ հոդվածը: Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969 էջ 66:

<sup>140</sup> Կ. Ղաֆադարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 193:

<sup>141</sup> Տե՛ս Աղվենի ժողովի 4-րդ հոդվածը: Մովսես Կաղանկատվացի, էջ 66:

<sup>142</sup> Դ, 1, էջ 34, Դ, 3, էջ 213, 217, Դ, 4, էջ 123, Դ, 5, էջ 53, Դ, 6, էջ 90:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանում երկրի գյուղատնտեսության հիմնական ճյուղերը երկրագործությունը (դաշտավարությամբ հանդերձ) էին և անասնապահությունը, որոնք, իբրև կանոն, զարգանում էին օտարի լուծը թոթափելուց հետո միայն: Նոր հիմունքներով էր ձևավորվում ժառանգական խոշոր հողատիրությունը, որը նախանշում էր նաև առևտրի ու արհեստների զարգացում: Աստիճանաբար յուրացվում են «ի կորոդ» խամ ու խոսկան կամ լքված հողատարածքները, մի խոսքով՝ երկիրը զարթոնք է ապրում: Հանդես են գալիս մեծահարուստ մարդիկ հատկապես Զաքարյան իշխանների ազատագրած տարածքներում: Այս ամենի հետևանքով վերելք էին ապրելու նաև հոգևոր-կրթական և բարեգործական հաստատությունները, շենանալու էին վանքերն ու եկեղեցիները, որոնք հավատացյալ մեծահարուստներից ստանալու էին առատ շնորհաբաշխումներ ամենատարբեր եղանակներով ու ձևերով: Այս առումով առանձնանում են Հայաստանի տարբեր մասերում հանդես եկած մեծահարուստներ Ումեկը, Ճարը, Գեշ մարդը, Ավետենց Սահմադիներ, Տիգրան Հոնենցը և շատ ուրիշներ, որոնք պատմության մեջ հիշատակվում են իբրև հայրենամանվեր բարեգործներ: Սակայն այս պահին նպատակահարմար ենք համարում խոսել հատկապես Տիգրան Հոնենցի կարողության մասին, որի առթիվ վկայված է Անիի իր իսկ կառուցած տաճարի՝ Ս. Գրիգորի հարավային պատի արևելյան հարթության վրա փորագրված 75 տողանոց նվիրատվական արձանագրության մեջ: Նույնական բնագիրը տրվում է Հ. Օրբելու ընթերցմամբ, առանց վերծանության պայմանական նշանների:

## Ա. Տիգրան Հոնենցի նվիրատվությունը

«ԹՎԻՆ :ՈԿԴ: (1215) Շնորհիւն եւ ողորմութեամբ ԱՅ, յորժամ տիրեց քաղաքիս Անո հգար և տիեզերակալ ամիրսպասալար եւ մանդատութիւնսցես Ջաքարիս եւ որդի նորայ Շահնշահ, ես Տիգրան ծառայ ԱՅ, որդի Սմբատարենց Սուլեմա, յազգէն Հոնենց, վասն յերկարկենդանութեան տերանց իմոց եւ որդոց նոցայ շինեցի զվանքս սուրբ Գրիգորոյ, որ ի հիմն մատռան Ածածին կոչիւր, որ էր քարափն եւ մացառ տեղեալ էր, զոր իմ հալալ գանձով գնեցի ի հերենէտիրաց եւ բազում աշխատութեամբ եւ գանձով պարսպեցի շուրջանակի, շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյն Լուսաւորչին Գրիգորի եւ զարդարեցի բազում զարդիւք, փրկական նշանաւք, սուրբ խաչիւք ոսկիւք եւ արծաթիւք եւ պատկերագործ խատերով՝ զարդարեալ ոսկով եւ արծաթով եւ ակամբք եւ մարգրտաւ եւ կանթեղաւք ոսկի եւ արծաթի եւ նշխարաւք սրբոց առաքելոց մարտիրոսաց, եւ մասամբ Ածընկալ եւ տէրունական խաչին, եւ ամենայն ցեղ սպասք յոսկո եւ արծաթո եւ բազում զարդաւք: Շինեցի զամենայն ցեղ զբնակարան վանականաց եւ իշխանաց, եւ կարգեցի ի սմայ քահանայք պատարագողք մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տերանց իմոց Շահնշահի եւ որդոց իւրոց, եւ վասն թողութեան մեղաց իմոց, եւ ետու ընծայս ի վանքս սուրբ Գրիգորոյ հայրենիք զոր գնել էի գանձով, եւ վճռմամբ հայրենէտիրաց եւ զոր ես ի հիմնէ շինել էի զայսոսիկ՝ Գառոխոնեց գեղն կէսն, Քարիտին :Է: (7) դանկն, Մշակունեց կէսն, Կաղղուց կէսն, Յամաքծովն բոլոր, Խուզած Մահմուդի ի Կարուց յերկիրն ու Յընդոյ :Բ: (2) դանգն, Խաչորկանն հողերն եւ Փնդուկն, ի քաղաքիս հայրենիք բաղնիսն ու միլն ի Մողանիս, խանապարն կուղպակնովն ու Կամարակապ փնդուկն ու մարագն հետ բաղնեցն, Տէր Սարգսի ախոռն ու մարագն զոր գնեցի կալն եւ :Բ: (2) ակն ձիթահանք եւ ախոռնի ու մարագնի վանիցս, ի դռանս վանիցս առջեւ պահեզն ու լանջին չուրվի Գլիծորի դուռն ինչվի գետն ու գետեզերն, պահեզն զոր գնել էի եւ շինել Դվնա դռանն, կէս

ակն ջաղաց, քարվի մի բոլոր ու մին այլ քարվին շաբաթ :Բ: (2) ար, Գլիճորին ջաղաց :Ա: (1) քարվին շաբաթ :Բ: (2) ար ի Բէշքենակապէն ինչուրվի կարմունջն գետին կէսն իմ գնած է, Պապենց խանաբարն :Դ: (4) դանգն ու դռան կողպակն, բոլոր տներ Հատեցոնց, զուկակի, քաղաքիս դռանս բազում հողեր գնած, այգի :Ա: (1) Յերեսան, այգի :Ա: (1) Յոշական, այգի :Ա: (1) ի Կոշ, էգի :Ա: (1) Յարուն որ Մագոտն կոչի, այգի :Ա: (1) ի Մրեն, այգի :Ա: (1) ի Ծմակին, որ Կաթողիկէի հող կոչի, զայս որ գնած է, եւ այլ բազում գրաւկնած էր զոր ոչ արձանագրեցի, վանացս էի տվել ու թէ տերքն թափեն ոսկին վանացս զոր ուրիշ իմ անդարձագրին եմ գրել: Եւ զվանքն Բեխենց կոչեցեալ, զոր ես շինեցի եւ նորոգեցի, ընծայաւք փարթամացուցի ամենովն սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս հոգայ զորպիսութիւն: Արդ թէ որ ի մեծաց կամ ի փոքունց յիմոց կամ յաւտարաց, զոր ինչ արձանագրիս է, խաբանել ջանա կամ թէ իրք շորթէ յարդեանցս, որ ի սմա հաստատեալ է, կամ զյիշատակ զմեղուցեալ ծառայիս ԱՅ, խաբանէ զինչ եւ իցէ պատճառաւք, այնպիսին որոշեալ լինի ի փառացն որդոյն ԱՅ, եւ պատիժս զԿաենի եւ զՅուդաի ժառանգեսցէ, ի զլուխ իւր եւ երեք սուրբ ժողովոցն եւ :Թ: (9) դասուց հրեշտակաց նգովեալ եղիցի եւ մեր մեղացս համարս տացեն առաջի ԱՅ, եւ կամարարքն եւ հաստատուն պահողքն արինին ՅԱՅ: ԻՍՐԱԷԼ ԳՐԻԶ»<sup>143</sup>:

#### **Ինչպէս երևում է արձանագրութիւնից՝**

1. Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր եկեղեցու տեղում նախապէս եղել է Ս. Աստվածածին մատուռը,
2. Բնագիրն աչքի է ընկնում հատկապէս ոսկեղեն և արծաթեղեն իրերի նվիրատվությամբ,
3. Նվիրատուն Ս. Գրիգոր եկեղեցուն է շնորհել ձիթհանքեր՝ ամբողջովին կամ մասնակիորեն, մարագներ, ախոռներ, բաղնիք, կալատեղեր և այլն:
4. Արձանագրութիւնն աչքի է ընկնում նաև լեզվաոճական

<sup>143</sup> Դ, 1. էջ 62-63: Հմմտ. Հ. Մանանդյան, Զննական տեսություն, հ. Գ, էջ 156-157:

առումով: Օգտագործված են տեղական բարբառի կամ խոսվածքի բնորոշ արտահայտություններ (չուրվի, ինչվի, ինչուրվի, իգի, գրավկնել և այլն):

Կարևորն այն է, որ մեզ հայտնի է արձանագրությունը փորագրող վարպետի անունը՝ Իսրաեղ (Իսրայել) գրիչ:

Համանման նկարագրի ենք հանդիպում Մարմաշենի 1225 թ. վիմագրերում (տե՛ս «Հավելվածի» 21-22-րդ արձանագրությունները): Գրիգոր արքեպիսկոպոս Պահլավունին, պահպանելով քաղաքավարության ընդունելի կանոնները, նախապես նշում է «աստուածաւեր պատրոններ» աթաբակ Իվանեին և ամիրսպասալար Չաքարեի որդի Շահնշահին, որոնց հրամանով նորոգվել է Մարմաշենի վանքը: Հարգանքի տուրք է մատուցում Ապուղամր մագիստրոսի որդի տեր Գրիգոր եպիսկոպոսին, ապա նաև իր հարազատին՝ Խարիփին, իշխանաց իշխան Վահրամի թոռներին, որոնք ներկայացված են իբրև Գրիգոր Լուսավորչի շառավիղներ: Ապա հաջորդաբար մեկ առ մեկ ներկայացվում են այն բոլոր նվիրատվությունները, որոնք շնորհվել են այս հռչակավոր վանական միաբանության անդամներին՝ «հոլով գեղաւրեայս, այգեստանս, կուղպականի, ջաղացանի...» Վանական միաբանությանը հատկացնում են մի շարք գյուղեր՝ «լերամբ եւ դաշտաւք: Աւանդեցաք ի սա (իմա՝ Մարմաշենի վանքին)» հանձին վանահայր Երեմիայի՝ «գեղս եւ ագարակս գանձագինս՝ գԲագարանի գեղ եւ զիւր ագարակն, զԳողիսն եւ զՊորտանգն, զԱրագեճ (գուցե Արագեղ՞) եւ զԱգատայ, զԱզասմանէն եւ Եզնկայ եւ յԱշականի այգիք եւ երեք ջաղաց ի Դողս, ի յԱշտարակի այգի, ի Կարբոյ դաշտի այգի, ի Սերկելիի այգի, ի Վժան այգի, ի Մրենի այգիք, ի յԱնի տներ եւ կղպականի»: Նշվում է, որ Մարմաշենի վանքը «աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս գեղ արարեալ էր», իսկ կաթողիկէ եկեղեցին «բերդանման ամրացուցեալ էր»: Վանական միաբանությունը գտնվում էր «ի խաւարի սգաւորութեան՝ զրկեալ յամենայն գոյից մինչև յաւուրս յայտոսիկ», ապա «արի զաւրական» Խարիփի աջակցությամբ հեռացնում են վանքի տարածքը զբաղեցրած բնակիչներին, որից

հետո Մարմաշենի վանքը «եղեւ բնակարան սրբոց քահանայից եւ կրանատրաց»:

Պահլավունի իշխանները նույն 1225 թ. արձանագրությամբ վանական միաբանությանը շնորհում են «ոսկեղէն եւ արծաթեղէն» սրբազան մասունքներ, ընդ որում նաև «հայրենի գիւղ Ազատան», որը վերանվանվում է Տիրաշէն: Ապա ցավով արձանագրվում է, թե ինչպես Պահլավունիների արյունակիցը՝ մագիստրոս Խարիվը «մարտիրոսացաւ ի պատերազմի անարինաց», իսկ նրա եղբայր Գրիգոր եպիսկոպոսը, հանգուցյալի մարմինը հողին է հանձնում Մարմաշենի վանքում՝ իրենց նախնու՝ սպարապետ Վահրամ Պահլավունու կողքին<sup>144</sup>:

### **Բ. Գյուղերի, ազատականների և հողատերերի նվիրատվություն**

Վիմական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ են պահպանվել գյուղերի նվիրատվության մասին: Գյուղը նվիրաբերվում էր կամ ամբողջովին, կամ մասնակիորեն, այսինքն՝ նրա կես մասը<sup>145</sup>:

Գյուղերի նվիրատվության գործառնություն երբեմն նշվում է, որ գյուղը (նաև կալվածքը) տրվում է «ոչ ի հարկէ», «ոչ յաւագաց բռնութենէ» կամ «յարբելութենէ», այսինքն՝ հարբած վիճակում, այլ «վասն հոգու փրկութեան»<sup>146</sup>: Նվիրատվական պայմանագրում նշվում է օտարողի ցանկության մասին, թե ինչպես պետք է վարվել շնորհված գյուղի հետ հետագայում: 844 թ. կալվածագրերից մեկում հատուկ նշվում է, որ Դավիթ եպիսկոպոսը Նորաշինիկ գյուղը կարող է «ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել և զինչ կամք են՝ առնել մինչև յախտեանս ժամանակաց»<sup>147</sup>: Մոտավորապես նույն

<sup>144</sup> И. А. Орбели. Избранные труды, Ереван, 1963, с.443: Հմմտ. Հ. Շահխաբունյանց, հ. 2, էջ 521:

<sup>145</sup> Վ. տ. էջ 15, 16, 20, 28, 33, 57, 58, 104, 105: Հմմտ. Սարգիս Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 120:

<sup>146</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 152-153:

<sup>147</sup> Նույն տեղում:

պահանջներն են ներկայացնում Փիլիպե Բ<sup>148</sup> և Ջևանշեր<sup>149</sup> իշխաններն ու Քուպլիդուխտ իշխանուհին<sup>150</sup>։ Ընդհակառակն, Տաթև գյուղի նվիրագրում նվիրատու գահերեց իշխանը պատգամում էր «զգիտդ (Տաթևը) սահմանադ յեկեղեցւոյդ մի իշխեսցեն հեռացուցանել՝ մի վաճառել, մի փոխել, մի գրաւական դնել»<sup>151</sup>։

Հոգևոր հայրերն ամենուր արձանագրում էին, որ իրենց ունեց վաճքն ու հասութաբեր հաստատությունները ձեռք են բերել ամենատարբեր եղանակներով՝ «ոչ ի գրկմանէ և յափշտակութեանց», «ոչ ի գեղէ», այլ հիմնականում «հոգեցատուր» կամ «գանձագին» եղանակներով<sup>152</sup>։ Ի դեպ՝ «ոչ ի գեղէ» կապակցությունը Լ. Բաբայանի կարծիքով նշանակել է «համայնքի հողը»<sup>153</sup>։ Վիճական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան հողատարածքների նվիրատվության մասին<sup>154</sup>։

910 թ.. ավարտելով Եղեգնաձորի շրջանում գտնվող Քարկուփի (Խոտակերաց) վանքի կառուցումը, իշխանաց իշխան Աշոտի կինը՝ իշխանուհի Շուշանն իր որդիների հետ միասին վանքի սպասավորներին է նվիրում «զգեալս Արաստամուխ ի սուրբ ուխտս իւր սահմանովք զոր իւրեանց հարբն կերեալ էին վասն երանելի իշխանին եւ իմ՝ Շուշանի՝ Սիւնեաց տիկնոջ...»<sup>155</sup>։ Այս արարողությանն անձամբ մասնակցել է Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս պատմիչը<sup>156</sup>։

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 153։

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 158։

<sup>150</sup> Նույն տեղում, էջ 160։

<sup>151</sup> Նույն տեղում, էջ 151։

<sup>152</sup> Նույն տեղում, էջ 153։

<sup>153</sup> Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Երևան, 1964, էջ 535։

<sup>154</sup> Հողերի նվիրատվության մասին տես Վ. տ., էջ 18, 40, 55, 58, 94, 96, 100, 103, 110, 125, 165։ Երբեմն հիշատակվում է, թե քանի օրավար հող է նվիրաբերվում։ Մենք վկայություններ ենք գտել «:Ա: արավար» (Վ. տ., էջ 73), «քսան արավար» (Վ. տ., էջ 64), «30 արավար» (Վ. տ., էջ 158) «40 արավար» (Վ. տ., էջ 58) և այլն։

<sup>155</sup> Դ, 3, էջ 206-207, Ներդիր, արձ. թիվ 666։

<sup>156</sup> Նույն տեղում, էջ 215-216։

Պատմագիր Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ «յիշելով զունայնութիւն վայրկենի կենացս...», Նորավանքին է ընծայում «զՉվա գեղն իւր բոլոր սահմանաւքն ազատ յամեն աշխարհական հարկաց՝ ի դիւանէ ի խալանէ եւ յամեն չարէ, զոր գնել էի յիմ ախբարէն՝ Ջալալէն եւ տվել ի գինն :ԻԱ: (21) հազար դրամ եւ Փոշահանքն, զՄք Սահակ եւ զԱբասաշէն, եւ այլ ետու յիմ հալալ հայրենաբաժնէն ի Հրաշկաբերդ, զՔարկոփելեանքն իւր սահմանաւքն եւ յԵղեգնաձորին՝ զԱրատեսն իւր գեղովն եւ ամեն հայրենիքն ի մաս ժառանգութեան ի սբ ուխտս Նորավանհից հայրենիք անխախտ եւ անդաւի մինչեւ ի գալուստն Աստուծոյ...»<sup>157</sup>: Նույն Ստեփանոս Օրբելյանը Նորավանքի միաբանությանն է ընծայում «զԱրատես, որ մեր սեփական հայրենիք էր իւր ամեն սահմանաւք՝ գեղով...»<sup>158</sup>: Ինչպես տեսնում ենք, եթե Չվա (Չուա) գյուղը և մյուսները «գանձագին» էին, ապա Արատեսը, Հրաշկաբերդն ու Քարկոփավանքը կազմում էին պատմիչ-մետրոպոլիտի ժառանգական սեփականությունը, այսինքն՝ նրա «սեփական հայրենիքն» էին հանդիսանում: Վիճագրում հատուկ նշված է, որ Նորավանքին նվիրաբերված հիշյալ բոլոր գյուղերն ազատվում են «աշխարհական հարկէ»:

Շարունակենք: Պատմագրի հորեղբայր Սմբատ գահերեց իշխանը, ավարտելով Նորավանքի մեծ եկեղեցու գավթի կառուցումը, տեղի հոգևոր հայրերին տալիս է «:Բ: գեղ ի մք Նախավկայս զԱվէշ ու զԱնապատ և յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր կիրակնաջրովն»<sup>159</sup>:

Հովհաննեսի որդի Ստեփանոսը գրում է. «Գնեցի զԽորակերտ եւ զիւր գեղն, զայգին, որ ի Շղեր վանիցս յախտեան ի :ԿԱ: (61) սպիտակ սուլտանի»<sup>160</sup>: Սոփիա Սյունյաց տիկինը, ավարտելով Գնդեվանքի կառուցումը,<sup>161</sup> նրա սպասավորներին նվիրում է «գերկու գիւղ ի

<sup>157</sup> Նույն տեղում, էջ 125, արձ. թիվ 363:

<sup>158</sup> Նույն տեղում, էջ 125-216, արձ. թիվ 685.:

<sup>159</sup> Նույն տեղում, էջ 218-219, ներդիր, արձ. թիվ 692:

<sup>160</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 150, տես նաև՝ 155, 157, 168, 177 էջերը:

<sup>161</sup> Դ. 3, էջ 211:

ժառանգութիւն» նորահաստատ վանական միաբանությանը<sup>162</sup>: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում մի շարք գյուղեր է ստանում Հաղպատի վանքը<sup>163</sup>: Լիպարիտ Օրբելյանը, Նորավանքի Ս. Նախավկա եկեղեցին կառուցելուց հետո նրան նվիրում է երկու գյուղ. «զԱգարակի ձոր ու Տխարք իւր սահմանաւրն...»<sup>164</sup>: Մարմաշենի վանքը իբրև նվեր ստանում է «հայրենի գեղն Ագատա»<sup>165</sup>: Ինչպես նշեցինք, երբեմն նվիրաբերվում էր գյուղի միայն կեսը<sup>166</sup> Ոմն Կարապետ հավատացյալ, իր եղբայր Դավթի հետ միասին նշում է, որ «զմեր գանձագին գեղն՝ զՎահրամագեղ և զՂամազանցն իւրեանց ամէն հող ու ջրով... Կարբի զմեր գնած եւ զմեր ձեռատունկս այգին...որ սեփական հայրենիք էր եկեղեցոյս եւ ի չարէ եւ ի դառն բերմանց ժամանակին ելեալ էր ի վանացս...դարձուցաք, ընծայեցաք եւ պահարան զարդարեալ ոսկով եւ արծաթով...»<sup>167</sup>:

#### Գ. Զրադացների նվիրատվություն

Հասութաբեր հաստատությունների մեջ առանձին կարևորություն ունեին ջրադացները, որոնք նվիրաբերվում կամ վաճառվում էին ամբողջությամբ կամ մասնակիորեն<sup>168</sup>: Այսպես՝ Գրիգոր Սյունյաց վարդապետը նշում է, որ գնելով «զՀուներո ջաղաց ի հալալ արդեանց իմոց եւ ետու ընծա սբ Ածածնիս», ինպես նաև «զՅուրա հողն»<sup>169</sup>: Ապիրատի որդի Շարափշահը 1234 թ. գրում է, որ «ետու ի մեր սեփական եկեղեցիս (Բագնայրի - Լ. Ս.) ի սուրբ Աստուածածինս :Գ: (3) ակն ջաղաց ի Շիրակուանին (իմա՝ Շիրակավանին)»<sup>170</sup>:

<sup>162</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 191:

<sup>163</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 150, 155, 156, 168, 177, 194, 213:

<sup>164</sup> Դ, 3, էջ 211:

<sup>165</sup> Վ. տ. էջ 70-71:

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 56-57:

<sup>167</sup> Վ. տ., էջ 43: Գյուղերի նվիրատվությունների մասին տե՛ս նույն տեղում էջ 44, 47, 57, 70, 74, 95, 110, 131, Դ, 6, էջ 92, 136:

<sup>168</sup> Դ, 2, էջ 41:

<sup>169</sup> Նույն տեղում:

<sup>170</sup> Վ. տ., էջ 78:

Ջրադաց է ստանում նաև Հոռոմայրը, որի ընծայատուն նշում է, որ տալիս է իր «հայրենի ջաղացն, կողպակն, արտերը»<sup>171</sup>: Ոմն «Վարդան կրանատր», կառուցելով «Քարահատին ջաղացը», նվիրում է այն Տաթևի վանքի Սուրբ Առաքելոց եկեղեցուն<sup>172</sup>, Մարմաշենի վանքը ստանում է «յայնկոյս գետոյն ջաղացանի»<sup>173</sup>: Բագարանի վիմագրերից մեկում կարդում ենք, որ այս հանրահռչակ եկեղեցին նվիրատուներից ստացել է Մրենում մի ջրադաց<sup>174</sup>, ապա նաև «Ջրադացի բակ» - «Ջաղաց բակն շինեցաք եւ տվաք ի սբ կաթողիկէս»<sup>175</sup>: Առյուծ Հոգևորյանը Հոռոմոսի վանքին նվիրում է իր հայրենի կողպակը և ջրադացը, «յոր աւերման տաթարին ջաղալցալնիս աւեր և գրաւական էր. :Խ: (40) դահեկան տուի և զջաղացն թափեցի»<sup>176</sup>: Ինչպես տեսնում ենք, այդ ջրադացն ավերել էին թաթար-մոնղոլները և գրավի տակ էին դրել այն: Առյուծ Հոգևորյանը, վճարելով 40 դահեկան, զավթողներից հետ, վերցրել ջրադացը և նվիրաբերել Հոռոմոսի վանքին: Նվիրատվության եղանակով ջրադաց է ստանում Բագնայրի վանքը<sup>177</sup>: Արձանագրություններում վկայություններ կան, որ սեփական (տվյալ ազգատոհմին պատկանող) ջրադացներն անվանվել են «տնաջաղաց»<sup>178</sup>: Հաղպատի նշանավոր առաջնորդներից մեկը՝ տեր Սարգիսը 1086 թ. արձանագրության մեջ նշում է, որ իր կառուցած ջրադացը՝ նվիրատուի խոսքերով ասած՝ «արարի ազատադաց»<sup>179</sup>: (Պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանն այս արձանագրության բնագիրը ընդօրինակել է Մ. Բժշկյանից): Այժմ փորձենք կռահել, թե ինչ է նշանակում «ազատադաց»: Եզրույթը,

<sup>171</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>172</sup> Դ, 2, էջ 20:

<sup>173</sup> Վ. տ, էջ 70:

<sup>174</sup> Վ. տ., էջ 18:

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>177</sup> Նույն տեղում, էջ 104

<sup>178</sup> Դ, 5, էջ 28:

<sup>179</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 263 (քերված է Մ. Բժշկյանից), տես նաև Վ. տ., էջ 25:

ինչպես տեսնում ենք, բարդ է և կազմված է «ազատ» և «աղաց» բառերի միակցումից: Կարծում ենք, Սարգիս եպիսկոպոսի կառուցած ջրաղացն այդպես է կոչվել այն պատճառով, որ նրանից ազատորեն կարող էին օգտվել ոչ միայն վանական եղբայրության անդամները, այլև շրջակա գյուղացիական ընտանիքներն անխտիր: Հետաքրքիր է նկատել, որ մինչև վերջերս Սյունիքի մարզի Սիսիանի ենթաշրջանի Շաղատ գյուղում մի շարք ջրաղացների շարունակվում էին ավանդաբար կոչվել կառուցող ազգատոհմների անունով՝ Բայրամենց, Մուրադենց, Հաթոյենց, Կարախանենց, Դալագենց և Միրզոյենց և այլն<sup>180</sup>: Մի շարք ջրաղացներ ունեին Անիի (Գլիծորում), Բագարանի, Հառիճի, Գետիկի, Հոռոմոսի, Բագնայրի, Հոռոմայրի, Մարմաշենի, Սանահնի, Նորատուսի և այլ վանական միաբանությունները<sup>181</sup>: Վկայություններ կան, երբ նախկինում սխալ ձևով կառուցված ջրաղացները երբեմն քանդում էին և հիմնովին նորոգում այլ հիմունքներով: Սկզբնաղբյուրներում նշվում է, թե ինչպես Ջաքարե ամիրսպասալարը քանդել է տալիս Հոռոմոսի վանքի ջրաղացը, քանզի «... հակառակ ջրիս շինած էր և վերստին հաստատեցի զջուրս ի վանքս Հոռոմոսի»<sup>182</sup>:

Այժմ հանգամանորեն անդրադառնանք Գեղարքունիքի առավել ուշագրավ հուշարձանախմբերից մեկի՝ Վանեվանի 20 տողանոց արձանագրությանը, որն ուղղակիորեն առնչվում է խնդրո առարկա՝ ջրօգտագործման ոլորտին:

#### **Գ. Սղարաղես Շաղուի Բագրասունու 903 թ. վանեվանյան արձանագրությունը**

Բնագիրը փորագրված է Ս. Գրիգոր եկեղեցու գմբեթի թմբուկի հյուսիս-արևմտյան և արևմտյան կողերին: Ահա այն.

ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ, ՏԵՐԱՆՑ | ՏՐ, ՈՐԴԻ ԱՇՈՏԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ, Ի

<sup>180</sup> Գ. Խաչատրյան, Գ. Մուրադյան, Շաղատ, Երևան, 2003, էջ 28:

<sup>181</sup> Վ. տ., էջ 18, 43, 44, 47, 53, 57, 70, 110, 116, 131:

<sup>182</sup> Նույն տեղում, էջ 47:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՑԹԱԳԱՒՈՐԻ ՄԵԾԻ ՍԸՆՊԱՏԱՅ, ՀԱՐԱԶԱՏ  
ԵՂԲԱՒԻ ԻՄՈՅ, ԵՒ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ ՀԱՅՈՅ | ՀԱՅՐԱՊԵՏԻ  
ՅԵՒԱՆԻՍԻ, ԻՄԱՅԱՅ ԵՒ ԾԱՆԵԱՅ ԹԷ ԱՄԵՆԱՅՆ ՓԱՌԶ ԵՒ  
ՄԵԾՈՒԹԻՒՆ ԸՍՊԱՌԵԼՈՅ ԵՆ ԵՒ ՎԱՂԻՒ ԿՈՐԸՆՉԵԼՈՅ.  
ԵՒ ՄԵԾԱՓԱՓԱԳ ՏԵՆՉԱՆՈՎԶ | ՎԵՐԱԿԱՅՈՒ ԵՒ ՏԵՍՈՒՉ  
ԱՌՆԵԼՈՎ ԶԶՈՅՐ ԻՄ ՄԱՐԻԱՄ, ՍԻՆԵԱՅ ՏԻԿԻՆ ՅԻՒՐԻ-  
ՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ, Ի ՎԱՆԵՎԱՆԻ ՎԱՆՍ, ՏՈՒՆ ՄՅ.  
ԿԱՆԳՆԵԼ ՎԻՄԱՏԱՇՍ| ԿՈՓԱԾՈՎԶ, ՇԱՏԱԾԱԽ ԳԱՆՁԻԺ  
ԵՒ ՄԵԾԱԶԱՆ ՎԱՍՏԱԿՈՎԶ ԿԱՏԱՐԵԼ, | ԹԵՐԵՒՍ ԼԻՅԻ ԻՆՉ  
ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՆՄԱՒՈՒՐՆ՝ ՅՈՐԺԱՄ ԲԱՆՔՆ ԱՊԱՌԻՆ  
ԵՒ ԳՈՐԾԶ ԹԱԳԱՒՈՐԵՆ: ԵՒ ՏՈՒԱԶ Ի ՔԵՉ ՎԱՆԱՎԱՆՈՒ  
ՎԱՆԱԿԱՆ ՀԱՅՐ ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱԹԵԼ ԵՒ ՎԱՅԵԼԵԼ ԵՒ ՈՐ  
ԱՅԼ ՀԵՏ ՔՈ ԱՅԼ ՅԱԶՈՐԴԻՆ | ԵՒ ՊԱՇՏԱԻՆԵԱՅԶ ԽՈՐԱՆԻԴ  
ՅՈՐԺԱՄ ԺՈՂՈՎԻԶ ՄԻԱԲԱՆ ՅԱՂԱԹՄ՝ | ԵՒ ԿԵՐԱԿՐԻԶ  
ԱՆՄԱՀԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՅՆ՝ ՀԻՇԵՍՋԻԶ ԶԻՍ ԵՒ ԶԻՄՍՆ,  
ԶԻ ԱՐԱՍՅԷ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՈՂՈՐՄԱԾՆ ՄԾ: :Դ: ԳԵՂՈ  
ՍԱՀՄԱՆ՝ ԿՈԹԱՔԱՐ, ՇԱԽԱՌՆԱՀՈԼՆ, ԳԵՏԱՄԷՋՆ, ԿԹԱՆՈՅ.  
ԳԵՏԱՎԱՆԱՅ ԾՈՎՆ: ՄԿ: (260) ԴՐԱՄ, Ի ԿՈԹԱՔԱՐ :ՇԼ: (530) Ի  
ԲՈՏԵԼԵՅՆ :ՈԿ: (660) ՅԱՂԻԲՈՂԱՆԱՅ : ՋՂ: (990), Ի ԿԱՐԲԻՆ  
ԳԵ | ՏԵՐԷՆ ԵՒ ՆԱԵՐԷՆ: ՏՐ ԱԲԻՍՈՂՈՄ. ՏՐ ԱԹԱՆԱՍ|: Ի  
ԹՈՒԻՆ ՀԱՈՅ: ՅԾԲ: (903): ԱՄՊԱՏ ԹԱԳԱՒՈՐ ԱՍՏ ԱՍՏ|ՈՒԾՈՎ  
ԲԵՐԱԻ ԶՈՒՐՍ ՅՈՆՃՈՌ... ԵՆ | ԱՅ, ԴԱԹԻ ԶԵՌԱԻԶ ԵՒ  
ՄԻԱԲԱՆԱԻԶ, ԶՈՐ ՅԱՌԱԶ ԲԵՐԱԾ ԷՐ. ԱԾ ՈՂՈՐՄԻ<sup>183</sup>:

«Արձանագրության վերջին, ջուր բերելուն վերաբերող մասը հավե-  
լում է. գրված է անփույթ, տառերի սղումներով և միացումներով. բայց  
և ոչ շատ ուշ առաջինից, իր բովանդակությամբ այն կարելի է անջատ  
համարել առաջինից», - գրում է Ս. Բարխուդարյանը:

Իրոք այս հատվածը, ինչպես նաև «ՏՐ ԱԲԻՍՈՂՈՄ, ՏՐ  
ԱԹԱՆԱՍ» անունները բացակայում են Ստեփանոս Օրբելյանի  
«Պատմութիւն տանն Սիսական» մատյանում: Պատմիչը դրանց

<sup>183</sup> Դ. 4, էջ 121-122:

փոխարեն ավելացրել է անեծքի բանաձևը. «Որում մի որ իշխեսցե  
հակառակել: Եւ թէ յանդգնի որ՝ յ318 հայրապետացն նգովեալ եղիցի  
և մասն և բաժին զՅուդային առցէ. ի թուիս Հայոց ՅԾԲ (352)»<sup>184</sup>:

Ստեփանոս Օրբելյանն այն եզակի պատմիչներից է, որ իբրև  
սկզբնաղբյուր օգտագործել է վիմագրերը, սակայն, ինչպես նկատում  
է Գրիգոր Գրիգորյանը, բովանդակությունը չխաթարող «աննշան  
խմբագրական շտկումներով»<sup>185</sup>:

Օրինակ՝ բնագրի «:Դ: գեղո սահման՝ Կոթաքար, Շաւառնահողն,  
Գետամէջն, Կթանոց, Գետավանաց ծովն» շարքում Ստեփանոս  
Օրբելյանը Կոթաքարից հետո ավելացրել է «Աղաբոյ վանսն»,  
այսինքն՝ թվարկել է «հինգ գեղոց սահման»<sup>186</sup>:

Ըստ երևույթին Աղաբոյ վանքը պատմիչի մետրոպոլիտության  
շրջանում է ներառվել Վանեվանի վիճակի մեջ: Մենք հակված չենք  
կարծելու, թե խնդրո առարկա տեղանունը արձանագրությունը սխալ  
վերծանելու հետևանք է:

Թվարկված այս գյուղերից հայտնի է Կթանոցը, որը Վանեվանն է  
(ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանի Արծվանիստը):  
Իբրև բնակավայր այն հիշատակվում է մենաստանի շինարարության  
հանգամանքների կապակցությամբ<sup>187</sup>, ինչպես նաև Տաթևի վանքին  
հարկատու գյուղերի ցանկում՝ 7 չափ հարկով<sup>188</sup>: Հարկաչափի միա-  
վորից կարելի է կոտակել, որ Կթանոցը եղել է փոքր գյուղ:

Շավառնահողն թերևս հիշատակված է Արծվանիստ գյուղից դեպի  
հարավ գտնվող սահմանախաչի արձանագրության մեջ՝ Շաւհարվ-  
նով ձևով, ինչպես ենթադրում է Ս. Բարխուդարյանը<sup>189</sup>:

Սահմանախաչը կանգնեցվել է 1275 թ. Շավառնահողն և Անմեռ  
գյուղերի սահմանաբաժան վայրում:

<sup>184</sup> Նույն տեղում:

<sup>185</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, 1973, էջ 95:

<sup>186</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 131:

<sup>187</sup> Նույն տեղում:

<sup>188</sup> Նույն տեղում, էջ 373:

<sup>189</sup> Դ, 4, էջ 120:

Արձանագրության մեջ հիշատակված տեղանունները պարզելու համար մեծ ջանքեր են գործադրել նախորդ ուսումնասիրողները: Օրինակ, Մ. Սմբատյանցը Կոթաքարը նույնացնում է Կոթ գյուղաքաղաքի հետ: Նա գրում է. «... մինչև ներքին Ադիյանան գիտն՝ որ ի հնումն Կոթ գիւղաքաղաք կամ Կոթաքար»<sup>190</sup>: Նույն ժամանակաշրջանի (851-901թթ.) մեկ այլ արձանագրության մեջ, որը փորագրված է եղել Մաքենյաց վանքի արևելյան և արևմտյան պատերին<sup>191</sup> Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանը վանքին նվիրել է «:Մ: (200) դրամ ի Կաթկայ»<sup>192</sup> ուրեմն Կոթը պատկանում էր նրան, և Շապուհ Բագրատունին ինքնիշխանի իրավունքով միայն կարող էր Կոթաքարից ստացվող շահույթի որոշակի մասը հատկացնել Վանեվանին: Որ Կոթը Սյունյաց Գրիգոր Սուփան 2-րդի ժառանգական սեփականությունն է եղել, հավաստվում է նաև Կոթա ս. Աստվածածնի շինարարական արձանագրությամբ. «...քաղաքագիղս Կոթա՝ ի կացուածի իմոց նախնեացն...»<sup>193</sup>: Սմբատյանցը չի նշում օգտագործած աղբյուրները, ինչի հիման վրա կարելի կլիներ հանգել նման եզրակացության:

Տեղագիրը արձանագրության վերջին մասը այլ կերպ է վերծանել՝ Գետավանաց ծովն տեղանունից առաջ ավելացնելով ի նախդիրը. «ի Գետավանաց ծովէն :ՄԿ: դրամ»<sup>194</sup> հետևաբար «ի Կոթաքարէն» կապակցությունը մնում է անավարտ: Բացի դրանից՝ նա Շավառնահոլն վերծանել է Շաւարնահոլն<sup>195</sup>, ըստ երևույթին մտածելով, որ դա բարդ բառ է՝ վերջին հոդ բաղադրիչով:

Վանեվանի խնդրո առարկա արձանագրությունը վերծանել և հրատարակել են նաև Շահխաթունյանցը և Ջալալյանցը: Առաջինը գրում է, որ, անձամբ ընդօրինակելով արձանագրությունը, համեմատել

<sup>190</sup> Հմմտ. Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 563:

<sup>191</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 131:

<sup>192</sup> Նույն տեղում:

<sup>193</sup> Նույն տեղում:

<sup>194</sup> Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 563:

<sup>195</sup> Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, 2, Էջմիածին, 1842, էջ 251:

է Ստեփանոս Օրբելյանի ընթերցվածի հետ և գտել «գանազանութիւն ի միջի՝ մանաւանդ ի կալուածսն նուիրանաց», ուստի առաջարկում է իր վերծանությունը<sup>196</sup>: Սակայն ինքը ևս կատարել է որոշ աղավաղումներ և բացթողումներ: Արձանագրության վերջին մասում 15-րդ տողից «:Դ: գեղո սահման» կապակցությունից հետո ավելացրել է «դրամք» բառը, որ 17-րդ տողի առաջին բառն է /առանց ք տառի/: Բնագրից նա հանել է «Կոթաքար, Շավառնահողն, Գետամեջն, Կթանոց, Գետավանաց ծովն ՄԿ:» բառաշարքն, այսինքն 16-րդ տողը, որն, ըստ երևույթին, կարդալու ժամանակ սարդել է աչքից:

Ջալալյանցը ևս արձանագրության սկիզբը ճիշտ է ընդօրինակել, թեև վերջին մասում նույնպես աղավաղել է: 11-րդ տողում նա յաջորդին բառը վերծանել է առաջնորդին, 15-րդում Շավառնահողն՝ Շաւարնոլն, Կթանոց, Գետավանաց ծովն՝ Կըանոց գետ, Սևանայ ծովն, իսկ ՄԿ թվականը կարդացել է Մ գրելով երկու հարիւր. մնացած թվերը մեջբերում է ստույգ կերպով՝ ՇԼ, ՈԿ, ՋՂ<sup>197</sup>:

Շապուհ Բագրատունու այս արձանագրությունը մանրամասն ծանոթագրություններով ներկայացնում է նաև Դևոնդ Ալիշանը<sup>198</sup>: Մեծանուն հայագետը օգտվել է Շահխաթունյանցի վերծանությունից, բայց ծանոթ է եղել նաև Ջալալյանցի ընդօրինակությանը: Ուստի դրանք համեմատելով Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մեջ գետեղված բնագրի հետ՝ կարծում է, որ կավածների շնորհիվ մասը Ջալալյանցի մոտ «ընդօրինակեալ է աղաւաղանօք» և վկայակոչում է պատմիչի «սակաւ ինչ երկարագոյն եւս բանիւք» արտահայտությունը. «Եւ ետու հինգ գեղոց սահման. Կոթաքարն, Աղաբոյ-վանսն, Շավառնահողն, Գետամեջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, ՄԿ (260) դրամ ի Կարբին գետերէն և նաւերէն...»: Նա արձանագրությանը կցել է նաև դրան հաջորդող տողը. «Աստ կան ի շիրմի աստուածագգեաց տէր Սողոմոն և տէր Աթանաս, Սմբատ Բագրատունի»<sup>199</sup>:

<sup>196</sup> Հ. Շահխաթունյանց, հ. 2, էջ 521:

<sup>197</sup> Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 120:

<sup>198</sup> Դ. Ալիշան, Սիսական, էջ 60:

<sup>199</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 249:

Ալիշանը, անդրադառնալով արձանագրության բնագրում նշված տեղանուններին, փորձում է տալ դրանց տեղադրությունը, բայց դանդաղ մասամբ է հաջողվել, որովհետև բացի Կթանոցից և Շավառնահովից, մատենագրական և վիճագրական աղբյուրներում մյուսները չեն հիշատակվում: Նատարբերում է Ստորին Ալուչալու և Ստորին Կթանոց գյուղերը և Կոթաքարը տեղադրում է ներքին Ալուչալուի տեղը. «Երեք Ալիչալու գետոք են... Ստորին թուի կոչեցեալ ի հնումն Կոթաքար գիւղ, որ ընդ այլոց չորից տուաւ ի կալուած Վանեվանայ...»<sup>200</sup>, իսկ Ստորին Կթանոցի մասին գրում է. «...այլ հռչակավոր քան զայս էր Ստորին Կթանոցն, որ է բուն Վանեվան գյուղ, մոռնաւ եւ եթ հեռի ի ծովէն՝ յարեւմտեան գետեզրն,...»<sup>201</sup>: Բայց իրականում Ներքին Ալուչալուն հենց Կթանոցն է, որը, ինչպես արդեն ասել ենք, հավաստում է Ստեփանոս Օրբելյանը<sup>202</sup>: Ղ. Ալիշանը, հետևելով Ջալալյանցին, Ներքին Ալուչալուից դեպի հարավ մոտ հինգ կիլոմետր հեռավորությամբ գտվող «Վանքով Խարաքա» կամ «Խըրքեր»<sup>203</sup> գյուղատեղում տեղադրում է Վերին Կթանոցը, իսկ այդտեղի մենաստանը համարում Ստեփանոս Օրբելյանի հիշատակած «միւս Վանեվանը»<sup>204</sup>: Այս կարծիքը, որ գոյություն է ունեցել 2 Կթանոց, ընդունելի է համարում նաև Ս. Բարխուդարյանը: Սա հավաստվում է նաև Արատեսի վանքի 1301 թվականի արձանագրությամբ և «Ջամբռի» վկայությամբ: Ըստ այդ արձանագրության՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը (պատմիչ) իր *«սեփական վիճակէն ի Գեղարքունոյ՝ զգեղն Վանեվան, զԿիսրանոցն...»*<sup>205</sup> նվիրաբերում է վանքին, իսկ «Ջամբռի» հեղինակը՝ Սիմեոն կաթողիկոս Երևանցին Մաքենյաց, վանքի հարկատու գյուղերի մասին գրում է, որ «Ունի զվիճակ ի Գեղարգունոյ նահիէն, ի կողմն Արեգունոյ... զԿէտանոց,

<sup>200</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 60:

<sup>201</sup> Նույն տեղում:

<sup>202</sup> Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 461:

<sup>203</sup> Դ, 4, էջ 120-121:

<sup>204</sup> Դ, 3, էջ 126:

<sup>205</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 249:

գՎանեվան...»<sup>206</sup>: Երկու դեպքում էլ Վանեվանը և Կթանոցը հիշատակվում են որպես առանձին գյուղեր, հետևաբար, բացի մեզ հայտնի Վանեվան-Կթանոցից, գոյություն ունեւ մեկ ուրիշ Կթանոց: Ինչ վերաբերում է հիշատակված մյուս տեղանուններին, ապա Ալիշանը Գետավանաց ծովն ու Աղաբովանացն ծովը (ըստ արձանագրության՝ յԱշիբողանակ) համարում է, որ «իցեն թերևս լճակք փոքունք ի գլուխ յորոյն»<sup>207</sup>: Առաջինը, իրոք, կարելի է լճակ համարել: Երբ համեմատում ենք բնագիրը և Օրբելյանի վերծանությունը, նկատում ենք մի հետաքրքիր փաստ՝ արձանագրության մեջ թվարկվում է հինգ տեղանուն՝ Կոթաբար, Շավառնահոլն, Գետամեջն, Կթանոց, Գետավանաց ծովն, բայց նշվում է «Դ գեղո սահման»: Օրբելյանի մոտ ևս գյուղերի ցանկից դուրս է մնում մի տեղանուն՝ Կոթաբարն, Աղաբոյ վանսն, Շաւառնահոլն, Գետամեջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, բայց՝ «հինգ գեղոյ սահման»: Երկու դեպքում էլ անուշադրության պատճառով միևնույն սխալը թույլ տալ չէր կարող: Մնում է հանգել այն եզրակացության, որ թվարկածներից մեկը գյուղ չէ, իսկ «Գետավանաց ծով»-ի երկրորդ բաղադրիչը մեզ հիմք է տալիս համաձայնել Ալիշանի ենթադրությանը և Գետավանաց ծովը համարել լճակ: Երկրորդ դեպքում դժվարանում ենք «յԱշիբողանաց»-ի (ըստ Օրբելյանի և Ալիշանի, յԱշիբոյ վանացն ծով է) վերաբերյալ որևէ կարծիք հայտնել, քանի որ պատմիչը մեկ գրում է Աղաբոյ վանսն, մերթ յԱղաբոյ վանացն ծովէ: Մնում է համաձայնել Ալիշանի ենթադրությանը՝ հավելելով, որ կար մեկ նույնանուն գյուղ: Ա. Աբրահամյանը «յԱշիբողանաց»-ի ծագումը կապում է «աշիբողանք»-ի հետ. «Կարելի է ենթադրել, գրում է նա, որ «աղաբոշոն» բառը «կրոնավորի վերնագգեստ» իմաստով (հունարենից է): Այդպիսի անվանումով հավանաբար դրամ է նախատեսվել եկեղեցական պաշտոնյաների զգեստների համար»<sup>208</sup>: Կարծում ենք՝ Օրբելյանի

<sup>206</sup> Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Երևան, 2003, էջ 395:

<sup>207</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 60:

<sup>208</sup> Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 461:

մման քաջատեղյակ անձը, որը հրաշալի գիտեր կրոնի և եկեղեցու պատմությունը, հոգևոր օջախների օգտին գանձվող տուրքերի մասին, անշուշտ, կանդրառնար մման հարկի գոյությանը:

Արձանագրությունը հրապարակել է մաս Լալայանը: Ցավոք, մա նույնպես կատարել է որոշ տարբերություններ, խմբագրական անհարկի շտկումներ /ամենայն-ամ, յիւրում-յիմում, Կոթաքար-Կոթայքարն, անմահական-յանմահական և այլն<sup>209</sup>:

Այս արձանագրությանն անդրադարձել է մաս Ս. Հակոբյանը: Նա գրում է, թե իբր Շապուի Բագրատունին, ի թիվս այլ հասութաբեր հաստատությունների, վանքին է նվիրել մաս յոթ ձկնորսարան<sup>210</sup>: Սակայն բնագրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնտեղ ձկնորսարանների մասին խոսք չկա:

Այժմ արձանագրություններում հիշատակվող անձանց մասին՝ համառոտ:

**Շապուի Բագրատունի** - Աշոտ Առաջին Բագրատունի թագավորի կրտսեր որդին է, Հայաստանի սպարապետն ու իշխանաց իշխանը: Մահացել է Սմբատ Առաջինի օրոք՝ մինչև 914 թ.: Նա մաս կրում էր «տերանց տեր» տիտղոսը: Ըստ Ռ. Մաթևոսյանի՝ «տերանց տերը» թագավորի հրամանով կարգավորում էր Բագրատունի և մյուս գահերեցների (այսինքն՝ Սյունիքի, Վասպուրականի և մյուս «տերերի») փոխհարաբերությունները հայոց թագավորի հետ<sup>211</sup>:

**Աշոտ** - Աշոտ Առաջին Բագրատունի թագավորն է՝ Բագրատունիների հարստության հիմնադիրը: Ծնվել է 819 թ., 855 թ. դարձել է հայոց սպարապետ: Մահմադ-Ջաբր ամիրապետից 858 թ. ստացել է իշխանաց իշխանի տիտղոս, իսկ Ալ-Մութաուաբիլ Ալ-Աբբասի խալիֆը 861 թ. նրան նշանակել է Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի, Ադվանքի) կառավարիչ: 886 թ. թագադրվել է Հայոց թագավոր:

<sup>209</sup> Ե. Լալայան, Նոր Բայազետի գավառ. նշանավոր վանքեր՝ Վանեվանու վանք, Ազգագրական հանդես, գիրք 24, Թիֆլիս, 1913, էջ 52:

<sup>210</sup> Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 170:

<sup>211</sup> Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչա-քաղաքական կարգը, Երևան, 1990, էջ 103:

Մահացել է 890 կամ 891 թվականին:

**Սմբատ (Սմբատ)** - Աշոտ Առաջինի ավագ որդի Սմբատ Առաջին Բագրատունի թագավորն է: Գահ է բարձրացել 891 թ. և իշխել մինչև 914 թվականը: Ամբողջ կյանքն անցկացրել է արտաքին ու ներքին պատերազմներում: Ազատագրել է Դվինը և երկրի այն բոլոր տարածքները, որոնք մահմեդականների ձեռքն էին անցել: Վերջում ստիպված է եղել անձնատուր լինել Ատրպատականի ամիրա Յուսուֆ իբն աբու Մաջ Դեվդադին, բայց չորանալով հավատը՝ 914 թ. նահատակվեց:

**Յեախա (Հովհաննես)** - Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչն է, արժանակալել է 898-929 թթ.:

**Մարիամ, Սիրենաց տիկին** - Աշոտ Առաջին Բագրատունու դուստրը, Սմբատ Առաջին թագավորի և Շապուհ Բագրատունի սպարապետի քույրը, Սյունյաց մեծ իշխան Վասակ Գաբուռի կինը, Գրիգոր Սուփան 2-րդի, Սահակի և Վասակի մայրը: Կառուցել է Սևանի և այլ եկեղեցիներ: Հալածվելով Յուսուֆ ամիրայից՝ պանդխտել է Գարդմանում և ալյուր, մահացել է 911 թ.:

**Հայր Աբրահամ** - եղել է վանքի վանահայրը:

**Տեր Աբխտղոս, տեր Աթանաս** - արձանագրությունում գործարքի վավերացման ժամանակ հանդես են եկել որպես վկաներ: Հավանաբար, սրանք վանքի հեղինակավոր միաբաններից են:

Արձանագրության «*յիւրում իշխանութեան*» կապակցությունը ցույց է տալիս, որ լճափնյա այդ տիրույթները, ընդ որում, Վանեվանը պատկանել է Մարիամ իշխանուհուն, այսինքն՝ Սյունյաց գահերեցության (Գեղարքունիքի ճյուղի) անքակտելի մասն էր:

Այժմ փորձենք մեկնաբանել նվիրագրում գործածված «*դրամ*», *ի «գեւորէրէն»* և «*նաւորէն*» բառերի իմաստները:

Միջնադարյան Հայաստանում «դրամ» եզրույթը կարող էր նշանակել և՛ ոսկի, և՛ արծաթ փող (հազվադեպ՝ նաև պղնձե), սակայն ավելի հաճախ կիրառվել է երկրորդ իմաստով: Ոսկե դրամը վիմագիր

և ձեռագիր աղբյուրներում, չնչին բացառությամբ, անվանվում է դեկան կամ դահեկան<sup>212</sup>, որն իր արժեքով հավասարվում էր տասը սպիտակի (արծաթի):

Խնդրո առարկա բնագրում «դրամ» եզրույթը ենթադրում է արծաթե փող՝ սպիտակ: Համոզվելու համար՝ բերենք մի քանի օրինակ, որտեղ նույն արժեքներն արտահայտված են թե՛ դրամ և թե՛ սպիտակ նշանակությամբ: Այսպես՝ 1312 թ. Գրիգոր Դովիյան իշխանը «ՌՇ: (1500) սպիտակով այգիներ է գնում և նվիրում Նորավանքին, որի դիմաց ստանում է վեց պատարագ<sup>213</sup>, նույն ժամանակաշրջանում Խալաշահի դուստր Խաթունը «:Յ: (300) սպիտակ»-ով այգի է ձեռք բերում Արփայում և ընծայում վանքին, որի համար ընդունում է 2 պատարագ<sup>214</sup>, Լուսերեսը նվիրաբերում է  $\overline{\text{սբ}}$ . Աստվածածնին «: Մ: (200) սպիտակ» և փոխարենը տեր դառնում 2 պատարագի, իսկ ըստ Անիի 1058թ. արձանագրության՝ Գրիգորը «:Ն: (400) դրամ ընծայաբերում է  $\overline{\text{սբ}}$ . Առաքելոցին՝ պատվիրելով 3 պատարագ<sup>215</sup> արժողությամբ ավետարանը»:

Այս օրինակներում «դրամ» և «սպիտակ» եզրույթներով արտահայտված են միևնույն արժեքները՝ ժամ-պատարագները, որոշակի տարբերություններով, ըստ Թ. Ավդալբեկյանի «Հայաստանում ուշ միջնադարի (և ոչ միայն ուշ միջնադարի - Լ. Ս.) ժամ-պատարագներն ունեցել են իրենց սակագինը. <...> ժամ-պատարագների գներն են՝ ցածից 5 դահեկան ու բարձրից 75 դահեկան...»<sup>216</sup>: Միջին սակագինը 20-25 դահեկան է կամ 200-250 դրամ սակագնի տատանման սահմաններում:

Մենք ուղղակի փաստեր ունենք պատարագների առքուվաճառքի մասին: Միսիանի Սյունի վանքի վիմագրերից մեկում կարդում ենք, որ «Գարդա (Գարդ գյուղը Կապան-Քաջարան մայրուղու աջակողմ-

<sup>212</sup> Թ. Ավդալբեկյան, Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ, Երևան 1927, էջ 33:

<sup>213</sup> Դ, 5, էջ 28:

<sup>214</sup> Դ, 3, էջ 223:

<sup>215</sup> Դ, 1, էջ 13:

<sup>216</sup> Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ. էջ 33:

յան Գեղվաձորի հովտում է) պատրիկի որդի Շապուհը՝ իր բառերով ասած է «Ի Սենի (իմա՝ Սիւնի) վանից սուրբ եկեղեցոյս գնեցի ար մին ժամ ի Ծառգարդարի քառասնոցն»<sup>217</sup>:

**Գետերէն** բառը այստեղ կարող է նշանակել ջրանցքներ, քանի որ արհեստականորեն հանված ջուրն ինչպես ավատատերերի, այնպես էլ վանքերի սեփականությունն էր: Բնական վիճակում եղած ջրերը (վտակ, աղբյուր, անձրևաջուր, գետ), ըստ Գրիգոր Գրիգորյանի, դեռևս մասնավոր սեփականություն չէին համարվում, և թերևս ամբողջ երկիրն ու նրա ընդերքը պատկանում էին թագավորին: Ուրեմն այն կարծիքը, թե ջուրը նույնիսկ բնական վիճակում առանձին ավատատերերի և վանքերի մասնավոր սեփականությունն է եղել, համոզիչ չէ<sup>218</sup>:

Այս կապակցությամբ խնդրի մեջ հստակություն է մտցնում Մխիթար Գոշը: Նա «Վասն թագաւորաց Հայաստանի եւ որք ընդ ձեռամբ նոցա» հոդվածում գրում է. «Հող միայն է թագաւորին և իշխանի և ոչ ջուր»<sup>219</sup>: Այս իրողությունը համոզիչ կերպով մեկնաբանել է Սմբատ Սպարապետը. «Չէ այն ջուրն քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական»<sup>220</sup>:

Ինչ վերաբերում է «ի Կարբին **նաւերէն...**» կապակցությանը, ապա պետք է նկատել, որ Ղևոնդ Ալիշանը Կարբին տեղադրում է Սևանի ափին<sup>221</sup>: Նույն հարցի առիթով՝ Ա. Աբրահամյանը գրում է. «Եթե խոսքը վերաբերում է պատմական Կարբի գյուղին (այժմ՝ Աշտարակի շրջանում), ապա այնտեղ նավեր լինել (նրա մերձակա ձորով անցնող Զասախ գետը նավարկելի չէ) չէին կարող: Այստեղ «նաւ» բառը մեկ այլ իմաստով է գործածված՝ «ծառի հաստ բնից պատրաստված խողովակաձև հարմարանք, որի միջով ջուրն ուղղվում է ջրաղացի

<sup>217</sup> Դ. 2, էջ 90:

<sup>218</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 114-115:

<sup>219</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 304:

<sup>220</sup> Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գունդստաբլի), (Կիլիկեան դատաստանագիրք 13-րդ դարի), ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Արսեն վարդապետ. Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1918, էջ 20:

<sup>221</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 60:

քափանիվի վրա և պտտեցնում այն»։ Այս իմաստով բառն այսօր էլ դեռ կենդանի է մեր շատ խոսվածքներում (տեղ-տեղ նով ձևով)։ Իսկ դա էլ փոխաբերաբար կարող էր նշանակել «ջրադաց», այսինքն՝ վանքի համար եկամուտ է սահմանվել ջրադացներից<sup>222</sup>։

Նկատենք, որ Բագրատունիների տիրույթների սահմանների մեջ մտնող ոչ մի նավարկելի գետ չկար։ Որ «նաւեր» բառն ավելի շուտ երկրորդ՝ բարբառային իմաստով է գործածված, համոզում են նաև Գանձասարի վանքի երեք արձանագրությունները, որոնցում այդ բառը գործածված է «նով» ձևով։ Առաջին երկուսում հատուկ անվան իմաստ ունի *հոռ* բառի հետ՝ «...տվեց նովերին հոռ»՝ և «Վերին նավերին հոռ» որպես նվիրաբերվող առարկաներ։ Երրորդ վիճագրում հատակ երևում է *նով* բառի իմաստային աղերսը ջրադացի հետ։ Բերենք մի հատված այդ արձանագրությունից. «Յուսովն Այ ես Դեսում, որդի Սիսաբին, ամուսին իմ Մամա միաբանեցաք սբ ուխտիս եւ տվաք սբ. Գերգիա ի մեր հայրենեց նովս։ դ. . . ամերածու սբ Գերգ ի մեր տնաջադաց իւր ժամ...»<sup>223</sup>։

Նշենք, որ Ս. Հակոբյանը *նաւեր* բառը բացատրում է որպես առագաստանավեր<sup>224</sup>։

Այժմ գատորոշենք արձանագրության բնույթը։ Մինչ այժմ բոլոր ուսումնասիրողները, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են Շապուի Բագրատունու քննարկվող բնագրին, այն համարել են շինարարական-նվիրատվական, քանի որ, վանքի շինարարությունից զատ, Վանեվանին նվիրաբերվել են նաև չորս գյուղ՝ Կոթաբար, Շաւառնահոլն, Գետամէջն, Կթանոց։ Սակայն արձանագրությունն ունի նաև կանոնական բնույթ, որովհետև Շապուի Բագրատունին այդ չորս գյուղը հաստատել է որպես Վանեվանի հոգևոր վիճակ, քանի որ, ինչպես նկատում է Գրիգոր Գրիգորյանը. «Վանքերին նվիրաբերված գյուղերն ու կալվածները, որպես կանոն, ազատվում էին արքունիքին և

<sup>222</sup> Ջրադացների նվիրատվությունների մասին տես Վ. տ. էջ 8, 9, 18, 43, 44, 47, 51, 53, 57, 74, 94, 104, 110, 131։

<sup>223</sup> Դ. 5. էջ 28։

<sup>224</sup> Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, էջ 464։

տեղական ֆեոդալներին տրվող հարկերից և այլնս հարկադրման չէին ենթարկվում: ... Այդ նշանակում է, որ նվիրատուները հրաժարվում էին իրենց օգտին գանձվող հարկերից ու տուրքերից՝ հօգուտ նոր տերերի: Այսպիսով, արքունիքին կամ առանձին ֆեոդալին պատկանած գյուղը հարկադրվում էր կրոնավորների կողմից, այսինքն՝ հարկահավաքման, ինչպես նաև տերերի համար կատարվող պարտավորություններից օգտվելու մենաշնորհը, հավանաբար նույն սկզբունքներով, անցնում էր հոգևոր հաստատությունների ղեկավարությանը»<sup>225</sup>: Հետևաբար, Շապուի Բագրատունին, եթե նվիրում էր այդ գյուղերը, «:ՄԿ: դրամ ի Կոթաքար» չէր հատկացնի նույն վանքին: Մենք ուշադրությամբ ուսումնասիրել ենք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի բոլոր հրատարակված պրակների նվիրատվական արձանագրությունները և չենք հանդիպել մի ընծայագրի, որտեղ գործածվի «ետու սահման» արտահայտությունը: Այդ նվիրագրերում միշտ նշվում է «ետու... ի ժառանգութիւն», «ետուն նուէրս», «ետու ընծա», «միաբանեցաք եւ տվաք»<sup>226</sup>: Կարող է նշանակել, որ գյուղը տրվում է «բոլոր սահմանաւքն»<sup>227</sup>, բայց ոչ մի դեպքում «գեղոյ սահման»: Վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. Ստեփանոս Օրբելյանը խմբագրել է արձանագրությունը և գյուղերի ցանկում ավելացրել «Աղաբոյ վանսն»:

Արձանագրությունում հիշատակված գյուղերից հայտնի են Վանեվանը և Շավառնահողը, մյուսների տեղադրությունը չի հաջողվել պարզել:

«Գետերէն և նաւերէն» արտահայտությունը ենթադրում է ոչ թե գետեր կամ նավեր, այլ ջրանցքներ կամ ձեռակերտ առուներ ու ջրաղացներ:

Շապուի Բագրատունու արձանագրությունը ոչ միայն շինարարական-նվիրատվական, այլ նաև իրավական բնույթ ունի:

<sup>225</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 84:

<sup>226</sup> Դ, 3, էջ 14, 50, 76, 78:

<sup>227</sup> Նույն տեղում, էջ 215- 216:

## Ե. Խոսքը և մանր եղջերավոր անասունների նվիրատվություն

Հայաստանը մասն անասնապահական երկիր էր. ուներ կանաչավետ ալպյան մարգագետիններ, խոտառատ հովիտներ, ուստի և պետք է զարգանար մասն խաշնարածությունն ու անասնաբուծությունը: Մատենագրական և վիմագրական աղբյուրներում բազմաթիվ հիշատակություններ են պահպանվել հատկապես խոշոր և մանր եղջերավոր անասունների նվիրաբերության մասին: Վկայված են եզների («:Դ: (4) եզն և այլ արդիւնք»)<sup>228</sup>, գոմեշների<sup>229</sup>, կովերի<sup>230</sup>, էշերի և ձիերի<sup>231</sup>, ոչխարների<sup>232</sup>, ջորիների<sup>233</sup> նվիրատվության մասին: Այսպես՝ Հոռոմոսի վանքը իբրև նվեր ստանում է :Դ: (4) եզն, :Գ: (3) կով, :Դ: (4) էշ, :Բ: (2) ձի» և այլ նվերներ<sup>234</sup>: 1278թ. Հաղպատի վանքը նվիրատվության եղանակով ստանում է «ԺԶ: (16) եզ, :Գ-Ռ: (3000) սպիտակի» հետ միասին<sup>235</sup>, ապա մասն «:Գ: (3) եզն և :Ա: (1) կով»<sup>236</sup>: Անասունների նվիրատվությունները երբեմն պարգապես կոչվել են «ընծա»:

Զմոռանալով նշել, որ ձիերից, էշերից, ջորիներից և այլ քաշող անասուններից հարկ չէին վերցնում «զի նոքաւք բազում անգամ ծառայէ զտերունիսն»<sup>237</sup>:

## Զ. Զիֆհանք-սրանոցների նվիրատվություն

Հասութաբեր հաստատությունների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում ձիֆհանք-սրանոցները (վիմագրերում՝ մասն

<sup>228</sup> Դ, 5, էջ 50 :

<sup>229</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 227:

<sup>230</sup> Դ, 3, էջ 36:

<sup>231</sup> Վ. տ., էջ 90:

<sup>232</sup> Դ, 3, էջ 213:

<sup>233</sup> Դ, 3, էջ 220:

<sup>234</sup> Վ. տ., էջ 90:

<sup>235</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 159:

<sup>236</sup> Նույն տեղում, էջ 164, Վ. տ. էջ 235:

<sup>237</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 32:

ասարանոցները), որոնք ձեռք էին բերվում ամենատարբեր եղանակներով, հիմնականում «գանձագին» և կամ ընծայաբերման ճանապարհով<sup>238</sup>:

Ձիթհանքերում մշակում էին կտավատ, քունջութ, սորեկ: Վերջինիս յուղն օգտագործվում էր ձիթաճրագներն ու կանթեղները վառելու համար կամ պարզապես կիրառվում էր իբրև քսայուղ: Անիի պեղումների ժամանակ հայտնաբերվել են 19 ձիթհանքերի մնացորդներ<sup>239</sup>: «Ձիթհանքն այն ձեռնարկությունն էր,- գրում է Գ.Ն. Գրիգորյանը,- որտեղ ձիթատու բույսերից ձեթ էին ստանում»<sup>240</sup>: Ձիթհանք-սրանոցները, ինչպես նաև ջրաղացները նվիրաբերվում էին կամ ամբողջությամբ և կամ մասնակիորեն: Այսպես՝ Ոմն Ավագ տիկին Արջուառիճի վանքին ընծայում է ձիթհանքի «կես ակն»<sup>241</sup>: Անի մայրաքաղաքում նվիրաբերվում է «գանձագին ակն ի ձիթահանին»<sup>242</sup>: Մամախաթունը Սանահնի վանքին է ընծայում ձիթհանքի «զմի ակն, որ ի Վահրամայ որդիացն գնեցի»<sup>243</sup>: Դավթի որդի Վասակը Հոռոմոսի վանքին նվիրում է «գանձագին ձիթհանքը, որ ի վանացս գնեցի վճռմամբ...»<sup>244</sup>: Հաղպատի վանքը ստանում է նվեր «ձիթատունս»<sup>245</sup>: Ձիթհանք է ընծայվում Անիի կաթողիկե եկեղեցուն<sup>246</sup>: Սեփական ձիթհանք ունեւ Հառիճի վանքը, որն այն ձեռք էր բերել գանձագին եղանակով<sup>247</sup>, ինչպես նաև Սանահնի վանքը<sup>248</sup>: 1265 թ. այցելելով Դաղի վանք՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Օրբելյանը տեղի վանական միաբանությանը շնորհում է

<sup>238</sup> Դ. 1, էջ 62-63, Հաղբատ, էջ 159,

<sup>239</sup> Հայ ժողովրդի պատմություն, Բազմահատորյակ, հ. 3, Երևան, 1976, էջ 162:

<sup>240</sup> Գնել Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44-45:

<sup>241</sup> Վ. տ., էջ 48, 224, 234:

<sup>242</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>243</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>244</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>245</sup> Հաղբատ, էջ 174, Վ. տ., էջ 63, 85:

<sup>246</sup> Դ. 1, էջ 36:

<sup>247</sup> Վ. տ., էջ 153-154:

<sup>248</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 138:

Եղեգիսում իր գնած ձիթիանքը<sup>249</sup>: Ձիթիանք-սրանոցների մասին մի շարք հիշատակություններ են պահպանվել «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի պրակներում և այլուր<sup>250</sup>:

### Է. Բնակելի տների նվիրատվություններ

Անիում տների նվիրաբերության խնդիրներին անդրադարձել է Գնել Գրիգորյանը և կարծում ենք՝ չարժե դարձյալ շոշափել այս հարցը<sup>251</sup> և բավարարվենք մեկ-երկու օրինակների հիշատակմամբ՝ փաստերը քաղելով վիմական արձանագրությունների ժողովածուներից: Այսպես՝ 7 տուն է նվիրաբերվել Անիի եկեղեցիներից մեկին<sup>252</sup>: Սահակ երեցի դուստր Թագուհին Աշտարակում տալիս է «հայրենի տունն եւ Քարահանուցն այգին ի սբ Մարիանէս»<sup>253</sup>:

Հայոց :ՈԿԲ:(1213)թվականին կրոնավորներից մեկը հանրահայտ Խծկոնքի վանքին նվիրում է «երկու դուռն տներ»<sup>254</sup> իսկ :ՈՀ:(1221)թ. Խեչեանց Խաչոտն իր կենակից Ավագ տիկնոջ հետ միասին, ի թիվս այլ ընծաների նույն Խծկոնքի վանքին նվիրում են իրենց «հայրենի տներն», որոնք գտնվելիս են եղել «ընդդէմ Գոգոնց Ս. Սարգսի»<sup>255</sup>: Բազմայրի վանահայր Սիմէոնը հիշատակագրում է, որ երբ Վարդի որդի Խաչերեսը «ի ՔՍ փոխեցաւ», «գիր զանձով շինած տներն» երեք օր պատարագ ստանալու դիմաց հարազատները նվիրաբերում են հիշյալ վանական միաբանությանը<sup>256</sup>: Կողբացի երեց Որդեկը՝ Դավթի որդին և «թոռն Պառաւ իրիցո» տուն է նվիրում Արջոառիճի

<sup>249</sup> Դ, 5, էջ 206:

<sup>250</sup> Նույն տեղում, էջ 194: Ձիթիանքների մասին տես նաև Վ. տ. էջ 39, 48, 85, 131:

<sup>251</sup> Գնել Գրիգորյան, Նվիրատվություններ, էջ 36-43:

<sup>252</sup> Դ, 1, էջ 43:

<sup>253</sup> Ս. Սաղումյան, Աշտարակ, Երևան, 1998, էջ 147: Վիմական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան տներ նվիրաբերելու մասին (տես Վ. տ., էջ 55, 63, 77, 130, 146 և այլն):

<sup>254</sup> Վ. տ., էջ 55:

<sup>255</sup> Վ. տ., էջ 63:

<sup>256</sup> Վ. տ., էջ 77:

վանքին<sup>257</sup>: Աստվածատուրի որդի Խաչեղբայրը իր տիկնոջ՝ Սիմամի հետ միասին Բագնայրի Ս. Աստվածածնին է նվիրաբերում «ներքին տուն»-ը<sup>258</sup>: Անիի Առաքելոց եկեղեցուն նվիրաբերում են «զանձագին սարաւոյթով տուն»<sup>259</sup>: Հավատացյալ Քրիստափորը Ապղարիք Պահլավունու եկեղեցուն նվիրաբերում է «զանձագին հայրենիք...է: (7) տուն»<sup>260</sup>: Անեցի ոմն Շահիկ իր որդի Վարդի հետ միասին նույն եկեղեցուն նվեր են տալիս «ի կորոյ շինած տուն»<sup>261</sup>: Երբեմն տունը նվիրաբերվում է կուղպակի հետ միասին<sup>262</sup>:

## Ը. ԱՇխատանային գործիքների նվիրատվություն

Մատենագրական աղբյուրներում հիշատակվում են քաշող անասունների՝ եզների ու գոմեշների նվիրատվության փաստեր: Առավելապես հաճախ են հանդիպում աշխատանքային գործիքների հիշատակությունները, մասնավորապես «վեցկի»<sup>263</sup> կոչվող թեթև արորը: «Վեցկի» բառացի նշանակում է վեց լուծ եզ ունեցող արոր կամ գութան, թեև «վեցկի» ասելով երբեմն հասկացել են նաև «:Ա: (1) լուծ եզ»<sup>264</sup>: Ավելի քան «վեց եզ ունեցող» գյուղատնտեսական գործիքը կիրառվել է հատկապես լեռնային շրջաններում: Դրանք կոչվում էին «ութնոց վեցկի», որի մասին հատուկ նշում է մեծանուն բանաստեղծ Համո Սահյանն իր համառոտ կենսագրականում<sup>265</sup>: «Ութնոց վեցկիի» մասին հիշատակվում է Սանահնի վանքի վիմական արձանագրություններում<sup>266</sup>: Սահակ Ամատունու կազմած հայտնի

<sup>257</sup> Վ. տ., էջ 130:

<sup>258</sup> Վ. տ., էջ 146:

<sup>259</sup> Դ, 1, էջ 12:

<sup>260</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>261</sup> Նույն տեղում:

<sup>262</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>263</sup> Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 333:

<sup>264</sup> Դ, 3, արձ. քիվ 216, տե՛ս նաև արձ. քիվ 681:

<sup>265</sup> Տե՛ս Հ. Սահյանի համառոտ կենսագրականը «Սյունյաց Երկիր» շաբաթաթերթի 2005 թ. քիվ 47-ում:

<sup>266</sup> Կ. Ղաֆիսդարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 118:

բառարանում գրված է, որ վեցկին նույն արորն է՝ քաշող անասուններով միասին<sup>267</sup>: Վանեցիներն ասում են «ոսկի», «չորեց չութ»: Արցախում գութանին լծում են երկու գոմեշ և երկու եզ և անվանում «չորեց»: «Տեղ կա,- գրում է բառարանագիրը,- որ չորս լուծ կլծեն, ուստի կանուանեն չորոց: Տեղ կայ, որ վեց լուծ կլծեն: Սա արդեն «վեցկին» է: «Ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորայ» (Դավթուկ քորեպիսկոպոսի - Լ. Ս.)<sup>268</sup>: «Տունը մեկ վեցկի տվէք վարելու համար<sup>269</sup>: Վիմական արձանագրություններում վկայություններ կան «վեցկե կոռ»-ից ազատելու մասին<sup>270</sup>:

### **Թ. Ջրասարների նվիրաւոյթյան հիշատակությունները վիմագրերում**

Հայաստանը հարուստ չէ ոռոգման ջրի պաշարներով, և եթե չլինեին լեռնային ձագարների մեջ ամբարված ջրերն ու ձնհալի ժամանակ լեռներից հոսող գետերն ու գետակները, երկիրը կվերածվեր անապատի: Խաղաղ իրադրության պայմաններում կառուցվում էին նոր առուներ, մաքրվում էին նախկին ջրամբարները, լքված ջրատար կավե փողրակները (քյունգերը): Եվ պատահական չէ, որ եղած ջուրը միշտ օգտագործվել է խնայողաբար, առուները կառուցվել ու նվիրաբերվել են հաշվենկատորեն:

Վիմական արձանագրություններում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել ջրատար առուների<sup>271</sup> կառուցման, վերանորոգման և նվիրատվության մասին: Նկատենք, որ ջուրը երբեմն տրվել է կամ բաիբերաններով («մեկ բաիի ջուր») և կամ շաբաթվա նախանշված օրերին՝ տարբեր նկատառումներով: Մարդասիրական այս քայլը նվիրատուին վերադարձվել է նրա կամ հարազատների հոգու փրկության

<sup>267</sup> Սահակ Ծ. վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 390: Այսուհետև՝ Սահակ Ամատունի:

<sup>268</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 112, 113:

<sup>269</sup> Սահակ Ամատունի, նշվ. աշխ., էջ 390:

<sup>270</sup> Դ. 1, էջ 37:

<sup>271</sup> Նույն տեղում, էջ 64:

համար հիշատակության օրեր սահմանելով: Ջրատարներ անցկացնելու հնագույն հիշատակությունները քարի վրա պահպանվել են վաղուց ի վեր: Այսպես՝ Գեղարքունիքի իշխան Վասիլի որդի Ամիր-Վահապը ջուր է անցկացնում Նորատուս գյուղի բնակիչների համար<sup>272</sup>: 911 թ. Վահան Ջևանշերյան իշխանագուն եպիսկոպոսը Խուստուփ լեռան արևմտյան լեռնալանջից՝ Տիգրանասարի ակունքներից կավե փողրակներով՝ «բերե զջուրս ի դուռն նորա» (իմա՝ Վահանավանքի)<sup>273</sup>: Վարարակնի 29 կմ երկարություն ունեցող ջրատարը, որ բերված էր 932 թ. Հակոբ Ա (Ապստամբ) եպիսկոպոսի նախաձեռնությամբ և դրամական միջոցներով Ցաքուտ կոչվող տարածքը ջրաբքի դարձնելու նպատակով<sup>274</sup>, վերստին նորոգվում է 1294 Տաթևի Հովհաննես վանականի ջանքերով և Հայրապետ եպիսկոպոսի հորդորով<sup>275</sup>: 985 թ. վերականգնվել է Բյուրականի առուն: Հիշատակություն է պահպանվել Հալիձոր գյուղում անցկացված առվի մասին<sup>276</sup>: 1008 թ. Չկնարած (նախկին Բազարչայ) գետից տասնյակ կիլոմետրերի երկարությամբ ջուր է անցկացվում Գնդեվանքի վանական եղբայրության կարիքների համար<sup>277</sup>:

Գողթնի իշխան Շաբիթի թոռ Վասակը (հետագայում՝ Գյուտ կրոնավորը) իր կառուցած Ս. Երրորդության եկեղեցուն «Տայր ընծայ ամ յամե ութ օր կես ի գետոյն Երասխայ»<sup>278</sup>: Անիի Ս. Փրկիչ եկեղեցու սպասավորներին Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, ի շարս այլ տիրույթների, շնորհում է նաև «:Գ: (3) ար ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղջէ յամենայն հասուց...»<sup>279</sup>: 1198 թ. ջուր է անցկացվում Հոռոմոսի վանքում<sup>280</sup>:

<sup>272</sup> Դ, 4, էջ 126:

<sup>273</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 176:

<sup>274</sup> Նույն տեղում, էջ 185-187:

<sup>275</sup> Նույն տեղում:

<sup>276</sup> Նույն տեղում, էջ 52: Ջրի և առուներ հանելու մասին տես նաև Դ, 3, էջ 143, 218, 219, արձ. թիվ 692, Վ. տ., էջ 9, 37, 135, 165:

<sup>277</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 191-192:

<sup>278</sup> Նույն տեղում:

<sup>279</sup> Դ, 1, էջ 48:

<sup>280</sup> Նույն տեղում, էջ 39:

Ջրով ապահովվում է Այրիվանքը<sup>281</sup>: Մեծ սպարապետ Բուբան (Բուպակ) Հայրավանքին է նվիրում «Քանաքեռի առուն» «:Բ: (2) ակն ջաղացով»<sup>282</sup>: Վահրամ հեճուպը Հառիճավանքի ժամատունը կառուցելուց հետո «երևր զջուրս յիշատակ հոգոյ իւրոյ» և հարազատների<sup>283</sup>: Ինչպես առաջին օրինակում նկատեցինք, երբեմն ջուրը տրվել է բաիբերաններով: Մինա Խաթունի և Տարսայիճի դուստր Ասվան վանական եղբայրությանը նվիրում է «:Ա: (1) բահի ջուր խասս հողովն»<sup>284</sup>:

Անիում Ա. Փրկիչ եկեղեցու մոտակայքում Այլղարիպ մարզպանի նպաստավորությամբ կառուցվում են միլեր (կարծում ենք՝ խմելու ցայտաղբյուրներ)<sup>285</sup>: Ն. Յա. Մառը «միլ» ասելով հասկացել է «ջրամբարը կամ մեկ այլ շինություն, որի մեջ ջուրը լցվում էր խողովակով», ընդ որում, «միլը» նա մակաբերում էր վրացերեն «միլի»-ից<sup>286</sup>: Բոլոր դեպքերում, հավանական ենք համարում, որ այս բառը նշանակել է ցայտաղբյուր, ջրի ծորակ վերգետնյա ավազանով հանդերձ: Պոռշ իշխանի թոռ Էաչի Բ-ն Յաղաց քարի միաբանությանը նվիրաբերում է Սրկղոնքում գտնվող իր այգին «նորակերտ իւր ջրովն»<sup>287</sup> 1251 թ. Առյուծ Հոգևորյանը Հոռոմոսի վանքի կարիքների համար անց է կացնում «զջուրս, զոր <...> խոպանեալ էր եւ տուի ընծա զհայրենի զին կուղպակն»<sup>288</sup>: Ասլանը և Շերանիկը Հոռոմոսի վանքին նվիրում են իրենց «գանձագին կալվածի» «զկես դանգը՝ հողով եւ ջրով»<sup>289</sup>: Մեծահարուստ Ումեկը հիշատակագրում է. «բերի ջուրս յիմ հալալ վաստակոց»<sup>290</sup>: Արդեն ակնարկել ենք, որ Ավետենց Սահմադինը

<sup>281</sup> Վ. տ., էջ 20, տե՛ս նաև էջ 37, 39, 133:

<sup>282</sup> Դ, 4, էջ 69:

<sup>283</sup> Վ. տ., էջ 40:

<sup>284</sup> Նույն տեղում, էջ 51, տե՛ս նաև Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 203:

<sup>285</sup> Դ, 1, էջ էջ 45:

<sup>286</sup> Դ, 5, էջ 129: Н. Мар. Ани. М.-П. 1934, с. 34: Միլի մասին տե՛ս նաև Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 203-206, 206, 215:

<sup>287</sup> Դ, 1, էջ 63, Դ, 3, էջ 143:

<sup>288</sup> Վ. տ., էջ 95:

<sup>289</sup> Դ, 3, էջ 143:

<sup>290</sup> Վ. տ., էջ 240:

գնում է Երևան քաղաքը «հողով եւ ջրով»<sup>291</sup>:

Հաճախ վերացվում է ջրօգտագործումից զանձվող հարկը, որը միջնադարյան սկզբնադրյուններում կոչվել է «Աբգան» կամ «Աւգան»<sup>292</sup>, իսկ երբեմն նաև «Ջրհասին բաժն»<sup>293</sup> անուններով: Տարսայիճ մեծ իշխանի որդի Փախրադոլան իր հարազատ մոր՝ Արուզ Խաթունի (մահ. 1286 թ.) հիշատակը հավերժացնելու նպատակով վերացնում է ջրից վերցվող հարկը՝ «զաւգանն»<sup>294</sup>: Ջրահարկից՝ արգանից ժողովրդին ազատում են նաև այլ հավատացյալներ<sup>295</sup>: Բարեպաշտ Տիգրան Հոնենցի բերած ջուրը «ի վանքս ու ի անտիրութենէ խաղտել էր ու կտրել», 1310 թ. դարձյալ վերանորոգվում է՝ «բերաք ջուրս և հաստատեցաք...»<sup>296</sup>: Ահարոն Մագիստրոսը ջրատար է անցկացնում «ի գեղեցկաշէն բերդս Անի <...> յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց»<sup>297</sup>:

Նկատենք, որ հատկապես ոռոգելի ջրի համար բազմաթիվ ընդհարումներ են տեղի ունեցել հարևան գյուղերի բնակիչների միջև: Այս տեսակետից ուշագրավ է Ջրվեժ, Կոշ, Արուճ և Գաւար գյուղերի բնակիչների միջև ջրի համար ծագած վեճը, որն ավարտվում է թագավորի միջամտությամբ. «...Եղև կռիւ ընդ Արուճ եւ ընդ Կաւշ...»: Վահրամ իշխանի որդի Գրիգորը Սմբատ թագավորի հանձնարարությամբ որոշում է գյուղերի միջև հավասարապես բաժանել ոռոգելի ջուրը. «...Ես հաւասարեցի զջուրն ընդ Կաւշ եւ ընդ Արուճ...»<sup>298</sup>: Ջրօգտագործման վերաբերյալ բազմաթիվ հիշատակություններ կան վիմական արձանագրություններում<sup>299</sup>:

<sup>291</sup> Կ. Ղաֆադարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները, էջ 137:

<sup>292</sup> Վ. տ., էջ 164:

<sup>293</sup> Վ. տ., էջ 71:

<sup>294</sup> Դ, 2, էջ 97:

<sup>295</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>296</sup> Դ. 1, էջ 64:

<sup>297</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>298</sup> Վ. տ., էջ 3:

<sup>299</sup> Դ, 5, էջ 76, 129: Այստեղ նշվում է, որ Տարսայիճի և Մինա Խաթունի դուստր Ասփեն (Ասիան) Խաղարի վանքին (Խաթրավանք) նվիրում է «մեկ քահի ջուր» (տե՛ս Դ, 5, էջ 129):

## Ժ. Կուղպակ-կրդականների նվիրատվություն

Հասութաբեր հաստատությունների ստացված արդյունքը պետք է նաև իրացվեր առավելապես կանխիկ դրամ ձեռք բերելու և արտադրությունը ծավալելու նպատակով: Այդ գործում վճռական դեր էին կատարում առավելապես քաղաքներում գտնվող կուղպակ-կրդականները կամ խանութները<sup>300</sup>, որոնք տարբեր մեծության ու նշանակության վաճառատներ էին: Գնել Գրիգորյանի կարծիքով՝ «քաղաքային կուղպակների արտադրաառևտրական կարողություններն անհամեմատ ավելի մեծ և, հետևաբար, առավել շահութաբեր էին<sup>301</sup>: Կուղպակները երբեմն տրվում էին վարձակալությամբ: Նվիրաբերված բազմաթիվ կուղպակների սեփականատեր էին դարձել Անի մայրաքաղաքի հոգևորականությունն ու առածին վանական եղբայրություններ: Այսպես՝ Անիի Ապլղարիպ մարզպանը 1036 թ. գնում է 3 կուղպակ, ձիթհանք, այգի և նվիրաբերում տեղի Ս. Փրկիչ եկեղեցուն<sup>302</sup>: Անեցի հավատացյալ Տիգրանը (Խավանաբար Տիգրան Հոնենցը) արձանագրում է, որ կաթողիկե եկեղեցու աստիճանները նորոգելուց հետո «ենուու նուէրք ի սուրբ կաթողիկէս զիմ գանձագին կուղպակն...»<sup>303</sup>: Իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին երկու կուղպակ է գնում՝ Անիի Ս. Գրիգոր եկեղեցուն նվիրաբերելու նպատակով<sup>304</sup>: Նույն եկեղեցուն կուղպակ է նվիրում տիկնանց տիկին Շուշանը<sup>305</sup>: Բազմայրին կուղպակ է նվիրաբերում Խաչերեսի դուստր Մամախաթունը<sup>306</sup>: Մեկ ուրիշ հավատացյալ՝ Խաչերես Լոռեցին, Բազմայրի վանքին շնորհում է «գանձագին եւթն կուղպակն...և երեք տուն»<sup>307</sup>: Մարմաշենի վանքը

<sup>300</sup> Կուղպակների մասին տե՛ս Վ. տ., էջ 11, 17, 22, 49, 54, 63, 70, 77, 95, 109, 131:

<sup>301</sup> Գնել Գրիգորյան, Նվիրատվություններ, էջ 16:

<sup>302</sup> Դ., 1, էջ 44:

<sup>303</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>304</sup> Նույն տեղում, էջ 32

<sup>305</sup> Նույն տեղում, տես նաև Վ. տ. էջ 11:

<sup>306</sup> Վ. տ., էջ 49:

<sup>307</sup> Նույն տեղում, էջ 49: Տե՛ս նաև Գ. Սարգսյան, Սիջնադարյան կուղպակները և դրանց նվիրատվությունը 9-14-րդ դարերում, ՊԲՀ, 1977, թիվ 3, էջ 269:

1225 թ. ստանում է «արդիւնս յոլովս գեղարեայս, այգեստանս, կուղպականի, ջաղացանի»<sup>308</sup>: Գեշ մարդը Երևանի ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերում է «:Բ: (2) կուղպակն ներքին տներով եւ խղերով» և «այլ բազում արդիւնք»<sup>309</sup>: Խղեր ասելով, կարծում ենք, հասկացել են նկուղահարկեր, որոնցով այնքան հարուստ է եղել հատկապես Երևանի Հանրապետության հրապարակի տարածքը: Այստեղ հետախուզական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ նկուղահարկեր, որոնք թվագրվում են ուշ միջնադարով: Շարունակենք: Նվիրատվության եղանակով կուղպակ են ձեռք բերում Խծկոնքի վանքը<sup>310</sup>, Հոռոմայրը<sup>311</sup>, Բագնայրը<sup>312</sup>: Ուշագրավ դիտողություն ունի կուղպակների վերաբերյալ Գրիգոր Տաթևացին: Նա կես-կատակ, կես-լուրջ նշում է, թե ինչ է նշանակում կուղպակը. «կողբակ, որ է գողի բակ»<sup>313</sup>: Նա, ըստ երևույթին, նկատի է ունեցել կուղպակատեր անագնիվ և խաբեբա վաճառականներին: Կուղպակների՝ իբրև վաճառատների մասին սկզբնաղբյուրներում շատ վկայություններ կան<sup>314</sup>:

### ԺԱ. Հյուրանոց-հյուրասների նվիրատվություն

Հոգևոր օջախների հարևանությամբ հյուրանոցները կառուցվում էին ուխտավորների համար՝ ամենայն հավանականությամբ կոռային աշխատանքների միջոցով<sup>315</sup>: Հիշենք Ամաղուի Նորավանքի հյուրանոցը կառուցող Սարգիս եպիսկոպոսի արձանագրությունը<sup>316</sup>:

Այս շինարար հոգևորականը հյուրատան կարիքների համար

<sup>308</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>309</sup> Կ. Ղաֆաղարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները, էջ 138:

<sup>310</sup> Վ. տ., էջ 76

<sup>311</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>312</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>313</sup> Գրիգոր Տաթևացի, Զարոգիիրք, Ամարան հատոր, էջ 25:

<sup>314</sup> Հայ ժողովրդի պատմություն, Բազմահատորյակ, հ. 3, էջ 212, տե՛ս նաև Գնել Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 21-24, 36 և հետո:

<sup>315</sup> Դ, 6, էջ 196:

<sup>316</sup> Դ, 3, էջ 246:

նվիրաբերում է «գեղ Աւել իւր ամէն սահմանաւքն եւ գերկու ակնի ջաղացն յԱռփա» և մի շարք այլ կալվածքներ, որոնցից ստացված մուտքը «հիւրերին պէտքն անցանեն, որ ատարքն եւ կարատեալքն ուտեն, պարոնացն եւ երախտատրացն աղաւթք եւ Ախտուալծ ողորմեա ասեն»։ Նույն եպիսկոպոսը Նորավանքի հյուրատան պատին փորագրած 28 տողանոց արձանագրության մեջ հայտնում է. «Շինեցի զհիւրատունս եւ տուի ի հիւրանոցս...»<sup>317</sup>։ Առաջին հայացքից կարծեք թե հյուրատունը և հյուրանոցը հոմանիշ բառեր են, սակայն, ենթադրում ենք, որ հյուրատունն (բարբառային արտահայտությամբ՝ «հույրատուն, հոյրատուն»)՝<sup>318</sup> ավելի նեղ իմաստ է արտահայտում, այսինքն՝ հյուրերի համար նախատեսված մեկ տուն կամ սենյակ, իսկ հյուրանոցը կարող էր բաղկացած լինել մի քանի սենյակներից, վերջինիս էլ տրվել է այդ հյուրատունը։ Բացի դրանից՝ հյուրանոցը տրվել է վանքին իր սպասարկող անձնակազմով, ուր հանվանե նշված են Թոման, Ովանեսն ու Պետրոսը, իսկ եպիսկոպոսին շարունակելու էր սպասարկել իր «աշխատասէր Առաքելը»<sup>319</sup>։ Այս վկայությունից կարելի է մակաբերել, որ տվյալ դեպքում Ամադուի Նորավանքի հյուրանոցում հյուրընկալվողները սնվել են անվճար. փաստն առավել բարձրացնելու էր թեմական առաջնորդի հեղինակությունը։ Վանքապատկան հյուրանոցները հետագայում շեղվեցին իրենց առաքելությունից՝ դառնալով առևտրական դասի խրախճանքի վայրեր, քանզի այստեղ սկսեցին հյուրընկալվել նաև առևտրականները<sup>320</sup>։ Նույն երևույթը տեսնում ենք Հին Ռուսիայում<sup>321</sup>։ Միջնադարյան վանքերն ունեին իրենց պանդոկ-կարավանատները,

<sup>317</sup> Դ, 3, էջ 2:

<sup>318</sup> Դ, 6, էջ 69:

<sup>319</sup> Դ, 3, էջ 246:

<sup>320</sup> Ի դեպ, սկզբնաղբյուրներում հանդիպում է «Արգասու վանատականներ» արտահայտությունը: (Հայ ժողովրդի պատմություն, Բազմահատորյակ, հ. 3, էջ 244): Գուցե դա Վայոց ձորի Արկազն է, որը հայտնի է մինչ օրս գործող իր ընդարձակ հրապարակով և Ս. Խաչ վանքով:

<sup>321</sup> М. Н. Тихомиров, Крестьянские и городские восстания на Руси в XI-XIII вв., М. 1955, с. 48.

որոնցից էր Գորիսի շրջանի Հարժիս գյուղի այսօր արդեն կիսավեր կարավանատունը: Առանձին կարևորություն ուներ Սելիմի (Սուլեմա) լեռնանցքի կարավանատունը, կամ ինչպես արձանագրության մեջ է կոչվում՝ «հոգետունը», որը կառուցվեց 1332 թ. Չեսար Օրբելյանի մեկենասությամբ և մեծ թափունապետ Եսայի Նչեցու օրհնությամբ<sup>322</sup>: Չեսար Օրբելյանի կառուցած «հյուրատունը» ձոր վերջերս նորոգված Գեղարքունիք-Վայոց մայրուղու մոտ է և ունի ռազմավարական մեծ նշանակություն:

Պանդոկ-իջևանատները հատկապես մեծ քաղաքներում աստիճանաբար կորցնում են իրենց բուն նշանակությունը՝ վերածվելով խրախճանքի վայրերի և խաղատների: Պատահական չէ, որ Ներսես Լամբրոնացին զայրանում էր, որ եկեղեցիներն ու վանքերը դարձրել են «պանդոկ և օտարաց մաքսատուն»<sup>323</sup>:

1326 թ. Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս-Տաբասալիճը՝ Մինա Խաթունի և Տաբասալիճի թոռը, այցելելով Որոտնավանք, այս հոգևոր օջախին նվիրում է «զխջահորին զգոմեր եւ զԿիւրղի վանս ազատ ի մեր յամեն հարկէ, զի առաջ տված էր ժողովուրդ եւ մեր զմեր բաժին հասն տվաք ի պէտս պանդոկին»<sup>324</sup>: Նկատենք, որ Սյունյաց արքեպիսկոպոսը հօգուտ պանդոկ-հյուրանոցի հրաժարվել է գանձել եպիսկոպոսարանին տրվող «հաս» հարկից: Հիշյալ թվականից տասը տարի առաջ Բուրթել Մեծն ու նրա եղբայր Բուդտան նույն Որոտնավանքին նվիրաբերում են գյուղեր, հողատարածքներ, այգիներ և ռոռզման համար ջուր<sup>325</sup>:

<sup>322</sup> Դ, 3, էջ 177-178:

<sup>323</sup> Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցւո եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին, Վենետիկ, 1847, էջ 168:

<sup>324</sup> Դ, 2, էջ 101:

<sup>325</sup> Նույն տեղում, էջ 100-101:

## ԺԲ. Այգիների և արսերի նվիրատվություն

Այգիները նույնպես տրվել են հատուկ նշված իրենց աշխարհագրական սահմաններով՝ ըստ երկուստեք կազմված «Գիր-վճիռների»՝ «գանձագին» կամ «դրամագին» եղանակներով: «Գանձագին» այգիները եղել են առք ու վաճառքի առարկա: Նոր մշակելի հողերն ու նորատունկ այգիները կոչվել են նորք, այսինքն՝ նոր այգիներ<sup>326</sup>: Դրանցից շատերն աճեցվել էին «կորդո», այսինքն՝ խոպան, անմշակ, անվար հողերի վրա: Ի դեպ, հիշատակություններ կան «կորդո» վայրերում տներ կառուցելու վերաբերյալ՝ «կորդո շինած տուն»<sup>327</sup>:

Ընծայաբերված այգիները հիմնականում լինում են սեփականմասնավոր: Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածնի արձանագրություններից մեկում Մարգարե վարդապետը հայտնում է, որ ինքն ու իր մերձավորները հիշյալ եկեղեցուն են ընծայում «զԹաճերի հողն ու զՋհտին ու զՄուսկանց պատան ու զԹեղուտն, որ մեր գնուածք էր»<sup>328</sup>: Այստեղ մեզ հետաքրքրում է «զՋհտին» եզրույթը: Ինչպես հայտնի է՝ Եղեգիս գյուղաքաղաքի մերձակայքում վերջերս հայտնաբերվել է հրեական գերեզմանոց, որի երրայերեն վիմագրերի վերծանությամբ զբաղվել են հնագետ պատմաբան Հուսիկ Մելքոնյանն ու ռայագետ Մայքլ Սթոունը: Կարծում ենք՝ «Ջհտին» այգին եղել է այս տարածքին մոտ: Հաճախ նվիրատուներն իրենց կայքն ու ունեցվածքը նվիրում էին դեռևս իրենց կենդանության ժամանակ: Յաղաց քարի Ս. Հովհաննես եկեղեցու գավթի հարավային պատին փորագրված է, որ մահամերձ նվիրատուն հիշյալ միաբանությանն է նվիրաբերել իր ունեղվածքը՝ «...Ու մեռանէի՝ Յաղաց քարի սբ. Յովանես տուի...»<sup>329</sup>: Վիմական արձանագրություններում, ինչպես նշեցինք, բազմաթիվ վկայություններ կան «Ի կորդոյ», այսինքն՝ խոպան հողերը մշակելուց հետո այգիներ աճեցնելու և նվիրաբերելու մասին,

<sup>326</sup> Հայ ժողովրդի պատմություն, Բազմահատորյակ, հ. 3, էջ 158, Վ. տ., էջ 147:

<sup>327</sup> Դ, 1, էջ 43:

<sup>328</sup> Դ, 3, էջ 98:

<sup>329</sup> Դ, 3, էջ 152:

սակայն առավելապես նվիրաբերվում են դրամով գնված այգիները: Այսպես՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը նշում է, որ Աշնակում իր նվիրաբերած այգին, «որ ի կորոդ արկած էր», 1036 թ. տալիս է «որմովք եւ ծառովք պտղաբերովք եւ անպտղովք եւ խոտագետնովք եւ :Գ: (3) ար ջուր ազատ ի խալատ եւ ի գեղջէ յամենայն հասուց»<sup>330</sup>: Գագիկ Ա-ի (990-1020) որդի, Հովհաննես-Սմբատ քազավորը (1020-1042) Հոռոմոսի վանքին նվիրում է Սահառունի գյուղը, ինչպես նաև մի «փնդուկ»-պանդուկ<sup>331</sup>: Նույն քազավորը այս վանքին է շնորհում Կողբում եղած իր այգին և «:Ը: (100) բեռ աղ յամենայն ամի»<sup>332</sup> «Ի պետական իշխանութեան Շահնշահ Ջաքարիայի», Հասանի որդի Պարսիմը՝ Օշական գյուղի ռաիսը (գեղջավազ, գյուղապետ) 1210 թ. Բագնայրի վանքին է նվիրում մի շարք այգիներ<sup>333</sup>: Նույն Օշական գյուղի մեկ այլ ռաիս, Արտաշիր անունով, Բագնայրին է ընծայաբերում իր գանձագին այգին, «որ Աշոտոնց կոչի»<sup>334</sup>: Մարմաշենի վանքը իբրև նվեր ստանում է «գխոտ, գիող, երկու այգի ի Մարմետի»<sup>335</sup>: Հոռոմոսի վանքը այգի է ստանում Օշականում<sup>336</sup>: Վախտանգի որդի Ջաքարեն գրում է. «Շինեցաք զԱշտարակայ նորքն (իմա՝ նորատունկ այգին - Լ. Ս.) եւ տուաք ի սուրբքս»<sup>337</sup>:

Վիմական արձանագրություններում ուշագրավ վկայություն է պահպանվել այն մասին, թե ինչպես Սանահնի վանքը այգիներ է գնել «ի թուրքեն»<sup>338</sup>: Այս փաստը ենթադրել է տալիս, որ այդ

<sup>330</sup> Վ. տ. էջ 20:

<sup>331</sup> Նույն տեղում, էջ 20-21:

<sup>332</sup> Նույն տեղում, էջ 21: Ի դեպ, Հովհաննես - Սմբատ քազավորը Հոռոմոսի վանքին ընծայում է նաև «:Ը: (100) բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ» (Նույն տեղում, էջ 21): Սանահնի վանքին վերաբերող արձանագրություններում նշվել է ոմն Մովսես և արքունին (կարդալ՝ արքանին - Լ. Ս., ջրից վերցվող հարկ) հաշվին աղ բերել (Սանահնի վանքը, էջ 60, Վ. տ. էջ 248): Կ. Ղաֆադարյանը «արքանին» բառի վերծանությունը կասկածելի է համարում (Սանահնի վանքը, էջ 60, 123):

<sup>333</sup> Վ. տ. էջ 50:

<sup>334</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>335</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>336</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>337</sup> Ս. Սաղումյան, Աշտարակ, Երևան 1998, էջ 147:

<sup>338</sup> Սանահնի վանքը, էջ 111:

այգին բռնազավթել էին թուրք-սելջուկները և ավելի թանկ գնով վերավաճառել Սանահնի վանքին, ինչպես նշել ենք վերևում: Միջնադարում վանքապատկան այգիներն այնքան էին բազմացել, որ կրոնավորները, աղոթք ու եկեղեցի մոռացած, ներգրավվել էին այգեգործական աշխատանքների մեջ<sup>339</sup>: Վարդան Այգեկցին խիստ բողոքում էր նման երևույթի դեմ և առաջարկում ոչնչացնել վանական միաբանությունների տարածքների այգիները<sup>340</sup>, թեև այգիներ ոչնչացնելը կանոնական որոշումների համաձայն համարվում էր հանցագործություն. թշնամիները, երբ ներխուժում էին որևէ երկիր, առաջին հերթին կտրատում էին պտղաբեր այգիները<sup>341</sup>: Վասիլ կայսրը «հրամայե զօրացն կոտորել զծառատունկս քաղաքին» Հերա: Մինչև Վարդան Այգեկցին այգեգործական աշխատանքներով զբաղված հոգևորականներին խստորեն դատապարտում էր Ներսես Շնորհալին<sup>342</sup>:

Այգիները, ինչպես նաև այլ հասութաբեր հաստատություններ, նվիրաբերվել են կամ ամբողջությամբ, կամ մասնակիորեն, այսինքն՝ այգու մի մասը: Օրինակ՝ Աշտարակի ս. Մարիանե եկեղեցու վիմագրերից մեկի համաձայն՝ Տիկնանց տիկինը իր ամուսին Արջուկի հետ միասին գնում և հիշյալ եկեղեցուն է նվիրում «զՓարոսանց այգույ կեսն...գնեցի եւ տվի»<sup>343</sup>: Կամ մեկ այլ օրինակում ասվում է՝ «զԴ-աւթենց այգայ տեղին կեսն տվաք»<sup>344</sup>: Այգիներ և հնձան է ստանում Հառիճավանքը<sup>345</sup>, իսկ Դ-աղի վանքին տրվում է «Չորապանոյ հողն»<sup>346</sup>: Այգիները երբեմն տրվում են իրենց «կատապաններով», այսինքն՝ այգեպաններով հանդերձ<sup>347</sup>: Այս կամ համանման

<sup>339</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>340</sup> Н. Я. Марр, Сборник причт Вардана, ч. 1, СПб, 1899, с. 317.

<sup>341</sup> Դ, 3, էջ 36:

<sup>342</sup> Դ, 3, էջ 218: Դ, 6, էջ 196:

<sup>343</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>344</sup> Դ, 4, էջ 267:

<sup>345</sup> Վ. տ. էջ 97:

<sup>346</sup> Դ, 3, էջ 50-51, արձ. քիվ 135 (ներդիր):

<sup>347</sup> Դ, 5, էջ 114, 115-116, Դ, 6, էջ 184:

այլ փաստերը դարձյալ ենթադրե՞լ են տալիս արդյոք, որ այդ այգեպանները ճորտ գյուղացիներ էին: Բոլորովին էլ՝ ոչ: Դրանք պարզապես այգեգործությանը զբաղվող շինականներ էին, հողագործ բանվորներ, որոնց զբաղմունքն այգի մշակելն էր, դաշտավարությանը զբաղվելը: Շինականի նվիրաբերության կարելի է հանդիպել բազմաթիվ աղբյուրներում: Օրինակ՝ Խծկոնքի վանքին նվիրաբերվում է «շինական մի ի գիւղս»<sup>348</sup>: Այսինքն՝ այս գյուղացին այդուհետև ծառայելու էր Խծկոնքի վանքում: Հաղպատի վանքում աշխաստելու էին «Գ: (3) շինական»<sup>349</sup>: Պատմությունից հայտնի է, թե ինչպես աշխարհիկ և հոգևոր ավատատերերը միահամուռ ուժերով, բռնությանը տեղահանեցին Տաթևի վանքի շրջակա գյուղերի բնակիչներին և սեփականեցին նրանց պապենական հողակտորները: Ահա թե ինչու սկսվեց ցուրաբերողցիների 915 թ. հայտնի ապստամբությունը Սյունիքի եպիսկոպոսական աթոռի դեմ: Համանման երևույթ տեսնում ենք Շիրակում, մասնավորապես Մարմաշենի վանքի մերձակա գյուղերի բնակիչների նկատմամբ կիրառված բռնի ուժի գործադրումը: Վիմագրերից մեկում կարդում ենք. «Հանեալ (Մարմաշենի մերձակա գյուղերից – Լ. Ս.) արտաքս գշինականս եւ եղել բնակարան սրբոյ քահանայից եւ կրանատրաց»<sup>350</sup>: Շինականների նվիրատվության մասին կան բազմաթիվ այլ վիմական բնագրեր<sup>351</sup>:

Վայոց ձորի արձանագրություններից մեկում նշվում է, թե ինչպես Արտաբույն գյուղի բնակիչները «յաւժարութեամբ» նվիրատվություն են կատարում Ամաղուի Նորավանքին<sup>352</sup>: Արձանագրության երկրորդ հատվածը ցույց է տալիս, որ Մինա Խաթունի նվիրաբերած այգին նախկինում պատկանելիս է եղել այդ վանքին: Իշխանուհին հատուկ ընդգծում է, որ այս նվիրատվությունը նա կատարել է «ոչ ի գրկանաց, ոչ ի գեղէ, ոչ ի պարոնհողո, այլ մեր հալալ դրամագին,

<sup>348</sup> Վ. տ. էջ 80:

<sup>349</sup> Նույն տեղում, էջ 10-11:

<sup>350</sup> Դ, 3, էջ 238: Վ. տ., էջ 83:

<sup>351</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>352</sup> Նույն տեղում, էջ , 39, 59, 85, 131:

ազատ յամեն հարկաց...»<sup>353</sup>:

Ժողովրդի սոցիալական ծանր վիճակը թեթևացնելու նպատակով ոմն Ջուլբեկ վերացնում է դեհմեթարին (կողմնապետ, հարկահավաք-կուսակալ) տրվող մի շարք հարկեր<sup>354</sup>: Հովհաննես արքայունը Հոռոմոսի վանքին շնորհում է «:Խ: (40) կապիճ ցորեն սերմացու»<sup>355</sup>:

Օրբելյանների սպարապետ Վահրամ Շահունեցու հարազատները, կառուցելով Հերիերի Ս. Սիոն եկեղեցին, ի թիվս այլ ընծաների, տեղի հոգևորականությանը նվիրում են «Կոռ արտոքն», այսինքն՝ կոռային աշխատանքով մշակվող արտը և «Երիցակալերը»<sup>356</sup>: Ինչպես հայտնի է, կոռը հարկադիր, ձրի աշխատանք էր կամ ծառայություն. այս երևույթը տարածված էր միջնադարյան Հայաստանում: Ա. Հովհաննիսյանի կարծիքով՝ ֆեոդալական հողերը մշակողները, այսինքն՝ «անմիջական արտադրողները հողամրացված կոռվորներ էին»<sup>357</sup>: Վանական միաբանությունները, ինչպես նշեցինք, իբրև նվեր ստանում էին «կոռավար հողեր»<sup>358</sup>: Օրինակ՝ Գագիկ Շահնշահը Սահակ Արշարունյաց եպիսկոպոսի խնդրանքով ազատում է «զՄրենոյ կոռն, որ ի Նախճաւանի էր, զմարդոյ եւ զեզին»<sup>359</sup>: Մարծպանի որդի Գրիգորը, ի թիվս այլ ընծաների, Դսեղի վանքին շնորհում է «Մեծ կոռավարն»<sup>360</sup>: Գյուղացիները կոռային աշխատանքները շարունակում էին կատարել նաև նվիրաբերումից հետո: Վիմագրերում հանդիպում ենք մարդու, եզան, իշու և «յամենայն ցեղ կոռ»-երի<sup>361</sup>:

<sup>353</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>354</sup> Դ, 3, էջ 50, Դ, 5, էջ 53, Վ. տ., էջ 48, 83:

<sup>355</sup> Վ. տ., էջ 69, 85, 105:

<sup>356</sup> Դ, 3, էջ 145:

<sup>357</sup> Վ. տ., էջ 102, 113:

<sup>358</sup> Նույն տեղում, էջ 10, 27, 80, 161:

<sup>359</sup> Վ. տ., էջ 70-71:

<sup>360</sup> Դ, 3, էջ 145:

<sup>361</sup> Նույն տեղում, էջ 54:

## ԺԳ. Հնձանների նվիրատվություն

Այգեգործական մթերքները մշակելու նպատակով այգետեղերում կամ, այլ վայրերում կառուցվում էին հնձաններ, որոնք ջրադացների մմանությամբ պատկանում էին առանձին ազգատոհմների, ինչպես նաև վանական եղբայրությունների: Պտղահյութն օգտագործվում էր տարբեր նպատակներով (ոգելից խմիչքներ՝ իբրև Բրիստոսի արյուն՝ պատարագների ժամանակ հավատացյալներին հրամցվող, օշարակներ, այլ ըմպելիքներ): Այսպես՝ Վարդան վարդապետն ու Մխիթարիչը, ի շարս բազմաթիվ այլ նվիրատվությունների, Հովհաննավանքին են ընծայաբերում «հնձանս բազմաձախս»<sup>362</sup>: Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ժամանակ Հառիճավանքը, ի թիվս այլ շնորհների, իբրև նվեր ստանում է նաև հնձան<sup>363</sup>: Հնձանների սեփականատեր են դառնում Բագարանի և Բագնայրի վանքերը<sup>364</sup>:

## ԺԴ. Գրերի և սրբազան մատունիների նվիրատվություն

Դեռևս վաղնջական ժամանակներից հայ ժողովուրդը, ի թիվս այլ քաղաքակիրթ ժողովուրդների, պաշտամունք է ունեցել գրքի նկատմամբ: Դրանք հիմնականում ձեռագիր սրբազան մատյաններն էին, որոնք շատ թանկ արժեք ունեին և համարվում էին հարստություն ու գանձ: Վիմական արձանագրություններում բազմաթիվ հիշատակություններ կան սուրբ գրքերի, ավետարանների<sup>365</sup>, գրակալների<sup>366</sup>, և այլ նվիրատվությունների մասին: Մարմաշենի վանքը մի շարք կալվածքների հետ ստանում է ընդ սմին հին եւ նոր կտակարաններ<sup>367</sup>:

<sup>362</sup> Նույն տեղում, էջ 48, 52:

<sup>363</sup> Վ. տ., էջ 39:

<sup>364</sup> Նույն տեղում, էջ 18, 146:

<sup>365</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 135:

<sup>366</sup> Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ I, աշխատասիրությամբ Եվգինե Մուշեղյանի, Հայերեն արձանագրությամբ առարկաներ, Երևան 1964, էջ 60, 62, 66:

<sup>367</sup> Վ. տ., էջ 70:

Ի դեպ, նշենք, որ Ապղարիպ մարգապանը Անիի Ս. Փրկիչ եկեղեցուն նվիրում է «Աւետարան և տաւնական»<sup>368</sup>: Աբաս իշխանի որդի Գրիգոր վարդապետը Մակարաւանքին ընծայում է «պատուական գրեանք եւ խաչ մասամբ»<sup>369</sup>: Խոշոր կրօնական գործիչ Գրիգոր Տուտեորդին Սանահինի վանքին ընծայում է «ուրն գիրք, երկու վերացման խաչ մասամբ, երկու վառ ատլաս, ոսկեգիր հարցնատետր»<sup>370</sup>: Նույն վանքին «ոսկետուփ աւետարան» է ընծայում իշխան Վաչեն, որն իրեն այս վիճագրում կոչում է «ծառայ Չաքարէի»<sup>371</sup>, ավետարաններ, «պատուական գրեան» և զարդեղեն ստանում է Դսեղի վանքը<sup>372</sup>: Առատ նվերներ (ոսկեզօծ խաչ, նափորտներ, ատլաս) է ստանում Հաղպատի վանքը<sup>373</sup>: Իբրև կանոն՝ սուրբ գրքերի վաճառքը համարվում էր նվիրատվություն: Կան ուղղակի վկայություններ եկեղեցական սպասքի<sup>374</sup>, սկիհների<sup>375</sup>, ոսկյա և արծաթյա խաչերի<sup>376</sup>, բուրվառների<sup>377</sup> և նրանց պահարանների<sup>378</sup>, բշոցների<sup>379</sup>, կանթեղների<sup>380</sup>, տարազի՝ շուրջառների<sup>381</sup>, նափորտների<sup>382</sup>, ընծայաբերման կապակցությամբ, ինչպես նաև եկեղեցիների զանգակատների կառուցման<sup>383</sup>, նորոգման և զանգակների նվիրատվության մասին<sup>384</sup>: Չանգակատուն կառուցելու մասին վկայություններ կան նաև հետսագույն ժամա-

<sup>368</sup> Դ. 1, էջ 44-45:

<sup>369</sup> Դ. 6, էջ 187-188:

<sup>370</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահինի վանքը, էջ 111:

<sup>371</sup> Վ.տ., էջ 52:

<sup>372</sup> Նույն տեղում, էջ 83:

<sup>373</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 167, 171:

<sup>374</sup> Դ. 3, էջ 149:

<sup>375</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 172:

<sup>376</sup> Վ. տ., էջ, 73, 78, 103:

<sup>377</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>378</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 175, 176, 194:

<sup>379</sup> Վ. տ., էջ 125:

<sup>380</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 171:

<sup>381</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահինի վանքը, էջ 108, 138: Դ. 6, էջ 91:

<sup>382</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 171:

<sup>383</sup> Դ. 3, էջ 101:

<sup>384</sup> Նույն տեղում, էջ 85, Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, էջ 224:

նակաշրջաններում, ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական տարբեր գաղթօջախներում<sup>385</sup>:

Մեծահարուստ ավատներից վանքերն ու եկեղեցիները ստանում էին «Ձիթագին»<sup>386</sup>, «մոմագին»<sup>387</sup> կամ «լուսագին»<sup>388</sup>:

Դարպաս (նախկին՝ Ըղուերծ) գյուղի Ս. Աստվածածին եկեղեցուն Տարսայիճ Օրբելյանը շնորհում է կալվածներ, որոնց եկամուտներից բաժին պետք է տրվեր Տաթևի վանքին իբրև լուսագին<sup>389</sup>: Հաղպատը և այլ վանքեր ստանում են մոմագին<sup>390</sup>:

### ԺԵ. Ոգելից խմիչքների նվիրատվություն

Վանքերում և եկեղեցիներում արարողությունների ժամանակ, ինչպես նշել ենք, օգտագործվում էր անապակ գինին իբրև Զրիստոսի արյան խորհրդանիշ: Իհարկե, այն օգտագործվում էր նաև այլ նպատակներով: Մենք ունենք բազմաթիվ վկայություններ ոգելից խմիչքների նվիրատվության մասին:

1301 թ. Ճարի որդին և Ումեկի թոռ Թադարտերը իր «խաս այգուց» «:Ճ: (100) կուծ գինի» նվիրաբերում է Հաղարծնի վանքին՝ հանձնին Դասապետ վարդապետի<sup>391</sup>: Աշտարակի Կարմրավոր եկեղեցու սպասավորները 1324 թ, իբրև ընծա ստանում են «:Ժ: (10) փաս գինի ի Թամրայ այգույն»<sup>392</sup>: Գինիները պահպանվել են հատուկ պատրաստված հորերում, որոնք կոչվել են «գուբ գինույ»<sup>393</sup>:

<sup>385</sup> Դ, VII (Ուկրաինայի և Մոլդովայի հայկական վիմագրերը), կազմեց Գ.ր. Մ. Գրիգորյանը, Երևան, 1996, էջ 195:

<sup>386</sup> Դ, I, էջ 60, Վ. տ., 97:

<sup>387</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 171:

<sup>388</sup> Դ, 2, էջ 114:

<sup>389</sup> Նույն տեղում:

<sup>390</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 171:

<sup>391</sup> Դ, 6, 78:

<sup>392</sup> Ս. Սաղումյան, Աշտարակ, Պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Երևան, 1998, էջ 169: «Փաս» եզրույթի մասին մանրամասն տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 332-338:

<sup>393</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 141:

## ԺԶ. Այլ նվիրատվություններ (Վախմ)

Աթաբակ Վահրամը Ս. Հովհաննեսին տրված «ոխմի» (վախմի) շարքում տալիս է վարելահողեր՝ իրենց «ջրով ու Դ: (4) կոբարովն» (իմա՝ սահմանովն)<sup>394</sup>: «Վախմի» մասին հիշատակություններ են պահպանվել Վայոց ձորի և այլ շրջանների վիմագրերում<sup>395</sup>:

Վկայություններ ունենք, որ Վարագա վանքը հասույթ էր ստանում կապալավարձով<sup>396</sup>, որը հարկադրման ենթակա չէր, և եկամուտը լինում էր «ազատ յամենայն չարէ»<sup>397</sup>:

Փաստեր կան նաև «ոսկի ապարանջանների» և թանկագին քարերի<sup>398</sup> փոխանակության գնով կալվածքներ ձեռք բերելու և նվիրաբերելու մասին<sup>399</sup>:

Ընդ սմին զգուշացվել է, որ նվիրաբերված շարժական և անշարժ գույքը պետք է մնար նախատեսված վայրում և ոչ մեկ այլ տեղ<sup>400</sup>:

Քանիցս նշել ենք, որ, իբրև կանոն, հոգևոր օջախներին կատարված նվիրատվություններն ազատվում էին պետական հարկերից<sup>401</sup>: Պատահական չէ, որ օտար ներխուժումների ժամանակ իրենց ունեցվածքն անձամբ հսկելու նպատակով այս կամ այն տոհմի հովանավորած վանքերում իբրև վանահայրեր հանդես են գալիս նույնիսկ խոշոր իշխաններ: Վերն արդեն ակնարկել ենք, որ արցախյան հզոր իշխան Վախտանգի որդի Հասանը, 1182 թ. իր կարողությունը բաժանելով վեց որդիների միջև, իր տիկնոջ՝ Մամայի հետ միասին

<sup>394</sup> Վ. տ., էջ 165-166:

<sup>395</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը, էջ 189, Դ. III, էջ 101, Դ. V, էջ 24, 167, 138, 194, 215 և այլն:

<sup>396</sup> Գրիգոր Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում, էջ 200-202:

<sup>397</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>398</sup> Դ. III, էջ 56, Դ. VI, էջ 31:

<sup>399</sup> Նույն տեղում:

<sup>400</sup> Դ. 5, էջ 133:

<sup>401</sup> Դ. II, էջ 97, 101, Դ. III, էջ 55, 216, 218-219 (ներդիր), Դ. IV, էջ 265, Դ. VI, էջ 85, 139, 204:

գալիս է Խութավանք «...եւ զգեցաք զձեւ միանձանց»<sup>402</sup>: Այս առումով կարելի է զուգահեռներ անցկացնել մահմեդական աշխարհի վակֆի հետ: Ականավոր արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը ի մասնավորի քննել է վակֆի էությունն ու բովանդակությունը: Նրա կարծիքով՝ «վակֆ» նշանակել է «վաճառքն արգելված կալվածք, ունեցվածք, որ իր ձեռքում ունեցողը կարող էր միայն հասույթից օգտվել, բայց չէր կարող այն օտարել: Վակֆ կոչվում էին այն հողերը, շարունակում է երջանկահիշատակ գիտնականը, որոնք բարեգործական նպատակներով առհավետ նվիրված են մահմեդական կրոնական հաստատություններին: Վակֆ էին համարվում նաև քրիստոնեական վանքապատկան կալվածքները»<sup>403</sup>:

Այս առումով արժեքավոր են Ռուստամ Օրբելյանի 1431 թ. դեկտեմբերի 21-ին կաթողիկոս Գրիգոր Մակվեցուն և Տաթևի առաջնորդ Շմավոն Անգեղակոթցուն 1450 թ. կատարած «վակֆերը» Էջմիածնի և Տաթևի վանքերին բազմաթիվ գյուղեր ու կալվածքներ նվիրաբերելու մասին: Կալվածագրերում մանրամասնորեն նշված են օտարվող տիրույթների աշխարհագրական սահմանները: Կրոն. Հ. Դ. Փափագյանը ի նորո թարգմանելով և ուսումնասիրելով առուծախի շարիաթական բոլոր կանոններով ձևակերպված և վավերացված այս փաստաթղթերը, կարծում է, որ այդ առքուվաճառքն իրականում կրում էր «ֆիկտիվ բնույթ» և ըստ էության նվիրատվական բովանդակություն ուներ<sup>404</sup>:

<sup>402</sup> Վ. տ., էջ 34

<sup>403</sup> Տե՛ս Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 380, ծանոթ, 143:

<sup>404</sup> Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ Ա, Երևան, 1968, էջ 66-76, 78-82:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԸ

(Ըստ վիմական արձանագրությունների սվյալների)

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի անշարժ և շարժական գույքից հոգևոր օջախները ստացել են նաև կանխիկ դրամ:

Իբրև կանոն պատարագներ ստանալու նպատակով հավատացյալներից շատերը նվիրաբերել են 20-ական դահեկաններ (դեկաններ)<sup>405</sup>: Արժաթ դահեկանները կոչվել են սպիտակ<sup>406</sup>, դեկան<sup>407</sup>, երբեմն նաև ստակ («ըստակ»)<sup>408</sup>, «դուկատ»<sup>409</sup>, «սպիտակ սուլտանի»<sup>410</sup>, հետագա ժամանակներում՝ սկսած 17-րդ դարից՝ նաև «թուման»<sup>411</sup>: Դսեղի Բարձրաբաշ վանքին :ԽԵ: (45) դահեկան է նվիրում հայտնի Պռոշ Խաղբակյան իշխանը<sup>412</sup>: Տեղերի վանքին հավատացյալները տալիս են :ՄՌ: (200.000<sup>°</sup>) սպիտակ<sup>413</sup>: Ի դեպ, հիշատակված 200.000 դրամի վկայությունը կասկած է հարուցում, սակայն մենք հնարավորություն չունենք ստուգելու այդ թվի իսկությունը: :ՅՀԵ: (375) սպիտակով գնվում է այգի և տրվում է Սանահնի

<sup>405</sup> Տե՛ս Լ. Սարգսյան, Դիտողություններ Վանեվանի 903 թ. արձանագրության մասին, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2005, թիվ 3 (24), էջ 235: Դրամ-դահեկանի մասին տե՛ս նաև Դ. III, էջ 75, 77, 79, 81, 84, 158, 217, Դ. V, էջ 128, Վ. տ., էջ 28, 84, 95, 98, 100, 118, 162:

<sup>406</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը, էջ 162, Դ. III, էջ 223, 239:

<sup>407</sup> Նույն տեղում, էջ 75, 77, 79, 81, 84, 158, 217, Դ. V, էջ 128, Վ. տ., էջ 28, 84, 91, 95, 98, 100, 118, 162:

<sup>408</sup> Դ. V, էջ 43, 45, 46, 55:

<sup>409</sup> Դ. VI, էջ 19, 71, 42:

<sup>410</sup> Վ. տ. էջ 97:

<sup>411</sup> Դ. V, էջ 112, 196, 264, 268:

<sup>412</sup> Վ. տ., էջ 91:

<sup>413</sup> Նույն տեղում, էջ 117:

վանքի հյուրատանը<sup>414</sup>: Դրամական կամ այլ նվիրատվությունները երբեմն կոչվել են «Հալալ ինչք»<sup>415</sup>, «Հալալ արդիւնք»<sup>416</sup>, «Հոգոյ արդիւնք»<sup>417</sup>, «Հոգոյ բաժին»<sup>418</sup>, «Հոգոյ թոշակ»<sup>419</sup>, «Արդար ինչք»<sup>420</sup>, «Հոգո պահուստ»<sup>421</sup>, «Հոգո պահեստ»<sup>422</sup>, «Հոգո պատուաստ»<sup>423</sup>, «Հոգոյ պաշար»<sup>424</sup>, որոնք շնորհվում էին «ըստ կարի»<sup>425</sup> կոչվելով նաև «կտակ մշտնջենաւոր»<sup>426</sup> կամ պարզապէս «արդիւնք»<sup>427</sup> և «ինչք»<sup>428</sup>: Երբեմն նշվում էր նվիրատվության հատուկ նպատակը՝ «Ի շինութեան գաւթիս»<sup>429</sup> կամ եկեղեցու այս կամ այն հատվածը կառուցելու և կամ նորոգելու մասին: Շնորհաւոր անունով տփղիսեցի մի հավատացյալ Հաղպատի վանքին է նվիրում «հարիւր դահեկան ի շինութիւն ժամատանս»<sup>430</sup>: Անի մայրաքաղաքի Սահակ քահանան կրոնավորներին զգուշացնում է, որ իր հաջորդները պարտավոր են «զնոյն պայմանս կատարել», ինչ ինքը սահմանել է<sup>431</sup>: Այդ պահանջը տեսնում ենք նաև Աղստևի հովտի<sup>432</sup> և Վայոց ձորի<sup>433</sup> վիմագրերում: Վայոց ձորի Աղավնաձոր գյուղի Ներքին Ուլգյուր գյուղում կառուցված ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին փորագրված է Նանե

<sup>414</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>415</sup> Դ. I, էջ 34, Դ. II, էջ 21, Դ. V, էջ 246:

<sup>416</sup> Դ. VI, էջ 78:

<sup>417</sup> Դ. 3, էջ 217, Դ. V, էջ 43, Դ. VI, էջ 25, 26, 27, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 38, 39 և այլն:

<sup>418</sup> Դ. V, էջ 57: Հաղբատ, 117:

<sup>419</sup> Դ. I, էջ 34:

<sup>420</sup> Դ. V, էջ 129:

<sup>421</sup> Դ. VI, էջ 25:

<sup>422</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>423</sup> Դ. I, էջ 50:

<sup>424</sup> Վ. տ., 151:

<sup>425</sup> Հաղբատ, էջ 162, 164, 192, 199, 200, 209, 226:

<sup>426</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>427</sup> Դ. III, էջ 213, Դ. IV, էջ 123:

<sup>428</sup> Դ. III, էջ 213, Դ. V, էջ 56, 58, 207:

<sup>429</sup> Վ. տ., 151:

<sup>430</sup> Կ. Դաֆադարյան, Հաղբատ, էջ 168:

<sup>431</sup> Դ. I, էջ 34:

<sup>432</sup> Դ. VI, էջ 39, 40:

<sup>433</sup> Դ. III, էջ 35, 36:

անունով հավատավորի 1297 թ. նվիրատվական արձանագրությունը, որով նա պարտավորեցնում է իր զավակներին՝ նույն կերպ կատարեն նվիրատվությունը, ինչ իր կենդանության օրոք. «...յետ եւ իմ որդիքն տան անխափան: Ով չտա՝ մեր մեղացն տէր է»<sup>434</sup>: Նույն բովանդակությունն ունի Թամթախաթունի 1308 թ. արձանագրությունը Մճռակաձորում եղած իր այգին նույն Ս. Աստվածածին եկեղեցուն այգիներ նվիրաբերելու մասին: Իշխանուհին գրում է, որ եկեղեցու սպասավորներին՝ նվերներ «յետ եւ իմ որդիքն տան անխափան. ով չտա՝ իմ մեղացն տէր է»<sup>435</sup>:

1283 թ. մեծահարուստ Ճարը՝ մանագկերտցի պարոն Ումեկի որդին, «յաշխարհակալութեան Արդունին և թագաւորութեան վրաց Դեմետրի Բագրատունոյ» հիշատակում է, որ իր հայրը «Ումեկն գնել էր զԳետիկ ի :ԽՌ: (40.000) կարմիր դուկատի: Ես Ճարս գնեցի զՅովս իւր ամեն սահմանաւքն, ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր եւ ոսկին թանգ. ի :ԴՌ: (4000) կարմիր դուկատ...տվի Գետկա Ախտուալձաճնիս՝ իմ հոգո տանս...»<sup>436</sup>: Պոռշ իշխանը մի շարք կալվածքների հետ միասին Այրիվանքին ընծայում է «:ԺՌ: (10.000) սպիտակ»<sup>437</sup>: Մխարգրձելը «:ՌՇ: (հազար հինգ հարյուր) սպիտակ» է հատկացնում Ս. Նշան եկեղեցուն իբրև «մոմագին»<sup>438</sup>:

Արդեն հանգամանորեն նշվել է Վանեվանի 903 թ. ստացած դրամական եկամուտների մասին և կարիք չկա անդրադառնալ այդ հարցին, սակայն շարունակենք ծանոթանալ մյուս վկայություններին: Շահանդուխտ Ա Սյունյաց թագուհին Որոտնավանքի վանահայրերին նվիրում է 6000 դրամ, Վայոց ձորի Նորավանքը այգի ձեռք բերելու համար կանխիկ ստանում է 4000 դրամ: Շնորհավոր քահանան նույն վանքին ընծայում է 1000 դրամ<sup>439</sup>: Դրամական նվերներ է ստանում

<sup>434</sup> Դ. III, էջ 35:

<sup>435</sup> Նույն տեղում:

<sup>436</sup> Դ. VI, էջ 71:

<sup>437</sup> Վ. տ. էջ 125:

<sup>438</sup> Կ. Ղափաղարյան, Հաղբատ, էջ 171:

<sup>439</sup> Դ. III, էջ 217:

Եղեգնաձորի Թանահատի վանքը<sup>440</sup>: Կարծում ենք, ստացված կան-  
խիկ դրամը գանձ դարձնելու փոխարեն վանահայրերը այն դնում  
էին շրջանառության մեջ և կամ տրամադրում հոգևոր-կրթական  
կենտրոններին, մասնավորապես Գլաձորի համալսարանին՝ նրանց  
տնտեսական վիճակը բարելավելու նպատակով:

Ակադ. Ա. Հովհաննիսյանը, խոսելով նվիրատուների մասին, նկա-  
տում է.

«Երկրից փախչողները կամ երկրում մնալով՝ ծանր տուրքերից  
ու հալածանքներից խուսափել կամեցողները իրենց հողերն  
էժանագին վաճառում էին եկեղեցուն, երբեմն կամավոր վախճն  
էին անում եկեղեցուն իրենց գույքերը և կամ նույնիսկ հրաժարվում  
անձնական իրենց ազատությունից՝ ճորտագրվելով եկեղեցուն»<sup>441</sup>:  
Խիստ է ասված: Անտեսված է մարդու հոգեկան և բարոյական  
բավարարվածության խնդիրը: Գիտնականը նկատի ունի նաև  
Արցախական աշխարհի «վերագգեստավորված» նշանավոր Վախ-  
տանգյաններին, որոնք, ինչպես ասել ենք, իրենց տիրույթները  
բաժանելով զավակների միջև, մտան վանք՝ իրենց սեփական  
կալվածքներին մոտիկից տիրություն անելու նպատակով:

Նվիրատուն և նվիրառուն երկուստեք պայմանավորվում էին, թե  
եկեղեցական որ տոների ժամանակ էին կատարվելու մերձավորների  
կամ հանգուցյալ մարդկանց հիշատակի պատարագները:

### Հիշատակության օրեր էին սահմանվում

(Տվյալները ֆաղված են վիմական առձանագրություններից<sup>442</sup>)

1.«Ի տառնի Երեմիա մարգարեի»

2.«Ի տառնի սբ Յակոբայ»

3.«Ի տառնի Վահանայ»

4.«Ի Տառնի սբ Խաչին»

<sup>440</sup> Նույն տեղում, էջ 75, 77, 79:

<sup>441</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, I, էջ 308:

<sup>442</sup> Հիշատակության օրերի բնագրային քաղվածքները բազմաթիվ են, այդ  
պատճառով չենք նշում նրանց էջերը – Լ. Ս.:

- 5.«Ի տաւնի Խաչգիւտի»
- 6.«Ի տաւնի Զատկին»
- 7.«Ի տաւնի Ծառզարդարի»
8. «Ի տաւնի Սրբոցն Քառասնիցն»
- 9.«Ի տաւնի Դարփի»
- 10.«Ի տաւնի Նոր Կիրակէին»
- 11.«Ի տաւնի Բարսեղի»
12. «Ի տաւնի սբ Սարգսի»
- 13.«Ի տաւնի Յայտնութեան Ճրագալուցին»
14. «Ի Տաւնի Սահակայ»
- 15.«Ի տաւնի Հռիփսիմէի, (Հռոմսիմէի, Հռիփսիմեանց)»
- 16.« Ի տաւնի Վարդանանց»
- 17.«Ի տաւնի Աւետեաց Աստուածածնի»
- 18.«Ի տաւնի ս.Փոկասի»
- 19.«Ի տաւնի ծննդեան Քրիստոսի»
20. «Ի տաւնի Խաչվերացի»
- 21.«Ի տաւնի Եսայի մարգարէի»
22. «Ի տաւնի Թադեոսի առաքելոյն»
23. «Ի տաւնի Սրբոյն Գրիգորի»
24. «Ի տաւնի Ոսկեանց»
25. «Ի տաւնի Կիրղի»
26. «Ի տաւնի Ստեփանոսի»
27. «Ի տաւնի Նաւասարդի»
28. «Ի տաւնի Զրօրիների»
29. «Ի տաւնի Տեառնընդառաջի»
30. «Ի տաւնի Յոհանու սբ Խաչի»
31. «Ի տաւնի Վարդապառի»
32. «Ի տաւնի Պետրոսի և Պօղոսի (Պաղոսի)»
33. «Ի տաւնի սբ Անտոնի»
34. «Ի տաւնի Ղազարու»
35. «Ի տաւնի Վարագայ սբ Խաչի»
36. «Ի տաւնի Երկրորդ գալստեան»

37. «Ի տաւնի թագաւորին սբ Թեոդորոսի (Թորոսի, Թեոթոսի)»
38. «Ի տաւնի Կոստանդիանոսի թագաւորի»
39. «Ի տաւնի Վերափոխման»
40. «Ի տաւնի Աղուիացից»
41. «Ի տաւնի Ծննդեան»
42. «Ի տաւնի սբ Աստուածածնի»
43. «Ի տաւնի Համբարձման»
44. «Ի տաւնի Գայիանէի (Գայիանեանց)»
45. «Ի տաւնի սբ Գեորգայ»
46. «Ի տաւնի Բարեկենդանին»
47. «Ի տաւնի Շողակաթի»
48. «Ի տաւնի Սբ Խաչի», («Սուրբ Նշանի»)
49. «Ի տաւնի սբ Հայրապետացն Նիկիոյ սբ ժողովոյն»
50. «Ի տաւնի Կիրակոսի»
51. «Ի տաւնի Սուրբիասեանց»
52. «Ի տաւնի Զրիստափորի»
53. «Ի տաւնի Նունեայ և Մանեայ»
54. «Ի տաւնի Եղիական Շաբաթ օրվա»
55. «Ի տաւնի «Թեղկի», («Թեկղի»)
56. «Ի տաւնի Աթագինէի»
57. «Ի տաւնի Եփեսոսի»
58. «Ի տաւնի Նիկողայոսի»
59. «Ի տաւնի Անդրէ առաքյալի» և այլն:

Նվիրատվական արձանագրություններում և կալվածագրերում հաճախ հիշատակվում են 318 հայրապետները<sup>443</sup>:

Նվիրատվությունները զարգացած միջնադարում, ինչպես վերը ակնարկեցինք, երբեմն կոչվում են «վախմ», որը Հ. Աճառյանի մեկնաբանությամբ նշանակում է «Բարեպաշտական ուէր, եկեղեցուն կտակուած հող կամ կալուած»<sup>444</sup>: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ նվիրատուն գնում է անշարժ կամ շարժական գույքը և ապա

<sup>443</sup> Դ. VI, էջ 42:

<sup>444</sup> Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ 4, էջ 295:

նվիրաբերում այս կամ այն հոգևոր օջախին<sup>445</sup>:

Ի վանե Օրբելյանը, հետևելով իր նախորդների սովորությանը, Սանահինի վանքին է վերադարձնում «մեր ամենայն գաւառքն քաղաքաւք, գիւղիւք, ազատաւք եւ շինականաւք վերստին վախճ տուաք Ս. Աստուածածնին»<sup>446</sup>: Կարծում ենք՝ այստեղ խոսքը տասանորդ հարկի մասին է:

«Դրամագին այգիներ» են ստանում Զոբայրը<sup>447</sup>, Հոռոմայրը<sup>448</sup>, Եղվարդի եկեղեցին<sup>449</sup>, Հառիճա վանքը<sup>450</sup> և շատ ուրիշներ: Ի դեպ, Հաղպատի վանքի առաջնորդ տեր Բարսեղը Լմբատավանքի կապակցությամբ գրում է. «Գնեցի զվանքս յանաւրիմաց... եւ զջուրն, որ իւրեան էր ի հնուց ելեալ»<sup>451</sup>: Վերը նշեցինք, որ այլազգի ներխուժողները, բռնազավթելով կրոնական հաստատությունները և նրանց եկամտի աղբյուրները, դրանք առավել քանկ գնով վերավաճառում էին նախկին տերերին կամ այլ անձանց:

\* \* \*

Հավատացյալ նվիրատուները, վախենալով, որ իրենց նվիրաբերածը կարող են այլևայլ ժամանակներում քաղաքական անկայուն պայմանների պատճառով խլել, բռնագրավել, ուստի եկեղեցու հայրերի հետ միասին նվիրատվական արձանագրության մեջ ավելացնում էին անեծքի մասը կամ, Ա. Հովհաննիսյանի խոսքերով ասած, «վիմագիր նգովքը»<sup>452</sup>, որը խիստ անհրաժեշտ էր համարվում ապահովության ակնկալիքով: Նվիրատվական վիմագրերում, հատկապես անեծքի բաժնում, հաճախ հիշատակվում են քրիստոնեական եկեղեցու մերժած անձինք՝

<sup>445</sup> Դ. I, էջ 29, 32, 36, 43, 49, 63, Դ. II, էջ 109,

<sup>446</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը, էջ 138:

<sup>447</sup> Վ. տ. էջ 35:

<sup>448</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>449</sup> Նույն տեղում, էջ 37

<sup>450</sup> Նույն տեղում, էջ 79-80:

<sup>451</sup> Վ. տ., 37:

<sup>452</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, I, էջ 312:

Հուդան<sup>453</sup>

Արիոսը<sup>454</sup>

Բելիարը կամ սատանան<sup>455</sup>

Կայենը<sup>456</sup>

Վասակ Ուրացողը<sup>457</sup>

Հովհանոս Ուրացողը<sup>458</sup>

Կորիսը<sup>459</sup> և այլք:

Մեծաքանակ նվիրատվությունների ժամանակ հատկապես նշվում էին նաև օտար իշխանավորները, որոնք հարմար պահն օգտագործում էին բռնազավթելու հոգևոր հաստատությունների ունեցվածքը: Սա է, կարծում ենք. հիմնական պատճառը, որ բազմաթիվ արձանագրություններում դիտավորյալ ավելացվում էր անեծքի բաժինը.

«... և թե առաջ տաճիկ փոխի և հանել ջանա (նվիրատվությունը - Լ. Ս.): Ռ: Ռ: Ռ: (1000, 1000, 1000) նալաթ (ամոթ) լինի, յիւր Մահմետէն ապիզար (անիծված) լինի...»<sup>460</sup>: Կամ՝ նույնանման բանաձևումով. «Թէ տաճիկ փոխի եւ խլել ջանայ յԱստուծոյ. եւ ամենայն սրբոց նգովված եղիցի եւ յիւր փեղամբարէն ի Մահմետէ ապիզար եւ Ռ: Ռ:

<sup>453</sup> Դ, 1, էջ 15, 23, 26-28, 30, 33, 63:

<sup>454</sup> Դ, 3, էջ 216:

<sup>455</sup> «Բելիար» նշանակում է «կռվող, ժանտ, ապստամբ»: Նա ապստամբել էր Աստծո դեմ՝ ընդօրինակելով սատանային կամ սաղայելին (տե՛ս Աստվածաշունչ, Բ Կորնթացոց, 2, 15, նաև՝ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 377):

<sup>456</sup> Դ, 1, էջ 15, 17, 23, 26-28:

<sup>457</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 361, Դ, 3, էջ 239:

<sup>458</sup> Հովհաննոս Ուրացող (Փլավիոս Կլավդիոս) հռոմեական կայսր էր (331-363): Փորձեց հերանոսությունը դարձնել պետական կրոն, դադարեցրեց հերանոսների հալածանքները, վերադարձրեց հերանոս տաճարներից խլված ունեցվածքը, իշխանությունից հեռացրեց քրիստոնյաներին: Քրիստոնյա եկեղեցին նրան համարեց Ուրացող (տե՛ս Հ. Բարթիկյան, ՀՍՀ, հ. 6, էջ 636):

<sup>459</sup> Կորիսը ղևտացի էր, Մովսեսի հորեղբորորդին, ապստամբեց Մովսեսի և Ահարոնի դեմ: Նա իր երկու ընկերների՝ Դադանի և Աբիրոնի հետ անցավ գետնի տակ (Հովհ. Դրասխանակերտցի, Պատմություն, Երևան, 1996, էջ 375, ծանոթ. 55): Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ սրանք իրենց կատարած չարագործությունների համար գետնի տակ «խորասույզ եղեն» (տե՛ս Պատմություն Աղուանից աշխարհի, էջ 308):

<sup>460</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 361: Դ, 3, էջ 125:

(հազար, հազար) նալաթ լինի, մեռելաւք եւ կենդանաւք»<sup>461</sup>: Կրկնում ենք՝ օտարազգի՝ հիմնականում քուրք-թաթարական մասնաճյուղական բառերով ներթափանցված մման հիշատակագրությունները կատարվում էին այն նպատակով, որ քաղաքական անկայուն պայմաններում, ինչպիսին էր զարգացած միջնադարը, ներխուժող մահմեդական ցեղերն ու նրանց առաջնորդները, ընթերցել տալով վիմագրված անեծքի բաժինները, զգաստանային, սարսափեին և չրոնագրավեին հայոց եկեղեցու ունեցվածքը, նրա կալվածքն ու գույքը:

Ինչպես տեսնում ենք, քննարկվող թեման շատ տարողունակ է, փաստական նյութը՝ բազմաբնույթ և բազմաքանակ: Փաստերի ծովում մենք գիտակցաբար ընտրել ենք առավել ցայտուն և թեմատիկ առումով խոսուն վիմագրերը՝ շեշտելով փաստագրված նվիրատվությունների նյութական բովանդակությունը, նվիրատվության պատճառները, մատուցման եղանակներն ու ձևերը:

Ամփոփելով՝ նշենք, որ հարյուրավոր նվիրատվական արձանագրություններ կան Մերձավոր և հեռավոր Սփյուռքի բազմաթիվ գաղթավայրերում՝ Ռուսաստանի Դաշնությունում<sup>462</sup>, Ուկրաինայում<sup>463</sup>, Մոլդովայում և այլուր, սակայն ժամանակագրական և աշխարհագրական առումներով դրանք մեր թեմայի շրջանակներից դուրս են և ունեն առանձին ուսումնասիրության կարիք:

<sup>461</sup> Դ., 3, էջ 126:

<sup>462</sup> Դ., 8, (Ռուսաստանի Դաշնության հայկական վիմագրերը), աշխատասիրությանը Գրիգոր Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 31-32, 47-49 և այլն:

<sup>463</sup> Դ., 7, էջ 33, 133 և այլն:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի զարգացած ավատատիրության դարաշրջանի նվիրատվական արձանագրությունները՝ իբրև առանձին ուսումնասիրության առարկա, ամփոփ կերպով գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Վիճագրական և մատենագրական սկզբնաղբյուրների լայն հենքի վրա, պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ շարադրված սույն ատենախոսությունը հստակորեն արտացոլում է քննարկվող ժամանակաշրջանի իրավա-քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների իրական պատկերը: Բնական անդրադարձ է կատարվել նախընթաց դարերի իրողությունները ներկայացնելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայ Առաքելական եկեղեցին օգտագործել է հեթանոսական դարաշրջանների մեհենական կալվածատիրության հարուստ փորձը գույք և կայք ձեռք բերելու նպատակով՝ աստիճանաբար դառնալով ամենահարուստ ավատատիրական կազմակերպություններից մեկն իր կենտրոնաձիգ իշխանապետությամբ և գերագույն առաջնորդով՝ հանձին հայոց կաթողիկոսի: Երկրի քաղաքական իշխանության բացակայության պայմաններում հիերոկրատիան իր ձեռքն է վերցրել տնտեսական բոլոր ոլորտների ղեկավարությունը, ինչպես նաև կրթամշակութային ու արդարադատության բնագավառները: Բնական է, Հայ եկեղեցին պետք է տեր լիներ բազմաբնույթ և բազմաճյուղ հաստիքների, անսահմանափակ անշարժ և շարժական գույքի: Հասարակության լայն խավերի անմխիթար կյանքը, անորոշ ապագան, Նեոի ուրվականն ու Քրիստոսի երկրորդ գալստյան ահեղ դատաստանը հավատացյալներին մղում էին բարեգործության, միաբանության հոգևոր հայրերի հետ, հաղորդակցվելու պատարագների արարողություններին: Նվիրատուները երազում էին իրենց և հարազատների հոգու փրկության մասին, գաղափար, որը դարձավ համաքրիստոնեական եկեղեցու հիմնական և տիրապետող աշխարհայացքներից մեկը: Մենք հակված չենք ընդունելու այն վարկածը, իբրև թե հոգևոր հայրերը վարել են անհոգ և մակաբույծ կյանք,

վայելելով մեծաքանակ անսպառ հարստությունները, որոնք ձեռք էին բերվում խաչանշանի օգնությամբ ամենատարբեր եղանակներով ու միջոցներով: Ընդհակառակն՝ հոգևոր հաստատությունների, մասնավորապես վանական միաբանությունների ողջ ունեցվածքը, հսկայական կալվածքները տրամադրվում էին հոգևոր օջախներին կից կազմակերպված բարեգործական հաստատություններին՝ ուրկանոցներին. անկելանոցներին, գողետներին, անտարակույս նաև դպրության օջախներին: Այս կապակցությամբ խիստ առարկելի են մեծահանճար Միքայել Չամչյանցի, իսկ վերջին տասնամյակներին նաև ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանի մի շարք որակումները միջնադարի խոշոր պատմագիր, հմուտ վիճագրագետ Ստեփանոս Օրբելյանի հասցեին, որը լինելով մեծ կարողությունների տեր կուսակրոն հոգևորական, իր ողջ հարստությունը տրամադրել էր Սյունյաց նահանգի ուսումնագիտական հաստատություններին, Վայոց ձոր տեղափոխված հայ մտավորական այրերին և տարբեր գաղթօջախներից եկած ուսումնատենչ երիտասարդներին:

2. Պատմական յուրաքանչյուր երևույթ պետք է դիտարկել և քննության ենթարկել պատմական կտրվածքի մեջ, այլապես ուսումնասիրողը կընկնի չհիմնավորված «տեսությունների» հորձանուտը:

3. Քննարկվող ժամանակահատվածում, որն ընդգրկում է 9-14-րդ դարերը, հոգևոր կենտրոնները ձեռք բերեցին բազմաքանակ գյուղեր, ընդարձակ հողատարածքներ, հասութաբեր հաստատություններ՝ ջրաղացներ, ձիթհաններ, հնձաններ, կուղպակ-վաճառատներ, հյուրանոցներ, արտավայրեր, մանր և խոշոր եղջերավոր անասուններ, ինչպես նաև թանկարժեք եկեղեցական սպասք և սրբազան գրքեր: Նվիրատվական փաստաթղթերը կամ կալվածագրերը, իբրև կանոն, հաստատում էին երկրի սյուզերենը, գահագլուխ իշխանը և այլ ներկաներ, ընդ որում, առաջիններն իրենց մատանիներով էին դրոշմում, իսկ մյուսները պարզապես «մատանում էին», ինչպես վկայված է մատենագրական աղբյուրներում: Տաթև գյուղը Սյունիքի եպիսկոպոսարանին նվիրաբերելու ժամանակ 844 թ. ներկա է եղել 35

վկա, որից 9-ը՝ հոգևորական:

4. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տասանորդի ձևով ստացված կանխիկ գումարը՝ դրամ-դահեկանները, արգելված էր դնել շրջանառության մեջ՝ տոկոս և վաշխ ստանալու ակնկալիքով: Նվիրատվությունների ժամանակ փաստաթղթում հատուկ նշվում էր, թե որքան ժամանակով է տվյալ օբյեկտը տրվում նվիրատուին՝ ժամանակավորապե՞ս, թե՞ հավիտյան՝ «մինչ ցգալուստն Քրիստոսի»:

5. Հասութաբեր հաստատությունները, հատկապես ջրաղացներն ու ձիթհանները նվիրաբերվում էին կամ ամբողջովին, կամ մասնակիորեն: Օրինակ, վիմագրություններում հանդիպում է վկայություն, որ վանքին տրամադրվում է միայն «Աւագ ական ջրաղացն» (Դ, III, էջ 80):

6. Հայ եկեղեցու բարձրաստիճան հայրերը սահմանել են կանոններ և օրենքներ՝ հոգևորականության տարբեր խավերին տրվող եկամուտների և նվիրաբերությամբ ստացված գույքի բաժանման և մասնատրման մասին:

Հայ եկեղեցին ունեցել է ապահարկության կարգավիճակ, որը, սակայն, հաճախ ոտնահարվել է քաղաքական պայմանների փոփոխության հետ միաժամանակ՝ հատկապես օտար իշխանությունների տիրապետության շրջանում: Երկրի աշխարհիկ ավատատերերը ամեն ջանք ու եռանդ գործադրում էին պահպանելու եկեղեցուն տրված ապահարկության իրավունքը, և անբարենպաստ իրավիճակների դեպքերում իրենք էին զգեստավորվում հոգևորականի սքեմով՝ սեփական ժառանգական կալվածքն ու գույքն անձամբ հսկելու և պահպանելու նպատակով:

7. Լինելով խոշոր ավատատիրական տնտեսություն՝ Հայ եկեղեցին իր անհամար ունեցվածքով մրցակցում էր աշխարհիկ տիրակալների ու նրանց ժառանգների (գահերեց ու գահակալ իշխաններ, սեպուհներ, ազատներ) հետ: Եկեղեցու հայրերը մշտապես նեցուկ և հենարան են եղել երկրի գերագույն սյուզերենին և պետական մարմիններին, իսկ վերջիններս պարտավորված էին ամեն կերպ

ամրապնդել Եկեղեցու դիրքերը և բարձրացնել նրա հեղինակությունը հասարակական լայն զանգվածների մեջ: Այս առումով հատկանշական է Աշոտ Ռդորմաժ Բագրատունի թագավորի վարվելակերպը: Իհարկե, եղել են ժամանակներ, երբ աշխարհիկ տերերը խոչընդոտել և նեղացրել են Եկեղեցու անսահմանափակ իրավունքները՝ բարեփոխումների անվան տակ, սակայն նրանք արժանացել են սրբազան հայրերի պարսավանքին և անեծքին:

8. Իբրև ավանդապաշտ կազմակերպություն՝ Հայ եկեղեցին աշխատում էր ամեն ինչ հարմարեցնել իր գաղափարախոսությանը՝ տարբեր եղանակներով ու ձևերով:

9. Նվիրատվական արձանագրություններ կան ոչ միայն մայր հայրենիքում, այլև Սփյուռքի այլազան գաղթավայրերում:

Հայկական վիմական արձանագրությունները հարուստ և վստահելի նյութեր են ընձեռում հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ուսումնասիրելու համար: Նրանք մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստան աշխարհը հզոր է եղել միայն այն ժամանակ, երբ սերտորեն համագործակցել են հոգևոր և աշխարհիկ իշխանությունները: Այս մասին դասական դրույթ ունի Տաթևի համալսարանի մեծ ուսուցչապետ Գրիգոր Տաթևացին:

10. Հոգևոր այրերը, հատկապես պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Ստեփանոս Օրբելյանը և այլք, լինելով հոգևոր դասի ներկայացուցիչներ, անտարակույս պաշտպանել են տիրապետող դասակարգի, անշուշտ նաև կրոնական օջախների շահերը, ուստի իրենց հարստության զգալի մասը տրամադրել են երկրի կրթամշակութային օջախներին և բարեգործական հաստատություններին:

11. Գյուղացիների և շինականների նվիրաբերությունը վանական եղբայրություններին բոլորովին չի նշանակում, թե Հայաստանում դասական իմաստով եղել է ճորտատիրություն: Անշուշտ, եղել են ավատատերից կախված գյուղացիներ կամ գյուղացիական համայնքներ, սակայն նրանք ունեցել են տեղաշարժման իրավունք:

12. Հոգևորականության և գյուղացիության հարաբերությունները

վատթարացել են միայն այն դեպքերում, երբ թեմական առաջնորդները ցանկացել են գյուղական համայնքներից բռնությամբ խլել նրանց հայրենական հողատարածքները կամ վտարել նրանց բնակության վայրերից: Այս պատճառով են բռնկվել գյուղացիական ապստամբությունները նահանգական եպիսկոպոսական աթոռների դեմ, որի պատճառով նրանք երբեմն դաժանորեն ճնշվել են աշխարհիկ ավատատերերի զինական բիրտ ուժով:

13. Ուսումնասիրությունները սույն աշխատության հեղինակին բերել են այն եզրակացության, որ բարոյական առումով նվիրատվությունները եղել են կամավոր և հարկադրական: Վերջինս պայմանավորված է եղել օտար ներխուժողների տիրապետության ժամանակ սեփական գույքը ապահարկված եկեղեցու հովանու ներքո պահպանելու և բարվոք իրադրության պայմաններում դարձյալ սեփականելու նկատառումով:

14. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սահմանված պատարագներն ունեցել են որոշակի, սակայն ոչ կայուն զին:

# Օգտագործված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների ցանկ

## Ա. Ս կ զ բ ն ա ղ բ յ ու ռ ն ե Ր

1. Աստվածաշունչ, Գիրք Հին և Նոր կտակարանաց, Կ. Պոլիս, 1883
2. Արաբական աղբյուրներ. Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը՝ բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981
3. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1979
4. Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741
5. Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլ), (Կիլիկեան դատաստանագիրք 13-րդ դարի), ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Արսեն վարդապետ Գլտճեան, Ս. Էջմիածին, 1918
6. Դիվան հայ վիմագրության, պրակ 1, (Անի քաղաք) կազմեց Հ. Օրբելին, Երևան, 1966
7. Դիվան հայ վիմագրության, պրակ 2, (Գորիսի, Սիսիանի և Կապանի շրջաններ), կազմեց Ա. Բարխուդարյանը, Երևան, 1960
8. Դիվան հայ վիմագրության, պրակ 3, (Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ), կազմեց Ա. Բարխուդարյանը, Երևան, 1967
9. Դիվան հայ վիմագրության, պրակ 4 (Գեղարքունիք), կազմեց Ա. Բարխուդարյանը, Երևան, 1973
10. Դիվան հայ վիմագրության, պրակ 5, (Արցախ) կազմեց Ա. Բարխուդարյանը, Երևան, 1982

11. Դիվան հայ վիմագրության, պրակ 6, (Իջևանի շրջան) կազմեցին Ս. Ավագյանը և Հ. Ջանփոլադյանը, Երևան, 1977
12. Դիվան հայ վիմագրության, պրակ 7 (Ուկրաինա, Մոլդովա), կազմեց Գրիգոր Գրիգորյանը, Երևան, 1996
13. Դիվան հայ վիմագրության, պրակ 8, (Ռուսաստանի Դաշնություն) աշխատասիրությամբ՝ Գր. Գրիգորյանի, Երևան, 1999
14. Ջաքարիա Սարկաուզ, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870
15. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, մասն Գ, Երևան, 1967
16. Կանոնագիրք հայոց, հ Ա, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1964
17. Կանոնագիրք Հայոց, հ. Բ, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1977
18. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961
19. Կոստանյան Կարապետ, Վիմական տարեգիր, Յուցակ ժողովածոյ անանագրութեանց հայոց, Ս. Պր., 1913
20. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ. Թոսունյանի, Երևան, 1996
21. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1981
22. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975
23. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1969
24. Մուշեղյան Եվգինե, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ I, Հայերեն արձանագրությամբ առար-

կաներ, Երևան, 1964

25. Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847
26. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871
27. Պատմութիւն Արիստակիսի Լաստիւերտցոյ, աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963
28. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861
29. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1986

### **Բ. Ուսումնասիրություններ**


1. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987
2. Ալիշան Գ., Այրարատ, Վենետիկ, 1890
3. Ալիշան Գ., Սիսական, Վենետիկ, 1893
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971
5. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977
6. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979
7. Ամատունի Սահակ, վրդ., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1912
8. Առաքելյան Բ., Բաղաբները և արհեստները 9-13-րդ դարերում, հ. 1, Երևան, 1959
9. Առաքելյան Բ., Բաղաբները և արհեստները 9-13-րդ դարերում, հ. 2, Երևան, 1964
10. Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառաբանություն, Երևան, 1978
11. Ավդալբեկյան Թ., Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ,


Երևան, 1927

12. Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (9-13-րդ դդ.), Երևան, 1981
13. Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Երևան, 1964
14. Գրիգորյան Գնել, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (10-14-րդ դդ.), Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 2002
15. Գրիգորյան Գրիգոր, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում, Երևան, 1973
16. Գրիգորյան Գրիգոր, Հայկական վիմագրություն, Երևան, 2000
17. Գրիգորյան Գրիգոր, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981
18. Գրիգորյան Գրիգոր, Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1999, թիվ 2-3
19. Լալայան Ե., Նոր Բայազետի գաւառ. նշանատր վանքեր՝ Վանեվանու վանք «Ազգագրական հանդես», XXIV գիրք, Թիֆլիս, 1913
20. Խաչատրյան Գ., Մուրադյան Գ., Շաղատ, Երևան, 2003
21. Խաչերյան Լ. Գ., Գլաձորի համալսարանը, Երևան, 1973
22. Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1957
23. Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն. հ. 2, Երևան, 1964
24. Համո Սահյանի կենսագրական հոդվածը, «Սյունյաց երկիր» շաբաթաթերթ, 2005, թիվ 47
25. Հայ ժողովրդի պատմություն, Բազմահատորյակ, հ. 3, Երևան, 1976
26. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի


- պատմության, գիրք առաջին, Երևան, 1957
27. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959
  28. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948
  29. Ղաֆադարյան Կ., Հաղբատ, Երևան, 1963
  30. Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957
  31. Ղաֆադարյան Կ., Երևան. Միջնադարյան հուշարձանները, Երևան, 1975
  32. Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչաքաղաքական կարգը, Երևան, 1990
  33. Մանանդյան Հ., Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952
  34. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963
  35. Շահխաթունեանց Հ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842
  36. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. 1, Երևան, 1985
  37. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1984
  38. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1984
  39. Պողոսյան Ս., Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները 9-13-րդ դարերում, Երևան, 1956
  40. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858.
  41. Սաղումյան Ս., Աշտարակ, Երևան 1998
  42. Սարգսյան Գ., Միջնադարյան կուղպակները և դրանց նվիրատվությունը 9-14-րդ դարերում, ՊԲՀ, 1977, թիվ 3
  43. Սարգսյան Լ., Դիտողություններ Վանեվանի 903 թ. արձանագրության մասին, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2005, թիվ 3 (24)
  44. Միմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, Երևան, 1993

45. Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1896
46. Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, Տիֆլիս, 1904
47. Վարդանյան Ռ., Հայաստանի չափերն ու կշիռները (10-15-րդ դդ.), Երևան, 1989
48. Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ Ա, Երևան, 1968
49. Бартольд В. В., К вопросу о феодализме в Иране, "Новый Вестник", 1930, № 28,
50. Гафуров Б., История таджикского народа, т.1, 1949
51. Григорян Г. М., Очерки истории Сюника(IX-XV вв.), Ереван, 1990
52. Григорян Г. М., Род Орбелянов и история Сюника, М., 2004
53. Марр Н. Я., Ани, М.-Л., 1934
54. Марр Н. Я., Сборник причт Вардана, 1, СПб, 1899
55. Марр Н. Я., "Заметки Восточного отделения", 1924
56. Папазян А. Д., Аграрные отношения в Восточной Армении в XV1-XV11 вв., Ереван, 1972, с.153, 155
57. Периханян А. Г., Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959
58. Петрушевский И. П., К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества. "Вопросы истории" за 1947 г. № 4. М., 1953
59. Рашид ад-Дин, Сборник летописей, 3, М.-Л., 1946
60. Тихомиров М. Н. Крестьянские и городские восстания на Руси в11-13 вв. Москва, 1955
61. Якубовский А., Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой X-XV вв. Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР, М.-Л, 1953, "Очерки истории СССР", ч. 1





Շուշանի Պաշխափունու 1037թ. արձանագրությունը



Տիգրանի Հնդեղի 1215թ. արձանագրությունը





Ամիրսպասար Չարսեի արձանագրությունը (XII դ. վերջ, XIII դ. սկիզբ)

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ**

**ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԵՐԻ**

**ԸՆՏԻՐ ԷՋԵՐ**

**ԸՍՏ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

THE UNIVERSITY OF CHICAGO

IN THE DEPARTMENT OF CHEMISTRY

REPORT OF THE

COMMISSIONERS OF THE UNIVERSITY OF CHICAGO



# ՀԱՎԵԼՎԱԾ

Նվիրատվական արձանագրությունների ընտիր էջեր

1.

**ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԿԻՆ ԽՈՒՇՈՒՇԻ 1193 Թ.**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ**

**Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՅԻՆ ՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ**

**ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՅԱՄՍ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ ԲԱՐՍՂԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂ/ԻԿՈՍԻ ԵՒ ՅԱՄԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ԲԱՐԻԱՆՈՒՆ ՍՈՒԼԴԱՆԻ/. ՈՐԴԻ ԱՄԻՐ ՄԱՀՍՈՒՏԻ ԹՈՌՆ ՄԱՆՈՒՉԷԻ. ՅԱՄԻ :ՈՒԲ: (1193) ԹՈՒԻ[ԱԿԱՆԻՆ]. ԱՐԴ ԵՍ ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ՍՈՍԹԵՆԷՍ ՔԱՀԱՆԱԻ ԹՈՌՆ/ԳԵՈՐԳԱ ԱԻԱԳԵՐԻՅՈ ԱՐՃՈՅ ԵՒ ՋՈՒԳԱԿԻՅ ԻՄ ԽՈՒՇՈՒՇ/ԱՂԱԽԻՆ ԲՐԻՍՏՈՍԻ ՅՈՒՍԱԼՈՎ ՅՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ ԱՂՍՏՈՒԾՈՂ. ՇԻՆԵՅԱԸ ՎԵՐԸՍՏԻՆ/ ՉՄԵՐ ԳԱՆՉԱԳԻՆ ՀԱՅՐԵՆԻՔՍ ՉՍՈՒՐԲ ՓՐԿԻՉՍ ՇԱՏ ԱՇԽԱՏ/ՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆՈՐՈԳԵՅԱԸ ՅԱՌԱՋԻՆ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆՆ ՈՉ ՈՒՆԵԼՈՎ/ ՋՈՔ ԱԻԳՆԱԿԱՆ ԱՅՂ ՄԻԱՅՆ ՋԲԱԻԱԿԱՆՆ ՅԱՄԵՆԱՅՆԻ/, ՈՐՈՎ ԿԱՐՈՂԱՅԱԸ ԵՒ ԿԱՏԱՐԵՅԱԸ ԱՅՂ ԵՒ ԸՆԾԱՅԱԲԵՐ ԵՂԱԸ/ Ի ՍԱ Ի ՍՈՐԻՆ ՇՆՈՐՀԷ ՇՆՈՐՀՍ ՋՆՈՐՍ ՀՆՈՎՆ ԱՂՍՏՈՒԱՂԾԱԳԻԾ ՊԱՏ/ԳԱՄԱԻՔ ՆԱԵՒ ՋՋԱՐԴՍ ՍՊԱՍՈՒՅ Ի ՔԱՌԵՍԻՆ ԽՈՐԱՆՍՍ. ՈՐՔ/ ԿԱՆԽԵՅԻՆ ՀԱՆԻՆ Ի ՍԵՂԱՆ ՋԱՐԴԱՐ ԵՒ ՈՒԽՏԵԱԼ ՋՀԱՃԵ/ԼԻՆ ԿԱՄԱՅՆ ՀԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ. ՇԻՆԵՅԱԸ ՍՍԱ ԺԱՄԱՏՈՒՆՍ ԱՄԱՐԱՆՈ ԵՒ ՉՄԵՐԱՆՈ ԵՒ Ի ԿԵԱՆՍ ՄԵՐ ՊԱՇՏԵՅԱԸԻ ՍՍԱ ՋԵԿԱԻՈՐՍ ՃԱՆԱՊԱ[Ր]ՀԱՅ: ԱՐԴ ԵՍ ՏՐԴԱՏ ԵՐԵՅ ԵՒ ԼԾԱԿԻՅ ԻՄ ԽՈՒՇՈՒՇՍ Ի ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՅ Ի ՍՊԱՍ ՊԻՏՈՒՅ ՀԱՅԻ ԵՒ

ԳԻՆԻՈՅ ՏՈՒԱՔ/ ՉՈՐՍ ԱՅԳԻ ՅԱՐՈՒՃ ՁՍԱՂԱՐ ԵՒ ՁՇԼԻԿՆ  
 ԵՒ ՁԿՈՎԱՐԱԾՆ ԵՒ ԲԼԱՐ ԽԱՉԿԱՅՆ/ ԵՒ ՏՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ  
 ԴԻՍԱՑ. ՄԵԾ ԱՐՏ ԲԵԽԵՆՅՆ :Ճ: ԿԱՊՈՈ ՄԻՆ Ի ՄԻՔԵՄՆ  
 Ի ՋՐ/ՈՂՍՆ ԲԵԽԵՆՅՆ ԱՅՍ Է Ի ՊՂՊՂԻԿ: ԱՐԴ ԸՆԴ ԱՅՍՐ  
 ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՐԳԵԻԻ /ՊԱՐՏԻՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՔ  
 ՁԿՆԻ ՄԵՐ ԿԱՏԱՐԵԼ ԱՍԵՆԱՅՆ ԱՄԻ :Խ: ՄԻ :Ի: ՏՐԴԱՏԱ/ :Ի:  
 ՏԻԿԻՆ ԽՈՒՇՈՒՇԻՆ ԵՒ :Բ: ՍԱՐԳՍԿԱՆՆ, ՈՐԴՈ ՍՈՂՈՍՈՆԻ  
 ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ ՁՅԻՇԱՏԱԿՍ ՄԵՐ ՄԻՆՉԵԻ ՅԾԱԳՈՒՄՆ  
 ՈՐԴԻՈՅՆ/: ԱՅԼ ԵՒ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՅԷ ՇՈՐԹԵԼ ՅԱՐԴԵԱՆՅՍ  
 ՀԱՍՏԱՏԵԼՈՅ Ի/ ՍՈՒՐԲ ՓՐԿՉԷՍ: ԱՊԱ ԹԷ ՈՔ ՁԱՏՈՒՍՅԷ ԵՒ  
 ՈՐՈՇԵՍՅԷ Ձ/ՅԻՇԱՏԱԿՍ ՄԵՐ ԵՒ ԻՆՔՆ ՈՐՈՇԵՍՅԻ Ի ՓԱՌԱՅ  
 ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ. :ՅԺԸ:/ (ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ) ՆՁՈՎԵԱԼ  
 ԵՂԻՑԻ Ի ՍԱՀԷ ԵՒ Ի ԿԵԱՆՔ: ԿԱՏԱՐԱԻՉՔ ԳՐՈՅՍ ԱԻՐՀՆԵԱԼ/  
 ԵՂԻՑԻՆ:

Դիվանի հայ վիմագրության, պրակ I, Երևան, 1966, էջ 47:

## 2.

### ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1036 Թ. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի :ՆՁԵ (1036) ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ԵՒ Ի ՄԵԾԱՓԱՌ  
 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՀՁԱԻՐ ԵՒ ՏԻԵՁԵՐԱԿԱԼ ՍՄԲԱՏ/Ա,  
 ՈՐԴԻՈ ԳԱԳԿԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՅ ՇԱՀԱՅՆՇԱՀԻ. ԿԱՄ ԵՂԵԻ  
 ԻՆՁ, ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱԼ ՁԱՅԳԻՆ  
 ԱՇՆԿԻ, ՈՐ Ի ՄԵՐ ԿՈՐԴՈ ԱՐԿԱԾ ԷՐ ՔՐԻՍՏՈՍԱՍԷՐ  
 ՄԱՐԶՊԱՆԻՆԱՊԼՂԱՐԻՊԱ, ՈՐԴԻՈ ԳՐԻ/ԳՈՐՈ ՊԱՀԼԱՒՈՒՆՈ  
 ՎԱՍՆ ԱՌԱԽԵԼ ՍԻՐՈՅՆ ԵՒ ԵՐԱԽՏԵԱՅՆ, ՁՈՐ ԾԱՌԱԵԱԼ  
 ԷՐ ՁՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱԹՈՌՍ: ԱՐԴ ՏՈՒԱՔ ՈՐՄՈՎ ԵՒ/  
 ԾԱՌՈՎՔ ՊՏՂԱԲԵՐՈՎՔ ԵՒ ԱՆՊՏՂԱԲԵ ԵՒ ԽՈՏԱԳԵՏՆՈՎՔ  
 ԵՒ :Գ: ԱԻՐ ՁՈՒՐ ԱՁԱՏ Ի ԽԱԼԱԷ ԵՒ Ի ԳԵՂՁԷ ՅԱՍԵՆԱՅՆ

ՀԱՍՈՒՅ/ ԵՒ ԳՐԵՅԱՔ ՄԵԾԱՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՄՔ ԶԿՏԱԿՍ  
 ԶԱՅՍ: ԻՍԿ ՆԱ ԸՆԾԱԵԱՅ ՅԻՐ ՇԻՆԵԱԼ ԵԿԵՂԵՅԻՍ Ի ՍՈՒՐԲ  
 ՓՐԿԻՉՍ/ ԲԱԺԱԿԻ ՎԱՄՆ ՓՐԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՅԻՇԱՏԱԿ  
 ՀՈԳԻՈ ԻՒՐՈ: ԱՐԴ ԵԹԵ ՈՔ ԶԱՊԱՐԱՆՍԴ ԶՈՐ ՇԻՆԵԱԼ Է  
 ԱՊԼՂԱՐԻՊԱ ԱՌ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉՍ ԵՒ ԿԱՄ ԶՈՐ ԻՆՉ ՏՈՒԵԱԼ  
 Է Ի ՊԷՏՍ ԵԿԵՂԵՅՈՅԴ ԵՒ ՈՐՈՇԷ ՈՔ ԵՒ ԿԱՄ ՅԱՊԱՐԱՆՍԴ  
 ԲՆԱԿԻ ԵՒ ԶԵԿԵՂԵՅԻՈՅԴ ՀՈԳՄԴ ԶՈՐ ԻՆՉ ՊԻՏՈ ԼԻՆԻ  
 ԵՐԿԻՒՂԻՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՉ ՀՈԳԱ, Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԻՈՐՉԷՆ  
 ԵՒ Ի ՆՈՐԻՆ ԱԹՈՌԱԿԱԼԱՅՆ ՄԻՆՉԵՒ ԶՄԵՉ ՅԱՄԵՆԵՅՈՒՆ  
 ՆՁՈՎԵԱԼ ԼԻՑԻ. ԻՍԿ ԿԱՏԱՐԻՉ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ:

Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ 48:

### 3.

#### **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔՈՒՄ**

ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ՀԱՅ . . . . . ԵՍ ՆՎ[ԱՍՏ] ՔԱՀԱՆԱ  
 ՅՈՎԱՆԷՍ Ի ՏՂԱՅՈՒԹԵՆԷ ՄՆԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ Ի  
 ՍՊԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՍ ԵՒ ՅԵՏՈ ԲՆԱԿԵՅԱ Ի ԴՈՒՌՆ  
 ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ, ՈՐ ԵՒ ԻՄՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄՔ ԳՆԵՅԻ  
 ԶԱԴՈՉԱՆՈՅՆ ԲԱԿԵՐՆ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՅ ՏԵՂԱՅՍ՝ ՏԷԼԻՐ  
 ՀԱՅՐԱՊԵՏԱ ԵՒ ՏԷԼԻՐ ՅՈՀԱՆԻՍԱ ԵՒ ԱՅԺՄ ՀՐԱՄԱՆԱԻ ՏԷԼԻՐ  
 ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ Ն[ՈՒ]ԻՐԵՅԻ ՅԻՐԵԱՆՅ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՍ  
 Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ ԻՐ ԱՄԷՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՎԱՄՆ  
 ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈ ԻՄՈ, Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՍՊԱՍԱԻՈՐԱՅ ՍՈՐԻՆ,  
 ԱԶԱՏ ՅԱՄԷՆ ՀԱՐԿԷ. ԱՐԴ ՈՐ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՄ ԽԱՓԱՆՈՂ  
 ԼԻՆԻ, ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԷՍ ԵՒ ՅԻՐ  
 ՄԻԱԾՆԷՆ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՅՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ:

Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 33:

**ԲՈՒՐԹԵԼ ԵՎ ՊՈՒՂՏԱ ԻՇԽԱՆԱԶՈՒՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ 1315 Թ.  
ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՏՆԱՎԱՆՔՈՒՄ**

ԿԱՍԱԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՔ ԲՈՅՐԹԵԼՍ ԵՒ ՊՈՒՂՏԱՅՍ, ՈՐԴԻՔ ԷԼԻԿՈՒՄԻՆ, ՈՐԴՈ ՏԱՐՍԱԻՃԻՆ, ԵՂԲԱԻ ՍՄՊԱՏԱ, ԻՇԽԱՆՔ ՏԱՆՍ ՍԻՍԱԿԱ, ՏԵՍԵԱԼ ՁՁԵՌԱԳԻՐ ՆՈՑԻՆ ՁՈՐ ՇԻՆԵԼ ԿԱՍԵԼՈՎ ՁՎԱԴԻՆՁՈՒՅ ԱԻԵՐԵԱԼ ԵՒ ՁԽԱՂՏ[Ե]ԱԼ ՎԱՆՍ ՎԱՂԱԴՆՈՒ՝ ՁԵՌՆ ՀԱԻՐ ՄԽԻԹԱՐԱ՝ ՀԱՏԵԱԼ ԷԻՆ ՍԱՀՄԱՆ ԳԵՏՈՎՆ Ի ՇՐՁԱՆԱՔԱՐՆ ԵՒ Ի ՔԱԷԼԻՃՆ Ի ՅԱՅԾԱՂԱԳՆ ԵՒ ՏՎԵՍԼ ՅԻՒՐԵԱՆՅ ՀԱՅՐԵՆԵԱՅՆ ՁԵՐԵՄՍ ԳԵՂ ԵՒ ՁՇԱՄԲԻՆ ՀՈՂՆ ԻՒՐԵԱՆՅ ՍԱՀՄԱՆՈՎ Ե[Ի Ի] ՇՆՀԵՐ ՁԱՂՈՒՇԱՆՅ՝ ՀՈՂ ԵՒ ՁՁՈՒՐ ԵՒ ՁԱՅԳԻՆ ԱՄԷՆ ՍԱՀՄԱՆԱՄ ԵՒ ԽՆՊՐԵԱՂ ԿՐԺԱՆԱԳՐԵԼ յԻՂԱՏԱԿ ՁՈՐ ԱՆՓՈՅԹ ԱՐԱՐԵԱԼ ԵՀԱՍ ԱՌ՝ ՄԵՁ ԵՒ ՄԵՔ ԿԱՍԵԼՈՎ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԱՔ ՎԱՄՆ ՅԻՂԱՏԱԿԻ ճՈՅԻՆ Լ ՎԱՄՆ ԿՐԺԱՏԱՏՈՒՄԵԱՄ ՄԵՁ ԵՒ ՁԱԽԱԿԱՅ ՄԵՐ. ԵՒ ԻՇԽՈՂՔ ՏԱՆՍ ԿԱՐԳԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ ՄԻՆ :Խ: յքառասունք՝ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ: Արդ եթե որ ի մերոց կամ յառարԱՅ ՁՄԵՐ ՍԱՀՄԱՆԵԱԼ ՏՈՒՐՔՍ ԽԼԵԼ | ԿԱՄԻ ԵՒ ՁԳԻՐՍ ԽԱՓԱՆԵԼ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ. . պարտական լիցի առաջի ԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԱԻԹԵՐԵՍՈՎ. ԵԹԷ ՏԱՃԻԿ ԱԻԱԳ Փ[Ո]ԽԻ ԵՒ ՀԱՆԵԼ ԿԱՄԻ ՅԻՒՐ ՍԱՀՄԷՏԷՆ ԱՊԻՁԱՐ ԼԻՆԻ ԵՒ :Ռ:Ռ: ՆԱԼԱԹ առնու. | Ի ԹՎԱԿԱՆԻՆ:ՉԿԴ: |1315|:

Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 100-101:

## 5.

**ՀԱՅՐԱՊԵՏ ԱՔԵՂԱՅԻ 1270 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՆՔ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ԵՎ ԱՅԳԻՆԵՐ ՆՎԻՐԱՔԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ԹՎԱԿԱՆԻՆ :ՉԺԹ: (1270) Ի ՏԷՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԱԻՈՐ ԻՇԽԱՆԻՆ ՍՄՊԱՏԱ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ԻՒՐՈ ՏԱՐՍԱԻՃԻՆ.

ԵՍ ՆՎԱՍՏ ԱՐԵՂԱ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՈՒՆ, ՍՊԱՍԱԽՈՐ  
ԲԱՆԻ, ԿՐԿԻՆ ՇԻՆԵՅԻ ԶՎԱՆՔՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՅԻ  
ԶԵԿԵՂԵՅԻՔՍ, ՇԻՆԵՅԻ ԶԳԱԽԹՍ ԵՒ ԶԱՅԼ ԻՆՉ ՈՐ  
ԵՐԵՒ[ԵՆ] ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. ԵՒ ԶԳՈՋՈՅ ԱՅԳԻՆ ՅՈՍՏԻՆ ԵՒ  
ԶԹԵՂՈՒՏՆ ԻՄ ՄՃՈԿԱԶՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵ[Ա]ՄՔ ԳՆԵՅԻ  
ԵՒ ՏՎԻ ՍՈՒՐԻՔ ՍԻՈՆԱ ԵՒ ԵՂԲԱՐՅՍ ԿԱՍԱԽ ՀԱՍՏԱՏԵՅԱՔ  
ԶՍՈՒՐՔ ԳՐԻԳՈՐԻՆ ԶՇԱԲԱԹՆ՝ ԵՒ ԿԻՐԱԿԻՆ ԻՆՉ  
ՅԻՇԱՏԱԿ [Կ]ՐԿԻՆ . . . ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԽ[Ր]Հ[Ն]ԻՆ ՅԱՍԷՆ  
ՍՐԲՈՅ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՈՂՔՆ՝ ՏԱՆՋԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱԻ ԵՒ ԸՆԴ  
ԲԵԼԻԱՐԱ Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐՆ. ԱՍԷՆ:

Դիվան հայ վիմագրության, պրակ III, Երևան, 1967, էջ 124:

6.

**ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ 1301 Թ. ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔՈՒՄ  
ՓՈՐԱԳՐԱԾ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔԻ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ ՄԻ ՇԱՐՔ ԳՅՈՒՂԵՐ  
ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԿԱՍԱԽ ԿԱՐՈՂ ՀԶԱԽԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՏԷՐ  
ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵԱՅ ԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍ, ՈՐԴԻ ՄԵԾԻ՝ ԵՒ  
ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ԵՏՈՒ  
ՍՈՒՐԻՔ ՍԻՈՆԻՍ ՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ, ՍՈՒՐԻՔ ԿԱՐԱՊԵՏԻՍ  
Ի ՄԵՐ ՍՏԵՓԱԿԱՆ ՎԻՃԱԿԷՆ Ի ԳԵՂԱՐՔՈՒՆՈՅ՝ ԶԳԵՂՆ  
ՎԱՆԷՎԱՆ, ԶԿԻՏԱՆՈՅՆ, ԶՓԱՌԱԿՈՒՆԻՔ, ՄՇՊԼԱՅՇԷՆ,  
ՇԻԿԱՅԿԱՐՔՆ, ԽՈՒԼԻՆԱԿՆ, ՔԱԽԱՐԱՆՅ, ԶԴԱՐԲԱՆՍՆ,  
ԶԻ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՅԷ ԽԱԽՏԵԼ ԿԱՄԽԱՓԱՆԵԼ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ  
ՅԱԽՏԱՐԱՅ, ԶԻ ՄԻ ՊԱՏԻԺՍ ԿՐԵՍՅԷ: ԱՅԼ՝ Վ[Ա]Ս[Ն] ԱՅՍ  
ՍԱՀՄԱՆԵՅԱՔ, ՈՐ ՏԵՂՍ ՄԵՐ ՆՍՏԱԳԱՀ Է, ՈՒ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՅ  
ԻՇԽԱՆ ԻՄ ՓԱՌԱԽՈՐ ՀԱՐԱԶԱՏԻՆ՝ ԷԼԻԿՈՒՄԻՆ ՅԻՇԱՏԱԿՆ  
ԱՅԼ ԱՍՏ ԷՐ ԿԱՐԳԱԾ ԱՄՈՎ. [ՈՎ] ԶՄԵՐ ՍԱՀՄԱՆԱԾ ԿՏԱԿՍ  
ԱՅԼ ՅԵՂ ԱՌՆԷ, ՄԱՄՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԶՈՒԴԱԻ ԱՌՅԷ ՈՒ ԶԱՅԼ

ԽԱՉԱՀԱՆՈՒԱՅՆ| ԵՒ ՄԵՐ ՊԱՐՏԵ[Ա]ՅՆ ՏԵՐ Է ԱՌԱՋԻ  
ԱՍՏՈՒԾՈՅ. ԹՎԻՍ :ՉԾ: (1301):

